ԱՌԱՋՆՈՐԴ

ԼՈՒՍԱՀԱՒԻՂ ՄԱՆԱՊԱՐՏԻՆ
ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԿԵՆԱՑ։

ՅՕՐԻՆԵԼ,

Ի ՅՈՐԴՈՐ ՄԱՆԿԱՆՑ ՈՒՂՂԱՓԱՌ ՍԱՒՐՐ
ԵՒԵՂԵՑՒՈՑ ԱՌ Ի ՌԱՐԻՈՒՔ ԸՆԹԱՆԵԼ,
ԵՒ ՀԱՍԱՆԵԼ, ՅԵՐԱՆԱՒԷՏ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՆ
ՓԱՌԱՑ ԵՐԿՆԻՑ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ։



Ի ՍՄԻՐՆԱ։

1864—Ռ ՑԺԳ։

ԱՌԱՔՅԱՆՈՐԴ

ԼՈՒՍԱՐՀԱՒՈՐ ՍԱՆՑԱՊԱՐՏՈՆ
ՑԱՒՏԵՆԱԿԱՆ ԿԵՆԱՑ։

281.6
S

ՅՈՐՈՆԵԱԼ

Ի ՅՈՐԴՈՐ ՄԱՆԿԱՆՑ ՈՒՂՂԱՓԱՌ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԱՌ Ի ՐԱՐՈՒՈՅՔ ԸՆԹԱՆԱԼ, ԵՒ ՀԱՅԱՆԱԼ ՅԵՐԱՆԱՒԷՏ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ ՓԱՌԱՑ ԵՐԿՆԻՑ ԱՐՔԱՅՈՒԹԱՆ։

A 2691

ԻՍ·ԷՋՄԻԱԾԻՆ·

1864—Ռ ՅԺԳ։

ՀԱՅԿ ԳՐՍԵՐԻ ՅՈՒՇԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Որովհետև գրքոյկս այս ունի ստորագրեալ առաջի բարեխոհ մտաց ուշղղափառ և առաքինասէր հարազատ որդւոց եկեղեցւոյն Ռուսի, զպէսպէս լուսաշաւիղ ճանապարհս աստուածային ճշմարտութեան և իրաւանց, օրինաց և պատուիրանաց երանաւէտ կենաց, և ժառանգութեան յաւիտենական փառաց. ուստի նախաշաւիղ և բնաբան ունի զերանութիւն հոգենուագ մարգարէին Դաւթի. որ սաղմոսերգութեան իւրոյ փոյթ կալաւ նախերգանք առնել զայս առաջին բան սաղմոսարանին. «Երանեալ է այր՝ որ ոչ գնաց 'ի խորհուրդս ամբարշտաց, 'ի ճանապարհի մեղաւորաց նա ոչ եկաց. և յաթոռս ժանտից ոչ նստաւ». Սաղ. ա. 1։

Ահա այս է երանաւէտ յառաջաբանութիւն բովանդակ սաղմոսարանին, յաղագս որոյ՝ գրէ երանելի սուրբ հայրապետն մեր Ներսէս շնորհալի. «Դաւթի 'ի յերանութենէն սկսանի 'ի սաղմոսն, յորդորելով զլսողսն՝ զհետ գնալ երանական գործոց». 'ի Ռէն. Մոպռ. է. 2։ Ամէն

Մարգիս շնորհալի։ «Մեծն 'ի մարգարէս Դաւ-
ւիթ կամելով սկիզբն առնել սաղմոսերգուն՝
ասասի սկսանի։ Երանելոյ զայրն, որ 'ի խորհուրդս
ամբարշտաց ոչ գնաց, և 'ի ճանապարհի մեղա-
ւորաց ոչ եկաց։ և յաթոռս ժանտից ոչ նստաւ,
այլ յօրէնս տեառն խորհեցաւ 'ի տուէ և 'ի
գիշերի»։ 'ի Դէն։ Յաւ։ Ն։ 4 Գլ։ ա։ 12։
Ընդ՝ «ով որ 'ի բարեմիտ և յաստիճանաբար ան-
ճանց ընթերձցի զայս գրքոյկ, և մտասոհ լիցի
զբովանդակութիւն խնամոյ սորին անշուշտ 'ի
միտս լինի անդէն յիշել զայն բան արդարադատ
վճռաստութեան այ։ զոր 'ի ձեռն մարգա-
րէին Երեմեայ հրատարակեաց 'ի լուր ամենե-
սեան։ «Այս ասէր՝ քննեմ զսիրտս՝ և փորձեմ
զերիկամունս։ տալ իւրաքանչիւրոց ըստ ճանա-
պարհաց իւրոց։ և ըստ պտղոյ գործոց իւ-
րոց»։ Գլ։ 10։
Զայս օրինակ ազդեցութիւն տայ յերկնից,
քննողն գաղտնեաց՝ արարիչն բնաւից ամ առ ե-
րանելի արդարն Յոբ։ «Ով է դա՝ որ թագու-
ցանէ յինէն զխորհուրդս, ժողովեալ զբանս 'ի
սրտի։ և համարի յինէն թագուցանել»։ Գլ։ Լը։ 1։
Զգա սոյն այս գրքոյկ նախ՝ տայ ճանաչել ընթ-
երցասիրաց զամենաբարի և զանխախտ առաջ-
նորդն երանաւէտ կենաց և յաւիտենական

փառաց։ ընդ սմին և զառաջնորդն Ճշմարտուն։ որով արժանանան երգակից լինել հոգենուագ մարգարէին Դաւթի՝ որոյ մշտօր աղաղակէր։ «Տէր առաջնորդեա՛ ինձ յարդարութեանդ քումմ։ մի՛ թշնամեաց իմոց ուղիղ արա՛ առաջի իմ ըզճանապարհս քո։ . . . Ուսո՛ ինձ առնել զկամս քո։ զի դու ես աստ՛ իմ։ Հոգի՛ քո բարի՝ առաջնորդեսցէ՛ ինձ՝ ի յերկիր ուղիղ։» Սաղ. Ե. 7. Ծիբ. 12. 13։ Նոքիրարք՝ ցուցանէ զզանազան ուղղաշարիւղ և զերկնաչուն ճանապարհն ընդ որս անսայթաք և անվնաս ընթացողք՝ աներկբայ մերձաւոր գտանին այ՝ ի վայելել զերանաւէտ կեանս յաւիտենական փառաց երկնից արքայութեան։

Այսպէս ճշմարտասէր և բարեմիտ ընթերցողք՝ վերահասուս լեալ այսց ամենից՝ կարէն ըստ մարգարէին Յայտնի գոհաբան լինել զմարդասիրական խնամոցն այ՝ և ասել։ «Ճանապարհք բարեպաշտից ուղիղք են՝ դիւրաւոյք և պատրաստաւոյք են ճանապարհք ամբարշտից։ Օ՛ի ճանապարհք տեառն իրաւունք են. յուսացարք յանուն քո՝ և՝ ի յիշատակս ցանկութեանդ ոգւոց։ որոմ՝ ցանկացաւ անձն մեր։» Եսայ. Խ. 7։

Այսպէս՝ ի վերջ կանխաբանութեանս։ ուշադիր լեալ շնորհիւ սուրբ Հոգւոյն այ՝ հոգեշահ յորդորանաց արքային առաքելոյն Պօղոսի։

էթէ «Ա՛յսուհետև է՛զբարք՝ աղաչէմք զձեզ՝ և մխիթարիմք ի Տէ՛ր Յի՛սուսի՝ զի որպէս ընկալայք ի մէնջ թէ ո՞րպէս պարտիցէ ձեզ գնալ՝ և հաճոյ լինել այ՝ որպէս և գնայքդ իսկ։ Զի և առ քան զևս յաւելանայցէք ի նոյն»։ ա։ թէս։ դ։ ։ Աղաչէսցուք ամենամաքուր սրտիւ զանխախալ առաջնորդն կէնաց զփրկիչն մեր Յիսուս Քրիստոս՝ զի յայս ամ՚ահաճոյ ընթացս բարեշաւիղ ճանապարհին երկնից արքայութէ մշտընջենաւոր կացուցցէ՝ զբարեպաշտ և զմեծահաւատ զաղգ մեր՝ արժանընդունակ մախթանօք առաքելապատիւ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի լուսաւորչին՝ որոյ հրաշակառոյց սրբոյ Տաճարին յէտին սպասաւոր։

Ստեփանոս Լեհոնցի Աշխատող։

Ոչխարք իմ ձայնի իմում լսեն, և
ես ճանաչեմ զնոսա, և զկնի իմ
գան, և ես տամ նոցա զկեանս յաւ-
իտենականս. Յոհ. ժ. 27։

Կամեցող բարեաց տէր կամարար.
մի՛ թողուր զիս 'ի կամս անձին ի-
մոյ գնալ, այլ առաջնորդեա՛ ինձ
լինել միշտ ըստ կամաց քոց բա-
րեսիրաց. Ներ. չնորհ. 'ի հաւատով խոսող։

ԳԼՈՒԽ Ա.

Լսա՝ անբիծաբար հաւատով և հաստատուն յուսով խոստովանիմք զՅիսուս Քրիստոս փրկիչ մեր՝ Աշմարիտ և անսխալ առաջնորդ հոգւոց մերոց. զի որպէս փրկարար խորհրդով անճառ մարդեղութեամբ իւրոյ, տնօրինեաց և կատարեաց զփրկութիւն մեր, աղատելով զմեզ 'ի յաւիտենական դատապարտութենէ դժոխոց և 'ի գերութենէ սատանայի և 'ի ծառայութենէ սկզբնական մեղաց. նոյնպէս և մարդասիրական խնամոքն և բաշխապարգև բարերարութեամբն՝ առաջնորդէ յարքայութիւնն երկնից, և յորդեգրական ժառանգութիւն յաւիտենական փառաց և կենաց, և 'ի բարոյական Ճանապարհս վարուց և առաքինասէր ընթացից։

Ահա զայս կրկին մարդասիրական շնորհաց փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի աքանչելի բարերարութիւնս՝ մարգարէական հոգւով նկատեալ երջանիկն 'ի մարգարէս Դաւիթ, ժամելով հայցէր զնոյն կրկին շնորհաց փրկչին մերոյ հրաշափառապէս յայտնութիւնս, և զաքանչելի տնօրէնութիւնս. ըստ այմ. «Ո՞տէր փրկեա՛, ո՞տէր ա՛ռաջնորդեա՛, օրհնեա՛ զ. որ գալոցդ ես յանուն

տեառն։ և օրհնեցաք զքեզ 'ի տանէ տեառն։։
Սաղ։ ՃԺԵ։ 24։

Տես բարեմիտ ընթերցող, սրբազան առաքեալքն մինչ կամէին սաստել և յանդիմանել զմոլորաշաւիղ կամակորութիւնս և զչարաչար նեբքին կուրութիւնս իսրայէլեան վատշուէր ազգին։ 'ի յուշ ածէին նոցա զկիրկին մարդասիրական շնորհս փրկչին մերոյ Յիսուսի, զիրկութիւնն ասեմ 'ի դատապարտուէ մեղաց, և զառաջնորդութիւնն յանմահական կեանս։

Որպէս սրբազան առաքեալն Պետրոս անվեհեր քարոզեաց ժողովրդոցն իսրայէլի անդ յայնքմ վայրի, ուր տեսին զհամարձակ գնալն առն կաղ ծնելոյն 'ի մօրէ։ քանզի աստուածայինն առաքեալ՝ տեսեալ զնա առ դրան տաճարին 'ի խնդիր ողորմութեան, գթացաւ անդէն 'ի վերայ նորա, և հրամայեաց նմա ամենաշքեղ անուամբն Յիսուսի Նազովրեցւոյ յառնել և համարձակ գնալ։ նոյն ժամայն հաստատեցան բարձք ոտից նորա և սրունք։ սկսաւ վազվազել և գնալ։ մտանէր 'ի տաճարն, և 'ի մէջ բազմութեան ժողովրդոցն ճեմ առեալ գոհանայր լնաբերան զաստուծոյ։ և յընդ այս զարմանալն ժողովրդէն իսրայէլի՝ սկսաւ քարոզել նոցա երանելի առաքեալն, այսպէս։։ «Ո՛՛ՀԸ իսրայէլացիք՝ զի՞ զարմա-

ցեալէք 'ի վերայ այսորիկ՝ կամ ընդ մեզ՝ զի՞
էք պշուցեալ, իբրու թէ անձին զօրութեամբ
ինչ՝ կամ քաջութեամբ արարեալ ի՞նչ գնալոյ
դմա։ Աստուած Աբրահամոյ՝ և աստուած
Իսահակայ և աստուած Յակոբայ, աստուած
հարցն մերոց փառաւորեաց զորդի իւր զյի-
զոր դուք մատնեցիք՝ և ուրացայք առաջի Պի-
ղատոսի, 'ի դատել նորա արձակել։ Այլ դուք
զսուրբն և զարդարն ուրացայք, և խնդրեցիք
այր մի մահապարտ շնորհել ձեզ։ Այլ զառաջ-
նորդ կենացն սպանիք, զոր Աստուած յարոյց 'ի
մեռելոց, որում մեք իսկ վկայեմք։։ Գործ. Գ. 13։

Այնպէս և քարոզն աստուածային բանին
Պօղոս գրէ առ Եբրայեցիսն։։ Ա. ՀԼ զեղբը մի
խոնարհեալ քան զՀրեշտակս տեսանեմք զյի-
սուսն՝ վասն չարչարանաց մահուն, փառաւք և պատուով
պսակեալ, զի շնորհօքն աստուծոյ վասն ամենե-
ցուն զմահ ճաշակեսցէ։ Զի վայել էր նմա
մա, վասն որոյ ամենայն՝ և որով ամենայն, բա-
զում որդիս 'ի փառս ածել՝ և զառաջնորդ
փրկութեան նոցա չարչարանօք կատարել։։ Եբր.
Բ. 9. 10։ Այ՜ն համաձայն սուրբ գրոց երդէ. և գո-
հաբանական աղօթս մատուցանէ ուղղափառ ոչ
եկեղեցին մեր։։ Զ՝անապարհ և ճշմարտութիւն
և կեանք Քրիստոս, առաջնորդեա՛ հոգւոց մերոց

յերկրէ եւանեալ յերկինս։։ Հրամայեաց։։ Ազաչնորդ կենաց և պարգևիչ խաղաղութեան քո ամենայն մեր առաջնորդեա՛ մեզ գնալ 'ի ճանապարհս քո. արդարութեամբ և խաղաղութեամբ ժամանել 'ի նաւահանգիստն փրկութեան շնորհօք ողորմութեան քոյ։։ ի յամենայնի։

Յորդորակ։

Ապաքէն յորդորիմք յանժխտելի բանից հոգեշահ քարոզութեան սրբազան առաքելոյն Պողոսի։ ուղղել զաչս հոգւոց մերոց՝ առ անսխալ և ճշմարիտ առաջնորդն։ առ ամենակալ զօրագլուխն հաւատոյ՝ առ տէրն մեր Յիսուս։ որով լինի մեզ անսայթաք ընթանալ ընդ բարեվախճան ճանապարհս առաքինութեան և հասանել 'ի ժառանգութիւնս յաւիտենական կենաց և փառաց։ ըստ այնմ։։ Հայեսցո՛ւք 'ի զօրագլուխն հաւատոյ՝ և 'ի կատարիչն Յիսուս։ որ փոխանակ ուրախութեան՝ որ նմա առաջի կայր։ յանձն էառ զխաչն։ արհամարհեաց զամօթ։ նստաւ ընդ աջմէ աթոռոյն աստուծոյ։ Ո՛ղջ ածէ՛ք ըշմտաւ որ զայսպիսի համբերութիւն 'ի մեղաւորաց հակառակութենէ անտի կրեաց։ զի մի՝ աշխատ լինիցիք անձամբք ձերովք և լքանիցիք։։

Ի վերայ այսր հոգեշարժ և քաջալերական բանից սրբազան առաքելոյն Պօղոսի, կազմէ յորդորական բանս հոգեշունչ քարոզութեան՝ առաքելականորհ մեծ հայրապետն մեր լուսաւորիչն հոգւոց մերոց՝ սուրբն Գրիգոր. յասելն. «Ասա իւրաքանչիւր հասակաց առնմանն՝ և զառաքինութեան զհանդէսն ընդ նմին յարդարեսցեն 'ի կատարումն քրիստոսի գլխոյն մեր հասարակաց։ Այլ հաւատով և սիրով և երկիւղիւ գնալ 'ի ճանապարհս արդարութեան։ Որպէս և առաջնորդն մեր և կատարիչն առաքինութեան Յիսուս Քրիստոս՝ բազմադիմի շնորհօք իւրովք խնամէ զարարածս յերկրի. . . Ուստի հանդէսք լաւութեան կենացն նորոգին. և պսակել քաջութեամբ ըստ յաջողելոյն աստուծոյ, յաւետիս արդարոցն մնանեն։ Այդարքն են որ զարժանն և զիրաւն առնեն, և ժառանգաւոր լինին վերին կոչմանն որ 'ի կեանսն տանի. զի միոյ միոյ առաքինութեանց են և պսակքն փառաց և գովութիւնքն որ յօրինին 'ի տեառնէ»։ Յաճախ. ՃՍԳ. թէ. թը։

✠✠✠✠✠✠✠
✠✠✠✠✠
✠✠✠
✠

ԳԼՈՒԽ Բ.

Յերկրորդումն այս խորհրդածութեան՝ ուր նիմք յայտնել զմերս քրիստոնէական հաւատոյ ճշմարիտ խոստովանութիւն, և զուղղափառ դաւանութիւն առ էակիցն և փառակիցն հօր և որդւոյ՝ որ հոգին ասծ. որ է իսկապէս ամենաբարի առաջնորդ ճշմարտութեան. որ զանազան անաղօտ լուսով շնորհաց իւրոց և անսահման իմաստութեան և գիտութեան, փայլեցաւ և փառաւորեցաւ 'ի մարգարէսն, յառաքեալսն և յամենայն ընտրեալ սուրբսն իւր. աքանչելի ինն զօրութիւն և պաշտպանութեամբ՝ առաջնորդելով նոցա 'ի ճշմարտութիւնս բանից աստուածաշունչ սուրբ գրոց հին և նոր կտակարանաց։ Այլ և ուղղէ ամենակարող զօրութեամբ և լուսով ամենաբաւական շնորհաց իւրոց՝ զընթացս սիրելեսայն յառաքինական ճանապարհս, որ տանի 'ի կեանս յաւիտենական՝ յանվախճան փառաւորութի յերկնից արքայութեան։ Այսպէս ամենայն՝ հաստատի բանիւք աներկբայելի վկայութեանց, երջանիկ մարգարէից. սրբազան առաքելոց. և հարց սրբոց ընտրելոց. «Հոգի քո սուրբ և բարի՝ առաջնորդեսցէ ինձ յերկիր ուղիղ». Սաղմ. ՃԽԳ. 13։

«Այսպէս ասէ տէր ասծ քո՝ որ արար զքեզ,

և ստեղծ յորովայնի, և տակաւին օգնականութիւն գտցես։ մի՛ երկնչիր ծառայ իմ Յակովբ՝ և սիրեցեալդ իմ Իսրայէլ՝ զոր ընտրեցի։ Զի ես տայց զՁուր 'ի ծարաւու՝ որոյ գնան յանջրդեւոջ։ Եղիցի զոգի իմ 'ի վերայ զաւակի քո՝ և զօրհնութիւնս իմ 'ի վերայ որդւոց քոց։ Նոքա զուարճասցին իբրև զխոտ ջրարբի, և իբրև զուռ 'ի մէջ ջուրց գնացից։» Եսայ. Խ. 24—26։

«Զի հոգի իմ տայց ձեզ. և արարիցի, զի յաղագարութիւնս իմ գնայցէք, և զիրաւունս իմ պահիցէք. և առնիցէք զնոսա։» Եզեկ. ԼԶ. 27։

«Նա եղիցի յետ այսորիկ հեղից յոգւոյ իմմէ 'ի վերայ ամենայն մարմնոյ. և մարգարէասցին՝ ուստերք ձեր և դստերք ձեր. և ծերք ձեր, երազովք երազասցին, և երիտասարդք ձեր տեսիլս տեսցեն։» Յովել. Բ. 28։

«Զի ո՛չ եթէ դուք իցէք՝ որք խօսիցիք, այլ հոգին հօր ձերոյ՝ որ խօսիցի 'ի ձեզ։» Մատթ. Ժ. 20։ Մարկ. ԺԳ. 11։ Ղուկ. ԺԲ. 12։ Իսկ մխիթարիչն հոգին սուրբ՝ զոր առաքեսցէ Հայր յանուն իմ, նա ուսուսցէ ձեզ զամենայն, և յիշեցուսցէ զամենայն, զոր ասացի ձեզ։ Յորժամ եկեսցէ նա հոգին ճշմարտութեան, առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ՝ զի ո՛չ եթէ յանձնէ ինչ խօսիցի այլ զոր լսիցէ, խօսեսցի. և զգալոցն պատմեսցէ

ձեզ ,, ։ Յով. ԺԲ ։ 26 • ԺԷ • 13 ։

,, Զի նա էր (Մեփիանոս) լի հոգւով սրբով հայեցաւ յերկինս և եսեալ զփառս աստուծոյ, և զՅիսուս՝ զի կայր ընդ աջմէ աստուծոյ, և ասէ՝ ահա՛ տեսանեմ զերկինս բացեալ՝ և զորդի մարդոյ զի կայ ընդ աջմէ ՅՍ ,, . Գործ • Է • 55 ։ ,, Բայց եկեղեցին ընդ ամենայն Հրէաստան և 'ի սամարիա և 'ի գալիլիա ունէր խաղաղութիւն, շինեալ և երթեալ զՀետ երկիւղի տեառն, և մխիթարութեամբ հոգւոյն սրբոյ բազմանայր ,, . ԱՌՔ • Ը • 31 ։ ,, Ոչ ոք կարէ ասել՝ տէր զՅիսուս, եթէ ո՛չ հոգւովն սրբով ,, . Ա • ԿՈՐ • ԺԲ • 3 ։ ,, Ուստի 'ի հոգւոյն տուեալ է բան իմաստութեան, այլում բան գիտութեան ըստ նմին հոգւոյ • միւսումն հաւատք նովին հոգւով • այլում շնորհք բժշկութեանց նովին հոգւով, այլում յաջողութի՛ զօրութեաց • այլում մարգարէութի՛ • այլում ընտրութի՛ հոգւոց • այլում ազգ լեզուաց • այլում թարգմանութի՛ լեզուաց։ Այլ զայս ամենայն յաջողէ մի և նոյն հոգի • և բաժանէ իւրաքանչիւր որպէս և կամի ,, . ԱՌՔ • ԺԲ • 8 — 11 ։ ,, Արոց և յայտնեցաւ իսկ, զի ո՛չ թէ անձանց, այլ մեզ մատակարարք լինէին նոցին, որք այժմ պատմեցան, այնոքիւք, որ աւետարանեցինն ձեզ հոգւովն սրբով, որ առաքէրն յերկնից։ Բան-

զի ոչ եթէ ըստ կամաց մարդկան տուաւ մարգարէութիւն երբէք, այլ 'ի Հոգւոյն սրբոյ կը-րեալք՝ խօսեցան մարդիկ յաստուծոյ։։ ա. Պետ. ա. 12։ Բ. Պետ. ա. 21։ ։։ Հաւատամք և 'ի ՅԲ Հոգին յանեղն և 'ի կատարեալն։ Որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս։ Որ էջն 'ի յորդանան, քարոզեաց զառաքեալն, և բնակեցաւ 'ի սուրբսն։։ 'ի Հանդ. Դիր։

։։Զգեալ հոգելից և հոգեմուխ ՅԾատեսացն զաստուածատուր աւետիսն, և գրով հաստատեալ. և զմի աւանդութիւն, չորս աւետարան սահմանել. ոչ օտարագոյն 'ի միմեանց արուեստախօսեալս, այլ ամենագէտ հոգւոյն ՅՅ զմիաւոր ՅՀմարտուն հրամանացն քրիստոսի պատմեալ։։ Լ.-ա, ՅԱՓՄ։

։։Որ էջ հոգին տեառն և առաջնորդեաց երկոտասան ցեղիցն իսրայէլի 'ի յանապատին, այսօր երկոտասան առաքելոցն առաջնորդէ 'ի յաւետարանն։։ Շար։

Զպաքէն բաւական լուսաւորուն ներքին աչացմերոց և խորհրդոց համարեալ զայսոսիկ վկայութիւս, •խնդրուածս մաղթանաց 'ի վեր ուղղեսցուք առ ՅՀմարիտ ՅԲ հոգին ՅԾ, աղօթակից լինելով ՅԲ երանաշնորհ սուրբ վարդապետին մերոյ Գրիգորի 'Լարեկացւոյն։ այսպէս։։ Զպաշտեմք զանփո-

փոխելի տէրութի ամենաշօր հոգւոյդ հշօրի։ առաջ քեա՛ զցօշ քաղցրութեան քոյ։ և բարեգործեա՛ ի յանձին և յիշխանական ազգման զգայութե՛ զամենալից շնորհս բազմապարգև քո ողորմութե։ Եւ հերկեա՛ զբանական անդաստան մարմնեղէն կարծրայեալ սրտիս։ յընդունակութի արդասեաց հոգևոր սերմանդ։ Հրամանիմաստ էութեդ խոստովանիմք զամենայն պարգևս ի մեզ ծաղկեալ և աճեցեալ։ որ ձեռնադրես առաքեալս։ ցուցանես մարգարէս։ ուսուցանես վարդապետս։ բարբառեցուցանես համբոյս։ և բանաս բազմակեալ ականջս խլից։ ոչ աղգակիցն քո էակիցքն հօր անդրանիկն որդի քոյին գործակցութե՛ ներգործելով զայս ամենայն։ քարոզեաց զքեզ ՅԾ հաւասարակից իսկութե՛դ հօր։։ Նար։ լէ։

Յերեքաշ։

Հանապազօր խրատիմք ի սուրբ գրոց։ զի մի՛ լեցի մեզ երբէք ընդ հակառակն ճշմարտութեան՝ բարութեան և սրբութեան շնորհաց սուրբ հոգւոյն աստուծոյ վարիլ չարաչար գործովք մոլութեան և հոգեկորոյս մոլորութեան։ ի խափանել յարմարել և ի շնջուցանել զպէտսպէս ներգործութիւնս շնորհաց նորա։ որով բացամերժիմք ի ճշմարտութենէ՝ ի բարութենէ և ի սրբութենէ ամենաբարի

սուրբ հոգւոյն ՝ի։ վասն զի շինողացանեմք ՝ի մեզ
զհաւատոյ ճշմարտութիւն, հետևելով սատանա-
յական մոլորեցուցիչ խաբէութեանց։ ատեմք
զանծահաճոյ զառաքինական գործս բարութիւն,
յարգելով զչարախոհ կամապաշտութիւս և զանձ-
նասիրութիւնս, և զմոլեկան կրից չարութիւնս։
որովք՝ զսրբութիւն սրտից և հոգւոց մերոց կո-
րուսանեմք իսպառ։ և հետևիմք պիղծ՝ և մեղ-
ապլից գարշութեան հոգետանջ չարագործուն։
յոյր սակս սրբազան առաքեալն Պօղոս յորդո-
րէ զհաւատացեալս, սրտի մտօք փութացան լի-
նել՝ առ ՝ի անշէջ և մշտավառ պահել զսքանչէ-
լի լոյսն շնորհայ սուրբ հոգւոյն ասուածոյ։ ՝ի
թղթին Թեսաղոնիկեցւոյ։ «Զ՝հոգին մի՛ շի-
ջուցանէք։ Զ՝մարգարէութիս մի՛ արհամարհէք։
Զ՝ամ ինչ փորձեցէք, զբարին ընկալարուք։
Յամենայն իրաց չարաց ՝ի բաց կացէք»։ Ա։ Թէս։
է։ 19—22։

Այդ՝ զի՞նչ շինողացանէին։ ասէ Ոսկեբերան,
այսէ անմաքուր վարուք կորուսանել զընկալեալ
շնորհս։ ընդդիմանալ շարժմանց հոգւոյն սրբոյ,
անգործ պահելով զներգործուիս նորին։ զորօրի
նակ հուր և ճրագ կամ հակառակօք շինանին,
ջրով և հողմով։ և կամ պակասմամբ արծարծիչ
նիւթոցն, փայտի կամ ձիթոյ։ այսպէս հաճոյ-

արար պարգևք հոգւոյն պակասին, խափանին հա-
կառակ ներգործութիւն, և կամ զանցառութիւն
զբարեօք նորին. և զգուշացուցանէ չարհամար-
հել զհոգեշունչ բանս մարգարէական գրոց
հին և նոր կտակարանաց. այլ իբրև զհին
ճանաչել քրիստոնէական կրօնի մերոյ. վասն որոյ
ամենայն ակնածութեամբ և մտաւորութեամբ
մեծարել և պատուել պարտիմք իբրև զպատ-
գամ աստուծոյ. «Բանզի ոչ եթէ ըստ կա-
մաց մարդկան տուաւ մարգարէութիւն երբէք.
այլ 'ի հոգւոյն սրբոյ կրեալք խօսեցան մար-
դիկ յաստուծոյ». Բ. Պետ. Ա. 21։

Այս ևս ընտրուիս արասջիք բարոյական մտօք
'ի վերայ ուսմանց և գիտութեց ձերոց, և զբարին
գանձեցէք, ընկալարուք 'ի միտս և 'ի սիրտս
ձեր, վասն որոյ ասաց. «Զամ ինչ փորձեցէք,
զբարին ընկալարուք»։ Յայս միտս յորդորականս
գրեաց երանելի առաքեալն առ Հռովմայեցիսն։

«Ոչ կերպարանիք կերպարանօք աշխարհիս
այսորիկ, այլ նորոգեցարուք 'ի նորոգութի մտաց
ձերոց, առ 'ի քննել ձեզ զլաւն. և եթէ զի՞նչ
են կամք աստուծոյ, բարին և հաճոյն և կատա-
րեալն». Հռով. ԺԲ. 2։ Սուրբ հոգին աստուած է
առաջնորդ բարի, ապա պարտաւորիմք յամենայն
չար գործոց և 'ի խորհրդոց և կամաց 'ի բաց

կալ և հեռանալ 'ի պատճառաց անտի չարուն.
որով արժանացուք օթևան լինել շնորհաց և
բարութեան սուրբ հոգւոյն ։ այ. վասն որոյ յորդորեաց առաքեալն, յասելն. «Յիմենայն իրաց չարաց 'ի բաց կացէք»։ Այսպես. զայս յորդորակ ։ ճշգրտեցիկ լսեմք 'ի մարգարէից. յառաքելոց, և 'ի հարց սրբոց՝. «Այս ։ ճշմարտութիւն է խմաստուն. և ամենեքին 'ի չարեաց է հանձար». Յոբ. իբ. 28։

«Խոտորեա 'ի չարէ՝ և արա զբարի. խնդրեա զխաղաղութիւն, և երթ զտեսա նր», Սաղմ. լգ. 14։ ԼԸ25։

«Ընկեցէք զչարիս ձեր յանձանց ձերոց. առացի աչաց իմոց. դադարեցէք 'ի չարեաց ձերոց։ Ուսարուք զբարիս գործել», Եսայ. ա. 16։

«Զի որ կամիցի զկեանս սիրել՝ և տեսանել զաւուրս բարութեան, լռեցուսցէ զլեզու իւր 'ի չարութենէ, և զշրթունս իւր 'ի խօսելոյ զնենգութի։ Խոտորեսցի 'ի չարէ և արասցէ զբարի», Ա. Պետ. գ. 10. 11։ «Պաշտօն աստուծոյ 'ի չարէ հեռանալն է և նա սկիզբն բարի գործոց, որպէս ասէ խոտորեա 'ի չարէ և արա զբարի». Պ. Ֆոնտ. Քարդ. 'ի Դէն. Յոբ. իբ։

Ի վախճան յորդորական բանից ուննկդիր լիցուք արտաշարժ քարոզութեանս առաքելաշաւիղ սքանչելի Դաւիթի բազմամաստակ լուսաւորչին հոգւոյ

մերոց։ «Եւ որք հրաժարին 'ի պատիր խաբէութեանէ մարմնաւոր վարուց։ լուսցեալ զմիտս շնորհօք 'ի խղճէ չարեաց։ ստոյգ զղջմամբ՝ ապաշխարութեան վարուք։ ատել զչարն և սիրել զբարին։ խափան լինել մոլար խաբէութեան ուսմանն։ և ընծայաբեր լինել ամենասուրբ Երրորդութեանն։ Ընդունուն զանուն առաքելական աւետեացն նոր կտակարանաց։ և ժառանգորդ լինին արքայութեան երկնից»։ Յոհան։ Ճառ։ է։

ԳԼԽԻ ԳԼ.

Ապաքէն և զայս պարտ է՝ ճանաչել և գիտել։ զի ուղղափառ հաւատք մեր է ուղեցոյց ճշմարտութեան, և առաջնորդ ընթացից մերոց ճշդապաշտութեան։ որով արժանանամք և մերձաւոր գտանիմք ճշմարտին շնորհաց և փառաց, ըստ այնմ։ «Յորհեցարուք զտեառնէ բարուք, և միամտութեամբ սրտի խնդրեցէք զնա։ Զի գտանի այնոցիկ՝ որք ոչ փորձեն զնա, և երևի, որոց ոչ թերահաւատին 'ի նմանէ»։ Իմաստ։ ա։ 1։2։

«Հաւատովք գնամք՝ և ոչ կարծեօք։ Այլ համարձակիմք՝ և առաւել ևս հաճեալ եմք երանել 'ի մարմնոյ ատի՝ և մտանել առ աս-

տուած։ Զ ասնորոյ և առատանամք. զի եթէ յամիցեմք՝ և եթէ եղանիցեմք՝ հաճոյ և եթ է ցեմք նմա։ Բ. Կորն. Ե. 7 — 9։ Զ ան այսորիկ՝ հաւատոյ ճշմարտութիւն՝ եթ վարդապետք եկեղեցւոյ գրեն և նմանեցուցանեն լուսաւոր սեան ամպոյն, որ յելից խորայելացւոց յԱգիպտոսէ՝ առաջնորդէր նոցա մինչև 'ի մուտս երկրին աւետեաց։ Ելից. Գ. 21. 22։ «Զաջնորդեաց ամպոնն 'ի տուէ, և զամենայն գիշերն 'ի լոյս հրոյ»։ Սաղմ. Հե. 16։

Զ-ետրագոյն քան զայս օրինակ ունիմք քրիստոնէական սուրբ հաւատոյ մերոյ՝ 'ի սուրբ աւետարանի անդ զաստղն զայն հրաշալի. որ երևեալ յարևելս՝ առաջնորդեաց երկանիկ մոգւոցն մինչ 'ի Բեթղեհեմ յերկրպագութիւն 'ի կուսէ ծնեցեալ աստուածորդւոյն Յիսուսի Քրիստոսի փրկչին մերոյ, զորոյ զտեղի ծննդեան խնդրէին յերուսաղէմի անդ. ասելով. «Ո՞ւր է, որ ծնաւ արքայն հրէից. զի տեսաք զաստղն նոր յարևելս. և եկաք երկրպագանել նմա»։ Զ-ս արքեան աւետարանիչն Մատթէոս գրէ. «Զ-ս ահա աստղն, զոր տեսին յարևելս՝ առաջնորդեաց նոցա՝ մինչև եկեալ եկաց 'ի վերայ՝ ուր էր մանուկն»։ Մատ. Բ. 2, 9։

Զ-այս ամենայն նկատեալ եթ հայրապետն մեր

Պորիգոր լուսաւորիչ գրէ. «Ո՛՛չմարտուի հաւատոց՝ լոյս է աչաց մտաց շարժմանց՝ խորհրդոցն յիշատակաց, զգեցեալ զլոյսն գիտուէ և իմաստութեան շնորհաց սքանչելոյն, որ զառաջնորդական զմիտսն լուսաւորէ. և գրովք սրբովք յանդիման կացուցանէ զանեւրևոյթսն. իբրև՝ ի տեսիլ աչաց արեգականն լոյս»։ Յաճախ. ճառ. 4։

Յորդորակ.

Եւ արդ՝ ուշադիր լիցուք յորդորական բանից երանելի առաքելոյն Պօղոսի. որ թէպէտ հաստատօսն՝ բայց կարի զօրաւոր՝ ի հաստատութիւն հաւատոյ պահպանուէ խրատաբանէ, զի մի՝ լեցի մեզ պաշարիլ երկմտութիւն և թերահաւատութիւն. «Հակեցէ՛ք՝ հաստատուն կացէ՛ք՝ ի հաւատս. ժը բացարո՛ւք՝ զօրացարուք»։ ա. Կորն. ԺԶ. 13։ Զանազի երկմիտն և անհաստատն՝ ի հաւատս բացամերժի յոյ, և յաստուածային ամենացանկալի բաբեաց և վաստաց. ուստի գրէ սրբազան առաքելն Յակոբոս. «Թող զի՝ ձէնջ լցէ նուազել յիմաստութիւն, խնդրեսցէ յոյ, որ տայ ամենայնի առատապէս՝ և ոչ նախատէ. և տացի նմա։ Բայց խնդրեսցէ հաւատովք՝ և մի՝ երկմտեսցէ, զի որ երկմիտն է՝ նման է հողմակոծեալ և տատանեալ

աչեաց ծովու։ Մի՛ ակն կայցի մարդն այն առ-
նուլ ինչ յայ։ Զի այր երկմիտ՝ առանց հաս-
տատուն է յամենայնի ճանապարհս իւր։։ Յակ. ա. ց. ։

Յիշեսցուք մտաւուք և զերանելի հայրա-
պետին Երուսաղէմայ սէյն Կիւրղի զվարդապետ-
տուին վասն հաստատուն հաւատոյ ։։ Զայս
հաւատս եթէ պահեսցուք մեք, անհնարին
ամենայն առաքինութիւնքդ գտանիցիմք. և աղգի-
աղգի առաքինութիւնքդ զարդարիմք։ Ա՛յնչափ հզօր և
կարևոր են հաւատք, զի և զմարդիկ 'ի վերայ
ջուրց ծովու թեթևացեալս գնացուցանեն։
Արդ էր քեզ և մեզ նման Պետրոս, յա-
րենէ և 'ի մարմնոյ կարգեալ, և նովին կերա-
կրովք կենդանացեալ։ Ա՛յլ իբրև ասաց տէր
Յիսուս եկ առիս. հաւատոյ վաղվաղակի, և
սկսաւ 'ի վերայ ջուրցն գնալ։ Որան զամենայն
հաստատութիւնս յատակաց զհաւատսն 'ի վե-
րայ ջուրցն ունէր տարածեալ, և զծանրութիւն
մարմնոյն 'ի թեթևութիւնս հաւատոցն բարձեալ
թռուցեալ տանէր։ Ա՛յլ մինչ դեռ զհաւատսն
յանձին ունէր, 'ի վերայ ջուրցն հաստատուք
զգնացս փութիսէր, և իբրև յերկուսացաւն, յայն-
ժամ ընկղմիլ սկսաւ, զի ընդ թուլանալն 'ի
հաւատոց, զիջանիլ սկսաւ և ծանրութի մարմնոյն։
Ա՛յլ իբրև եռեաս գնորա վիշան, որ զվիշաս ոգ-

ՀԱՅԿ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱՐԱՆ
ՕՐԻ ՊՈՍԵՆՍԻԼ
ԳՐԱԴԱՐԱՆ

ուոյն դարմանէր Յիսուս, ասէ՝ Ամէն ասակաւա-
հաւատ, զի երկմտեցէք, զի զանգիտեցէք։ Եւ
դարձեալ անդրէն զօրացեալ յայնմանէ՝ որ զա-
ջոյ ձեռանէ նորա բուռն հարեալ ուներ, հա-
ւատաց դարձեալ. հաւատաց և տեն ձեռնաթ-
կուութեամբն զնոյն գնացս ի վերայ ջուրցն
ակսանէր գնալ։ Զայս բանս կողմնակի ինն յիշ-
ելոց աւետարան ի, զի ասաց, թէ. Որբև է-
լին նոքա ի նաւ անդր. ոչ ասաց, թէ լուրե-
ցաւ Պետրոս, և ելն էլ ի նաւ անդր. այլ տայ
իմանալ, թէ որչափ ինչ վայրս գնաց էկն առ
Յիսուս, նոյնչափ վայրս գնաց միւսանգամ չո-
քաւ էլ ի նաւ անդր. Մտթ. գ. 28. 29։

Ուրդ՝ այնչափ զօրութիւն է հաւատոց, մինչ
զի ոչ միայն որ հաւատայ, փրկի, այլ և այլք
յայլոց ի հաւատալ անդ ապրին։ Ո՛չ գոյին հա-
ւատք, որ ի կափառնայուամ անդամալոյծն հի-
ւանդացեալ զնէր. զի հիւանդացեալ էին ոգի-
քքն ընդ հիւանդացելոյն, այլ որ բարձեալն բե-
րէին, և ի ցուռոցն կախեցին, ի նոսա էին հա-
ւատք։ Եւ մի՛ այսպէս ինչ համարիցիս, թէ ես
զուր ինչ ամբաստանիցեմ զնմանէ. նոյն ինքն
աւետարանիչն ասաց. ասէ, Տայ ցաւ Յիսուս,
ոչ էթէ ի հաւատս անդր նորա, այլ ի հաւա-
տաս նոցա. ասէ ցանդամալոյծն, յոտն կաց։

Ընդ բարձողքն հաւատացին, և որ անկէնն դնէր
անդամալոյծ՝ վայելէր ի բժշկութենէ. Մարկ. Է. 4. 8։
Ընդ կամին գիտել ճշմարտիւ, թէ և այլոց հա-
ւատովք այլք բժշկին։ Սեռաւ Ղազար. անց
օր մի, երկուք, և երեք. քակտեցան ջիլքն, և
նեխ անկաւ ի մարմնին։ Ընդ զնարդ մարթ էր
հաւատալ մեռեալն չորեքօրեայ, և վասն
իւրոյ անձինն զերկիւղն աղաչէլ, այլ որ ինչ պա-
կասութիւն էր ի մեռեալ անդր, այն ի հարա-
զատաց անտի լցեալ կատարէր։ Զոյն անկաւ ա-
սէ, քոյրն առաջի տեսանն. և ասէ ընդ հարցա-
նելն. Հրա եղիք զնա. նա ետ պատասխանի և
ասէ, տէր, ասէ արդարև նեխեալ է, զի չորեքօրեայ
իսկ էր. ասէ ցնա տէր. եթէ հաւատացես
տեսցես զփառսն աստուծոյ. Յովհ. Ժա. 39։

Իբրու զի թէ ասէր, թէ դու զպակասութիւն մե-
ռելոյն զհաւատոցն լցիր։ Զու այնչափ հզօր եղեն
հաւատք հարուցանացն, զի զչորեքօրեայ մեռեալն
ի դրանց դժոխոց յարուցեալ կոչեցին, իսկ
արդ՝ այլք ի վերայ այլոց հաւատան, և ի մե-
ռելոց կարող լինին յարուցանել. դու եթէ վե-
քր հաւատոցդ, ոչ կարացես ճշմարտիւ օգտել։
Այլ թէպէտ և թերահաւատ իցես, կամ սա-
կաւահաւատ, մարդասէրն Աստուծ, ներել զինքանել
դիտէ ընդ ապաշխարողին։ Բայց միայն առա

դու պարզամտութիւն. հաւատամ՝, օգնեա՛ թիւրահաւատութեան իմում։ Աչք թիւրեցու և հաւատացեալ զանձն համարիցիս, և ոչ կատարեալ հաւատս ունիցիս, ապաքէն պիտոյէ քեզ ըստ առաքելոյն բանի ասել՝ եթէ՝ տէր յաւելլ՝ի մեզ հաւատս։ Աչքնուհետև իցէ ինչ. որ յանձին քում ունիցիս, և իցէ ինչ, որ՝ի նմանէ առնուցուս։։ Կոչ. ընթ. գլ. Ի։

Գ. ՀԱՐԻՒՍ Գ.

Ընդ ուղղափառ հաւատոյն ունիմք զանեբկբայ և զհաստատ յոյս մեր առ ՀԱՅՐ ուղղելլ՝, որ առաջնորդ է խորհրդոց և կամաց մերոց առ՝ի բարւոք և անխոտոր ընթանալ յառաքինական շաւիղս՝ և մերձենալ աստուածային ամենակարող զօրութեան և ամենաբաւական օգնականութեան և խնամոց։ «Լեր յուսացեալ՝ի տէր յայմ սրտէ քումմէ. և յիմաստութեան քո մի՝ հպարտանար։ Զամենայն հանապարհս ծանի՛ր զնա. զի ուղիղ արասցէ զշաւիղս քոյ, և ոտն քո մի՝ գայթակղեսցի։։ Առակ. 4.5.6։ «Հանապարհք բարեպաշտից ուղիղք են, դիւրելք և պատրաստելք են հանապարհք ՀԱՅՐ պաշտից, զի հանապարհք տեառն իրաւունք

էն՝ յուսացաք յանուն քո։ և 'ի յիշատակս ցան-
կութիւն ոգւոց։ որում ցանկացաւ անձն մեր։։
Եսայ։ Իշ։ 7։8։

։։Աղբեցուցանեալով ապրեցուցիչ զքեզ։ և 'ի
սուբ մի՛ անկցիս։ և եղիցի քեզ անձն քո 'ի
գիւաս։ զի յուսացար ինձ։ սաղմոս։ ԺԵ։ Ի։18։
։։Յքեզ յուսացան հարքն մեր։ յուսացին 'ի քեզ՝
և փրկեցեր զնոսա։ Յքեզ աղաղակեցին։ և
կեցին։ 'ի քեզ յուսացան՝ և ոչ ամաչեցին։։.
սաղմ։ խ։4։5։

Տեսցուք աստանօր զաբանչելի Դանդիս ուծա-
յին խնամոց և պաշտպանութեան։ զոր յայտնի
երևեցոյց յանձինս երկիւղածաց իւրոց և յու-
սացողաց յամենակալ և յամենազօր անուն իւր։
յորոց մի էր։ արդարն Յոսկիփ։ զորմէ գրեալ է։
։։Նա զարդարն վաճառեալ՝ ոչ եթող 'ի ձե-
ռանէ։այլ 'ի մեջայ փրկեց զնա։ընդ նմա էջ 'ի
գուբն։ Յոչ 'ի կապանս ոչ եթող զնա 'ի ձեռանէ։
մինչև երբեր նմա զգաւազան թագաւորութե։ և
զիշխանութիւն 'ի վերայ բռնաւորաց նորա։ սու-
ետցոյց զբամբասողս նորա և եհատ նմա զիշառս յա-
իսեռնականս։։ Խնոպ։ Գ։13։14։

Տես և։ զի ոչ եթող տէր ուծ զծառայն իւր՝
զմարգարէն Դանիէլ 'ի գուբն առիւծուց ան-
խնամ։ այլ սքանչելի զօրութիւն իւրով փրկեաց զնա

անվնաս 'ի ժանեաց առիւծուց։ Մինչև թագաւորին հիանալ ընդ այն և գոչել 'ի ձայն բարձր, և ասել։ «Մեծ ես տէր աստ Դանիէլի։ և չի՛ք այլ ոք բաց 'ի քէն»։ Դան։ գգ։ 40։

Այնպէս և երկիւղածն յայ պարկեշտուհին Շուշան խնամօքն այ ապրեցաւ 'ի դատապարտութենէ մահու անտի։ զոր դաւաճանեցին նմա զրպարտութեամբ երկու չարագոյն ծերքն։ իսկ նա հաստատուն ունէր զյոյս իւր առ վերնախնամ տեսչութիւն։ «Այլ նա լալով հայեցաւ յերկինս։ քանզի էր սիրտ նր յուսացեալ 'ի տէր»։ Ահա այս յոյս առաջնորդեաց նմա 'ի ճանապարհ փրկութեան և ճշմարտութեան։ վասն որոյ յայտնեաց աստուած 'ի ձեռն ծառային իւրոյ երջանիկ մարգարէին Դանիէլի զզրպարտուի երկուց չարախտավատ ծերոց։ էլ ճշմարտուին յայտ յանդիման ամենեցուն։ և դատապարտեաց զդաւաճանութի՛ չարահնար երկուց ընկերացն սատանայի։ զոր տեսեալ ժողովրդոցն։ գոհացան զայ՝ և փառս ետուն հզօր զօրուն նր։ զի զառինքն յուսացեալսն ոչ թողու 'ի ձեռանէ։ «Զաղաղակեաց ամենայն ժողովուրդն 'ի ձայն մեծ։ և օրհնեցին զաստուած՝ որ ապրեցուցանէ զյուսացեալս իւր»։ Դան։ ա։ 85։

Մի՛ լեցի մեզ աստանօր զանցառութի՛ տալ

զաբանչելն և զմեծահրաշ շնորհս և զզօրու-
թիւնս ամենակարողին այ. որ յայտնի ներ-
գործեցաւ 'ի ծառայսն իւր՝ յերիս մանկունսն՝
'ի Սեդրաք, 'ի Միսաք և Յ Աբեդնագով. որք ա-
մենայն սրտիւք յուսացեալ յամենաբաւականն-
նամս աստուածային ամենակալ զօրութեանս՝ հա-
մարձակ և աներկիւղ հերքեցին զկուապարիշտ
մոլորութիւս և զահեղասաստ զաստուածընդդէմ
հրաման արքային Նաբուգոդոնոսորայ անօրինի.
և անվեհեր քարոզեցին զաշխարհաւէր աստուած-
պաշտութեան և զամենակարողութիւն արար-
չին ամենայնի. զբովանդակ հնարագործութիւն
դառնագին տանջանացն, և զերկիւղ հնոցի հը-
րոյն բորբոքելոյ 'ի բաց եդին, որով խրոխտացեալ
սպառնայր վաղվաղակի 'ի հաւանութի և 'ի կա-
տարումն ածել զնա մեծ հրամանի իւրոյ. «Ապա
թէ ոչ երկիրպագանիցէք. 'ի նմին ժամու անկ-
ցիք 'ի հնոց հրոյն բորբոքելոյ. և ով է աստ որ
փրկեսցէ զձեզ 'ի ձեռաց իմոց»։ Յայնժամ
արիացեալքն և զօրացեալքն հաստատուն յու-
սով միաբարբառ ասային. «Ո՛չ ինչ է պիտոյվ
բանիդ այդորիկ տալ քեզ պատասխանի։ Օ՛ի է
մեր աստուած յերկինս՝ զոր մեքն պաշտեմք՝ կա-
րող է փրկել զմեզ 'ի հնոցէ հրոյդ բորբոքելոյ.
և 'ի ձեռաց քոց արքայ ապրեցուցանել զմեզ»։

Արդարև ըստ սաստիկ սրտմտութեան՝ «Աբուգդոնոսորայ արքային արկան երեքեան երանելիք՝ ի հնոցն։ և որքան սաստկանայր բորբոքն հրոյն գնային նոքա ի մէջ նորա ուրախութեամբ սրտի։ և գոհաբանական երգովք օրհնէին և փառաւորէին զամենակարողն Ա՛ծ։ զկնամառատ ողորմութիւն նորա և զսքանչելահրաշ բարերարութիւնս ներգործութեանն։ Այլ յայնժամ և հրեշտակ տեառն ի հնոց անդր ընկերացաւ նոցա։ մխիթարէր զնոսա՝ և միաբան ընդ նա գովէր զԱ՛ծ և փառաւոր առնէր։ Զայս հրաշալի ներգործութիւս աստուածային զօրութեան տեսեալ արքային՝ սքանչացեալ և զահի հարեալ երկիւղիւ մեծաւ։ երկիրպագանէր առաջի նց տեառն՝ այ և ասէր։ «Օրհնեալ է Ա՛ծ Սեդրակայ՝ Միսակայ և Աբեդնագովի։ որ առաքեաց զհրեշտակ իւր՝ և փրկեաց զծառայս իւր։ զի յուսացան ի նա՝ և զբան թագաւորին անարգեցին։ և մատնեցին զմարմինս իւրեանց ի հուր։ զի մի պաշտեսցեն և մի՛ երկիրպագցեն ամենայն աստուածոց։ բայց միայն այ իւրենց։» Դան։ գ։ 15։ 95։

Զայս հոգեշնչեալ մարգարէն Դաւիթ ճշմարիտ և կատարեալ երանութիւն տայ այնմ։ որ ոչ զյոյս իւր եդեալ է ի թագաւոր ոք և յիշխանաւոր անձինս։ կամ ի հարստութիւս և ի զօրութիւնս իւր։ այլ միայն յուսացեալ է յամ-

նակարողն ՝ յարարիչն երկնի և երկրի։ որ կա-
ռոյն է առաջնորդել ՝ի բարին և փրկել ՝ի չա-
քէն և պաշտպանել յամէ։ «Երանի ազգի՝
որում տէր ՝ Յակովբայ օգնական է նմա. և
յոյս նորա ՝ի տէր աստուած է»։ Սաղ. ՃԽԵ. 4։
Կամիս սիրելի՝ ընթերցող, զամենայանկարի զօ-
րութիւն ՝Աստուածութեան յուսոյն առնուլ ՝ի
միտ և գանձել ՝ի հոգի և ՝ի սիրտ. լուր սրբ-
բազան առաքելոյն Պօղոսի, որ ասէ. «Ի՞նչ և
պարծիմք ևս ՝ի նեղութիւնս մեր. քանզի գիտեմք,
եթէ նեղութիւնք զհամբերութիւն գործեն։
Համբերութիւն զհանդէս։ հանդէս զյոյս։ Յոյս՝
ոչ երբեք ամաչեցուցանէ։ Յուսով ապրեցաք,
այլ յոյս տեսանելի՝ չէ յոյս. զի զոր տեսանէ
ոք՝ զի՞ ևս յուսայ։ Այլ եթէ զոր ոչն տեսա-
նեմք, յուսամք. համբերութեամբ։ Ի՞ն-
ծատանց՝ որք են յայսմ աշխարհի՝ պատուէր
տաջի՛ր. մի՛ հպարտանալ՝ և մի՛ յուսալ ՝ի մե-
ծութիւն անոտի. այլ յԱստ. որ տայ մեզ զամ-
ենայն ՝ի վայելել, զբարիս գործել՝ մե-
ծանալ գործովք բարուք, առատս սիրունս, հա-
ղորդս լինել։ Գանձել անձանց զհիմն բարի ՝ի
հանդերձելոն. զի զբուռն հարկանիցեն զՀնամարիա
կենացն»։ Առաջ. Է. 3. 4։ Ը. 24. 25։ Ա. Տիմ. Ը. 17. 19։
Աստուածդիւն ժառանգութիւնս ամ բարեաց՝

շնորհայ և փառայ վայելելոյ է հաստատուն յոյս մեր, որ առ ինքնաբուն բարին առ ամենակալ տէրն. զոր հոգւով արբով քարոզէաց մեզ ընդ ձմարտուէ հաւատոյ յարակցեալ և զյաւիտենական յուսոյն երանութիւնս առաքելապատիւ հայրապետն մեր և լուսաւորիչ մեր Գրիգոր. «Գանձ անկապուտ են հաւատք. որք զբարին 'ի մեզ ամբարեն. և 'ի ձեռն շնորհաց յայտնեցեալ հաւատով ՇԾ զպարգևս փրկուէ անմահից. զի զամենայն երանութիւնսն յուսով վայելեսցուք. զի իբրև առաջի աչաց դնէ մեզ զուարթածաղիկ զուրախութիւն յուսով. զի մի՛ հեղգասցուք 'ի հանդիսից՝ որ առաջորդէն մեզ յանանց բարին, որ պատրաստեալէ արքայ»։ Յաճախ. Ճառ. ֆ։

Յորդորակ.

Ոչ՝ բազում բարեաց և շնորհաց է պատճառ յուսալն յՇԾ, և ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ բազմապիսի օգուտս բերէ. ներհակ ամին՝ յուսացողացն 'ի մարդիկ՝ 'ի հաստատուէս և 'ի զօրուէս իւրեանց, բազմատեսակ չարիս առ բերէ. զորս բացարձակ յայտնեն մեզ ՇԾ գիրք՝ և յորդորեն միայն յուսալ յամենակարողն ՇԾ. զչարիս և զշնորհս փառայ և երանուէ նորին

լայելել սատ՝ և 'ի հանդերձելումն։ «Զ 'ի որ յուսայ յԱծ ասէ Խերանն ոսկի։ որ տէր է զօրութեանց։ լինի զօրացուցիչ նմա։ և առաջնորդ բարեգործութեամբ ժամանելոյ երկնաձիր երանութեան։» 'ի ՃՈՒ հաւատոյ։ «Երանի՛ ամենեցուն։ զոք յուսացեալ են 'ի տէր։ և թէ՝ Խարի է յուսալ 'ի տէր՝ քան յուսալ 'ի մարդիկ։ բարի է յուսալ 'ի Նո՛ր՝ քան յուսալ յիշխանսն։» Սաղ. Բ. 14։ ԺԷ. 8։ «Երկիւղածք տեառն յուսացարուք 'ի նա։ և 'ի զուարճութիւն եկեսցէ ձեզ ողորմութիւն։» Սիրաք. Բ. 9։ «Տէր ողորմեաց մեզ։ զի 'ի քեզ յուսացաք։ եղև զաւակ անհաւատիցն 'ի կորուստ։ այլ մեր փրկուն 'ի քէն է 'ի ժամանակի նեղութեան։» Եսայ. Լէ. 2։ «Զ. յսալէս ասէ տէր։ անիծեալ լիցի մարդ՝ որ արասցէ զյոյս իւր 'ի մարդ։ և ապաստան լիցի 'ի մարմին բազկի նորա։ և ապստամբեսցի 'ի տեառնէ սիրտ նորա։ Զի օրհնեալ լիցի մարդն՝ որ յուսացաւ 'ի տէր։ և եղիցի տէր յոյս նորա։» Երեմ. ԺԷ. 5—7։

Ահա այսու երանական և հաստատուն յուսով պարծեսցուք։ և զամենայն առաքինական գործս մեր՝ համարեսցուք զօրութի՛ և նեռգործութիւն յուսոյ մերոյ առ Ա՛ծ։ և ապա վստահ հոգւով ասասցուք ընդ սրբազան առաքելոյն

Պօղոսի ։ «Յոյս մի այսպիսի ունիմք 'ի Աստուծոյ։ Իբր ոչ եթէ անձամբ բաւական եմք խորհել ինչ իբրև 'ի մէնջ ։ այլ բաւականութիւն մեր յաստուծոյ է։» Բ։ Կորն։ 4։ 4։

Աստանօր ուենկնդիր լիցուք յորդորական բանից հոգեշահ վարդապետութեանէ սրբազան աւետարանչին Յովհաննու։ «Սիրելիք՝ այժմ որդիք այ եմք ։ և չեւ ևս է յայտ՝ եթէ զի՛նչ լինելոց եմք ։ գիտեմք՝ զի յորժամ նա յայտնեսցի՝ նման նմա լինելոց եմք ։ զի տեսանելոց եմք զնա՝ որպէս և էն։ Եւ ամ՝ որ ունի զայս յոյս յանձին սրբէ զանձն իւր՝ և որպէս նա սրբ է։» ա։ Յով։ 4։ 2։ 3։

Ապա յորդորեալ 'ի բանից սուրբ գրոց յուսացեալքս յաստուած ճշմարիտ ։ ըստ մարգարէին աղաղակեացուք 'ի խորոց սրտէ։ «Ինձ մերձենալ առ աստուած բարի է ։ և դնել առ Տէր զյոյս իմ։» Սաղմ։ ԿԲ։ 23։

Ի վախճան բանիցս այսոցիկ ձայնակից լիցուք և մեք խնկելի մաղթանայ հրեշտակակրօն սուրբ վարդապետին մերոյ Գրիգորի նարեկացւոյն ։ հեծութեամբ սրտի աղաղակելով։ «Արդեօք մոռասցիս զբարերարելդ՝ ակնկալութիւն։ անտեսեսցես զգթասիրելդ՝ խնամող ։ այլայլեսցես զմարդասիրելդ՝ անփոփոխ։ նահանջեսցես զկենագործելդ՝ անվախճան։ թողուցուս զողորմութիւն

թիւնդ՝ երկանիկ պատուղ։ Լ՚ղաւաղեսցեմ զքաղցրութիւնդ բարեշնորհ ծաղիկդ. անպատուեսցեմ զնիւթ պանծանայ քումդ ճոխութեան. յեղանակեսցեմ զփառս հերայ քումդ բարձրութեան. ոչ պահեսցես զվայելչական զարդ պայծառութեան քումդ պատկի։ Լ՚թէ ողորմածացն է երանութիւն, իսկ դու բնաւ իսկ արքայութիւն լցեալ փափաքմամբ. ոչ զբոլորն պարգևեսցես փրկութիւն. ոչ մատուցանիցես դեղ վերացս, ոչ սպեղանիս խոցուածոյս. ոչ դարման տկարութեանս. ոչ ծագեսցես լոյս 'ի խաւարի՝ յուսացելոցս 'ի քո զօրութիւդ՝ կենաց պարգևդ ահիզերաց, որ միայնոյդ ունիս փառս ինքնութեամբ իսկութեան և յարակայ մշտնջենաւորութեան։ վկայեալ 'ի բնաւից, օրհնեալ և փառաւորեալ յերիս յաւիտեանս, և անդր քան զպայման սահմանի իմանալեցն յաւիտենից։։ Նար. գլ. ը։

Գ. Լ՚ՈՒԽ Ա.

Լ՚ԷԴ՝ ընդ ուղղափառ և ճշմարիտ հաւատոյն մեր և ընդ աներկբայ հաստատուն յուսոյն ունիմք զարդիւնառատ և զերանաւէտ վայելչութիւն սիրոյն մեր. զոր հանապազ պարտաւորիմք ուղղել առ ՀԱԾ, իբրև առ ամենաբարի և միայն

բարձրեալ տէր և արարիչ երկնի և երկրի միշտ սիրելով զնա յամենայն սրտէ , յամ անձնէ , և յամ զօրութենէ մերմէ ։ Եւ և առ ընկերս մեր իբրև առ պատկերակիցս աստուծոյ՝ և հաղորդս երկնային փառաց և կենաց ժառանգութեան ։ և այս սիրելովի պարտէ լինել իբրև զանձն մեր ,, ։ Բ ։ Օրին ։ Ղ ։ Ե ։ Մաթ ։ ԺԲ ։ 37 ։ 38 ։

Այս նախ՝ պարտիմք սիրել զնոսա զի է տէր մեր ։ որոյ մեծամեծ և սքանչելի բարերարութեամբն զօրանամք 'ի բարեգործութեան և յաղթեմք չարաչար որոգայթից բեղիարայ ։ Երկրորդ՝ աստուած է հասատատող զնորհուրդս մտաց մերոց ։ զնորհիւ իւրով մշտախոհ լինել զառաքինութեան գործոց ։ և զնոյնս գանձել 'ի սրտի ։ Երրորդ՝ տէր է ապաւէն ամենակարող ։ որ գիտէ անվտանգ պաշտպանել և պահպանել զանձինս մեր 'ի պէսպէս չարեաց և 'ի վտանգից հոգւոյ և մարմնոյ ։ Չորրորդ՝ պարտիմք անդադար և բոլորով սրտիւ սիրել զնա ։ քանզի է մարդասէր և խնամառատ՝ փրկիչ և ազատիչ յամ չարեաց՝ և 'ի թշնամեաց հոգւոց և մարմնոց մերոց ։ Եւ 'ի սկզբնական և 'ի ներգործական մեղաց ։ Ահա զայս չորեքկին աստուածային անսահմանելի բարերարութեանց զներգործութիւնս ուշի ուշով նկատեալ՝ սրտաբուխաց տենչանօք

երգէ հոգեւոր մարգարէն Դաւիթ։ «Սիրեցից զքեզ՝ տէր զօրութիւն իմ։ տէր հաստատիչ իմ։ ապաւէն իմ՝ և փրկիչ իմ։» Սաղ։ ԺԸ։1։

Տեսէք և առէք ի միտ զնծութիւնս զանհամեմատ ներգործութիւնս և զմեծամեծ բարութիւնս։ զորմէ գրէ սրբազան առաքեալն Պօղոս։ «Այլ արդ՝ մնան հաւատք՝ յոյս՝ սէր՝ սոքա երեքեան։ և մեծ քան զսոսա սէրն է։» Ա։Կորն։ ԺԳ։13։ Ո՛չ մարիա հաւատն՝ է սքանչելի լոյս ոնծային։ որ շնորհիւ ողորմութեան նորա ծագի ի սիրտս մերս։ ահա՛ զայս լոյս անստուերս խնդրէր Դաւիթ ի տեառնէ՝ այլ։ «Լոյս առաւ տէր աչաց իմոց։ զի մի՛ երբէք ննջէցից ի մահ։» Սաղ։ ԺԵ։4։

Եւ յաղագս այսր լուսոյ հաւատոյ մարգարէն Լուսայի քարոզ կարդայր ի մէջ երուսաղէմի։ յորում ծագելոյ էր շնորհիւ փրկագործ մարգարէութեան Յիսուսի Քրիստոսի։ «Զուսաւորեաց՝ լուսաւորեաց երուսաղէմ։ զի հասեալէ լոյս քո։ և փառք տեառն ի վերայ քոյ ծագեսցին։» Եսայ։ Ի։1։ Այնպէս երանելին Պօղոս զարթուցանէլ փութայր զմիտս խաւարեալս մտաց մարդուութեան։ վասն սէր։ «Մինչեւ ոչ ինչ յանդիմանեալ ի լուսոյ՝ յայտնի լինի։ զի ամենայն ինչ՝ որ յայտնի է՝ լոյս է։ Վասն որոյ և ասէ։ արի՛

որ ննջէսդ, և կանգնեաց 'ի մեռելոց, և լուսա-
տուս լիցի քեզ քրիստոս։ Եփես. Ե. 13։ 14։ Այս լոյս
Աշխարհիս քրիստոնէական ուղղափառ հաւատոյ
մեր՝ ա՛ռ առաջնորդէ մեզ յուղիղ հանապարհն ճշ-
մարտութեան, զորմէ գրեալ է՝ ըստ կարի 'ի
գլուխ։

Այս պարարտաւորիմք խորհրդածել ասա 'ի
վերայ հալի և ներգործութեան յուսոյն մերոյ
առ ճշմարիտ, զոր սիրոյն՝ զոր սրբազան առաքելն
կոչէ ընդ հաւատոյն աւետարանեաց։ «Ապ՝նան
հաւատք, յոյս, սէր»։ Վասն զի հաւատն՝ է ա-
ռաջնորդ մտաց և խորհրդոց մերոց 'ի կատարելն
ճշմարտութիւն։ և մերձեցուցիչ աստուածային
պէս պէս շնորհաց։ Իսկ յոյսն առաջնորդէ 'ի
ժառանգութիւն երանաւէտ փառաց երկնից
արքայութեան, ըստ այնմ։ «Ինկնակցութիւն երա-
նելի յուսոյն՝ և յայտնութեան փառաց մեծին
աստուծոյ՝ և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստո-
սի»։ Տիտ. Բ. 13։ «Օ՛ի հաւատքն ձեր և յոյս ի-
ցեն յԱստուծ»։ Ա. Պետ. Ա. 21։ Զ՛այսմանէ գրեցաւ 'ի
նախնեաց թերթս 'ի գլուխ։ դ։

Իսկ ասատանօրուն իմք բացատանուցանել ըստ
մերումանն զվայելչութիւն և զքաղցրագոյն
հաշակ սիրոյն։ որ է երկնաբերձ ծառ կենաց ան-
թարշամ ծաղկօք և անմոռացաբար պտղովք բեղ-

Հաւատքեալ, և 'ի միում բունի իւրում յերկուս ոստս բաժանեալ. այսէ՝ յԱստուածսիրութի և յԱղբայասիրութիւն։

Լուր սրբազան առաքելոյս Պօղոսի և Պետրոսի. «Պտուղ հոգւոյն այս է. սէր, խնդութի, խաղաղութիւն, երկայնմտութիւն, քաղցրութի, բարութիւն, հաւատք, հեզութիւն, ժուժկալութիւն»։ գաղ. է. 22։ «Զ՝ամենայն փոյթ 'ի մէջ առեալ՝ ձերում ք հաւատովքն մատակարարեսջի՛ք զառաքինութիւն, և առաքինութեամբն զգիտութիւն, և գիտութեն զժուժկալութիւն, և ժուժկալութեն զհամբերութի, և համբերութեն զաստուածպաշտութի, և աստուածպաշտութեն զեղբայրսիրութիւն, և եղբայրսիրութեն զսէր։ Զ՝այսոսիկ ձեր յանձին կալեալ՝ և 'ի սոյն յաճախեալ՝ ոչ դատարկս. և անպտուղս զձեզ հաստատիցեն 'ի տեառն մերոյ Յիսի Քրիստոսի գիտութիւն»։ Բ. Պետ. Ա. 5—8։

«Որ ստանայ զսէր՝ երանի է անձին նորա, զի նովաւ կատարին պտուղքն գգուալիք». 'ի 24ոն. երես. 338։ Սէր այ և ընկերին՝ զսիրտս և զհոգիս մեր աստուածային մեծութեամբ տաճար և բնակարան առնէ՝ և աստուածապարգև ընտրհայ և բարութեան գանձարան կացուցանէ. «Զ՝ սէր է, և որ կայ 'ի սէրն՝ բնակէալէ յաստուած, և

աստուած 'ի նմա բնակէ։։ ա։ Յով։ դ։16։ Ի վերոյ այսր բանի խորհրդածեալ Սարգիս շնորհալի սուրբ վարդապետն մեր, գրէ։։Տեսանէ՞ս զպատիւ սիրոյն եթէ յորպիսի անհամեմատ բարձրութենէ տարեալ կացոյց զմեզ։։։Արդ այնպիսիքն առնուն զնոսաբէն արիտուր պարգևացս այսոցիկ։ Զոր աստուած 'ի նմա բնակեսցի։ աստ, և նա յաւիտ։։ ա։Յով։ է։4։Ճառ։է։։Ա՛յլ նախ սիրով նորա լցեալ՝ և զարդարեալ ճառագայթիւք՝ յիշատակաւք սրբութեան։ որ ամենայն անդամոց և մտաց առաջնորդ է յարդարութի, հաւատով յամենասուրբ Երրորդութիւն և 'ի կատն նորա սիրով հաստատիմք։ Զ 'ի սիրտ սուրբ տաճար է հոգւոյն սրբոյ և սէր սուրբ ուռնել՝ բնակարան Բարձրագոյնի։ զի 'ի նմա հանգուցեալքն ոտ եղէն կամքն։ Զ 'ի որ կայ 'ի սէրն իմ և զպահէ զբանս իմ ասէ տէրն։ ես և հայր իմ առ նա եկեսցուք և օթեւանս առ նմա արասցուք։։ Յոհան։ ։ ։

Սէր առաջնորդ է հոգւոյ մերոյ առ ամենայանկաչի շնորհայ հետեւութիւն։ և հաստատանի 'ի յաւիտենական կենաց և փառաց ժառանգութիւնս։ ըստ առաքելոյն։ ։։Զ հետ երթայք սիրոյ։ և նախանձաւորք լերուք հոգեւորացն։։ ։ Կորն։ ։գ։1։

Յիշեցուք աստանօր զկինն մեղաւորն՝ որ համարձակեցաւ եկն առ փրկիչն աշխարհի, առ տէրն մեր Յ՚Ս՚. որ 'ի տան փարիսեցւոյն կայր բազմեալ։ Որ առաջնորդեց նմա գալ յոտն Յիսուսի, և զղջալ զմեղսն. և արտասուօքն թանալ զերկրպագելի ոտս նոցն ամենից. և հերովք գլխոյն իւրոյ ջնջել. և անդադար համբոյրս մատուցանել. և ծանրագին անուշ իւղով օծանել զաստուածային գլուխն Յիսուսի։ Զրանելի եղև այս կինն մեղաւորն, որոյ առաջնորդն եղև սէրն հաստատեալ 'ի տէր Յ՚Ս՚. որ և այս յայտնի արար նոցն իսկ փրկիչն մեր. զի փարիսեցին զչարեցաւ և ասէր 'ի սրտի իւրում. «Սա թէ մարգարէ ոք էր, ապա գիտէր թէ ո՞վ և որպիսի կին մերձենայ 'ի սա. զի մեղաւոր է»։ Յայնժամ արտագէտն ած փրկիչն մեր Յիսուս՝ զնորհուրդ սրտի նորա յանդիմանեաց 'ի հրամայելն. «Սիմոն՝ ունիմ ինչ ասել քեզ. և նա ասէ. ասա՛ վարդապետ, և ասէ. Երկու պարտապանք էին ուրուք մի փոխատուի. մինն պարտէր հինգ հարիւր դահեկան. և միւսն յիսուն։ Երբրև ո՛չ գոյր նոցա հատուցանել, երկոցունցն շնորհեց. արդ ասա՛. ո՞վ առաւել սիրեսցէ զնա։ Ասէ Սիմոն. ինձ այսպէս թուի՝ եթէ որում զբաղումն շնորհեաց. և նա ասէ ցնա ուղիղ դա-

տեցար։ Այլ դարձեալ 'ի կինն կողմն ասէ ցՍի-
մոն. տեսանեմ զայս կին. մտի 'ի տուն քո՝ ջուր
ոտից իմոց ոչ ետուր. իսկ սա արտասուաւք իւրովք
եթաց զոտս իմ, և հերովք իւրովք ջնջեաց։ Համ-
բոյր մի դու ոչ ետուր ինձ. սա աւասիկ յորմէ-
հետէ մտեալ եմ. ոչ դադարեաց 'ի համբուրել-
լոյ զոտս իմ։ Յուղով գլուխս իմ ոչ օծեր,
սա իւղով անուշիւ օծ։ Վասն այ ասեմ քեզ. Թող-
ցեալ լիցին սմա մեղք իւր բազում։ Զի յոյժ
սիրեաց. զի որում շատ Թողցուցու՝ շատ սիրէ.
և որում սակաւ՝ սակաւ։ Այլ ասէ ցնա Թողեալ
լիցին մեղք քո։ Այլ սկսան՝ որք բազմեալք էին
ընդ նմա, ասել ընդ միտս իւրեանց. ով է սա՝
որ զմեղս Թողու։ Այլ նա ասէ ցկինն. Հաւատք
քո կեցուցին զքեզ՝ երթ 'ի խաղաղութիւն։։
Ղուկ. է. 40 — 50։

Այլ լուսաւորիչն ասէ սուրբն Գրիգոր.
։։Փառք և պատիւ 'ի բարերար տեառնէն յա-
ղագս արդար և սքանչելագործոց պատրաստեալ կան։
Որք յուսով զօրացեալ կան յամ փորձանս. և
ոչ վրիպին 'ի սքանչելագործութեամբն առաջնորդեալ և յառաջեալ յամ ա-
ռաքինութիւնս և կալ մնալ անսասանելի։։.
Յոճախ. ճառ. Բ։

Հարկ համարիմք առատանօր ուսանիլ և գան-

ձեզ Ղիմոի, եթէ վասն էր որբազան առաքելն որպէս գրէ յաղագս սիրոյն։ Մեծ գոլ քան զՀաւատն և զյոյս։ յասելն։ «Այրդ մնան՝ հաւատք։ յոյս, սէր, սոքա երեքեանն և մեծ քան զսոսա սէրն է»

Ասի՝ ըստ Ասկեբերանի մեծ անուն ունի սէրն յաճախական առաքինութիւն։ ըստ որում ահա է մեծ անուն տէր։ և այսու անսահման և անհաս մեծութիւն անուամբ բարեբանեալ իսկ է։ «Այնակալ մեծանուն տէր՝ աչք քո բացեն յամ Ճանապարհս որդւոց մարդկան։ տալ իւրաքանչիւր ըստ Ճանապարհի իւրում և ըստ պտղոյ գործոց իւրոց»։ Երէ։ Ի։ 19։ «Ահեղ տէր՝ և օրհնեալ յոյժ։ և մեծութեան նորա ոչ գոյ չափ»։ Սաղ։ Ճիբ։ 3։ «Ակնկալցուք երանելի յուսոյն՝ և յայտնութեան փառաց մեծին այ՝ և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Տիտ։ Բ։ 13։ «Աստուած մեծ է քան զսիրտս մեր՝ և գիտէ զամենայն»։ Յովհ։ 4։ 20։ «Անհաս մեծութիւն, անուն անհաւորս»։ Նար։ ԺԲ։

Այրկրորդ՝ սէր մեր առ ահ և առ ընկերս մեր ունի հաւասար հաղորդակցութիւն ընդ անսահմանն սիրոյ անուանն այ՝ որում։ «Աստ սէր է»։ Յովհ։ Դ։ 8։ Ապա աստուածահաճոյ սէր մեր մեծ է։ և մեծութեան անուն ունի առ աստուած

սէրն և առ ընկերս մեր։ Զի ամ առաքինութիւնք՝ եթէ փոքունք և թէ մեծամեծք, առանց լծորդութեան սիրոյն չունին վարձատրիլ յայլ ժամանակորդ լինել յաւիտենական կենաց և փառաց։ Վասն զի սէրն է՝ որ զամենատեսակ առաքինութիւնս մեր կատարելագործեալ հաճելի առնէ այ, և արժանաւոր երկնապարգև բարեաց նորա և ձրիատուր պարգևացն, զամ. «Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ և զհրեշտակաց՝ և սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրև պղինձ, որ հնչէ. կամ իբրև զծնծղայս՝ որ զօղանջեն։ Եւ եթէ ունիցիմ մարգարէութիւն, և գիտիցեմ զխորհուրդս ամենայն՝ և զամենայն գիտութիւն. և եթէ ունիցիմ զամ հաւատս՝ մինչև զլերինս փոփոխելոյ, և սէր ոչ ունիցիմ, ոչինչ եմ։ Եւ եթէ ջանիցեմ զամենայն ինչս իմ աղքատացայ, և մատնիցեմ զմարմինս իմ յայրումն, և սէր ոչ ունիցիմ, ոչինչ օգտիմ»։ ա. Կորն. ԺԳ. 1-3։ «Զի հոգևոր և սուրբ սիրով առ աստուած և առ ընկերս ճշմարտելոք՝ երկնայնոցն լիցուք ժառանգորդ». Յաճախ. Ճաա. Բ։

Զչուրս աստուածային օրինաց և պատուիրանաց սէր է՝ և լրացուցիչ ամենայն առաքինութեանց ա առաքելոյն բանի. «Զչուրս պատուիրանին սէր է՝ ի սուրբ սրտէ և՝ ի մտաց բա-

բեաց և յանկեղծաւոր հաւատոց։։ • ա • Տիմ • ա • 5։
«Ա՛ռրդապետ՝ որ պատուիրան է մեծ յօրէնս։
Եւ Յիսուս ասէ ցնա • սիրեսցես զտէր Ա՛ծ քո
յամենայն սրտէ քումմէ՝ յամ անձնէ քումմէ՝
և յամենայն մտաց քոց։ Այս է մեծն և առա-
ջին պատուիրան։ Երկրորդ նման սմին • սիրես-
ցես զընկեր քո՝ իբրև զանձն քոյ։։ Մատ • իբ •
36 — 39։

Արդ՝ սէր կատարեալ առ Ա՛ծ և առ ընկերս,
մեծամեծ զօրութիւնս և ներգործուիս տայ
ստացողաց և ժառանգողաց իւրոց։ ըստ այնմ •
«Յայսմիկ կատարեալ է սէրն նորա 'ի մեզ • զի
համարձակութիւն ունիցիմք յաւուրն դատաս-
տանի • զի որպէս և նայն է՝ նոյնպէս և մեք եմք
յաշխարհի այսմիկ։ Երկիւղ ո՛չ գոյ 'ի սէր • այլ
սէրն կատարեալ 'ի բաց մերժէ զերկիւղն։
Ա՛ստ գիտեմք՝ զի փոխեցաք 'ի մահուանէ 'ի
կեանս, քանզի սիրեմք զեղբարս։։ • ա • Յովհ • դ •
14։ ե • 17 • 18։ Եւ սուրբն Ապէբերան 'ի ձա-
ւին ՀԱ՛ծսիրութեան և եղբայրսիրութեան ա-
սէ • «Ա՛ստ է սէր՝ և բուռն քան զհուր յեր-
կինս բերի • որ զօրութեան չ'ինք արկանել խա-
փան։։ «Սէր ո՛չ յաղթահարի 'ի ջրէ։ Սէր
լոյս • սէր աղ • սէր աղբիւր ակն բարեաց։ Սէր
տիպ • և ակն պայծառ • մարգարիտ լաւ • և ակն

պատուական. տիպ ամի։ Սէր Թէոսկոխի ընդ իմաստութիւն. և ցանկալի են շահք գնացից իւրոց։.՝ի Զքոն. էբէս. 337։

Յորդորակ.

Ընդ երանելիք են այնքիսիկ՝ որք ՝ի սէրն այ վառեալ և ՝ի նմին քաջալերեալ յաղթող հանդիսացան ամ՝ ընդդիմամարտից ճգնիրութեան. մերժեցին՝ արհամարհեցին խսպառ յանձանց իւրեանց զամ՝ հեշտալիս աշխարհիս այսորիկ՝ զնաբնսիկ փառս անցաւորիս. և համբերատար դասն բազմատեսակ վշտաց և նեղութեանց։ և միմեանց քաջայորդոր լինելով՝ ձայն խրախուսանայ արձակէին ըստ առաքելոյն Պօղոսի. «Մի մեկնեսցէ զմեզ ՝ի սիրոյն Քրիստոսի։ Նեղութիւն՝ թէ անձկութիւն՝ թէ հալածանք՝ թէ սով՝ թէ մերկութիւն՝ թէ վիշտք՝ թէ սուր՝ որպէս և գրեալ է. վասն քո մեռանիմք զօրհանապազ։ համարեցաք իբրև զոչխար ՝ի սպանդ։» Հռովմ. ը. 35։ Տես և զհոգեշունչ յորդորական բանն կատարեալ ճգնիրութեան երանելի առաքելոյն Պետրոսի։ որ առ ընդհանուր հաւատացեալս. «Այս սմին այսպիսի զամ փոյթ ՝ի մէջ առեալ՝ ձերովք հաւատովքն մատակարարեսջիք զառա-

քինութիւն, և առաքինութեամբն զգիտութի, և գիտութեամբն զժուժկալութիւն, և ժուժկալութեամբն զհամբերութիւն, և համբերութեամբն զանձպաշտութիւն, և անձպաշտութեամբն զեղբայրսիրութիւն, և եղբայրսիրութեամբն զսէր։ Զայսոսիկ ձեր յանձին կալեալ՝ և 'ի սոյն յաճախեալ, ոչ դատարկս և անպտուղս զձեզ հաստատիցեն 'ի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի գիտութիւնն։» Բ. Պետ. Ա. 5—9։

Զատանօր մտադիր լիցուք հոգեշահ յորդորանաց սուրբ վարդապետին մերոյ Սարգսի շնորհալւոյ։«Դարձ սիրեսցուք զանձ որպէս մարթ է սիրել. և սիրեմք՝ եթէ զերկրաւորս արհամարհեմք։ Դրթէ մարմնոյ խնամ ոչ տանիմք 'ի յանկութիւն։ Դրթէ զերկրաւոր անդամս մեռուցանեմք յերկրի։ Դրթէ խնուցումք զզգայութիւնս։ Դրթէ զմիտսն Պօղոսի ստանամք։ Դրթէ զնորայն բարբառիմք բարբառ՝ ասելով. զմեզ ոմ մեկնեսցէ 'ի սիրոյն Քրիստոսի. նեղութիւն. կամ անձկութիւն. կամ վիշտք. կամ սով. կամ մերկութիւն. կամ տառապանք։ Զի վասն սիրոյ նորա մեռանիմք զօրհնեալ. և համարեցաք որպէս զոչխար 'ի սպանումն։ Դրթէ զայսոսիկ հաստատեալ գիտեմք՝ եթէ ոչ մահ և ոչ կեանք. և ոչ որ կանս և ոչ

հանդերձեալքն և ոչ այլ ինչ արարած արտա-
քոյ քան զայս՝ կարէ մեկնել զմեզ ի սիրոյն այ
որ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր։

Այսպիսի միտս ստացուք. Այսպիսի բար-
բառս բարբառեսցուք։ Այս զսէրն այ ստոքա-
գրեսցուք մեզ կենաց և յոյս և խնդութիւն և
աղքայութիւն և անձառ բարիք և պսակ պար-
ծանաց։ Յայսոսիկ դեգերեսցուք և ի սոյն կաց-
ցուք։ Հաստատեսցուք զմիտս մեր ի սէրն այ.
զի մի՛ խաբէութք մտաց զլեկիցիք ի նմանէ,,.
՝ի Ռէկ. ա. գլ. ճաա. Բ։

Ո՛չ ապաքէն այսու ճծային սիրով վառեցան
արիացան և յաղթող դտան ամ բռնութեանց
կռամոլ չարչարողացն, և ճծային սիրոյն զօրու-
թեամբ համբերեցին դառնադառն նեղութեց և
կտտանաց. նա զի քաջալերէին զմիմեանս աքան-
չելի մարտիրոսքն, և քաջ նահատակքն Քրիս-
տոսի սուրբ վկայքն վարդանեանք, զորոց զվկա-
յաբանութիւնս պարզ և բացայայտ առաջի մեր
դնէ Յշեշէ սուրբ վարդապետն մեր.,,Լսկ նո-
քա (Վարդանեանք) առ սէրն քրիստոսի յոյժ
խնդութեամբ ընդունէին զամենայն չարչարան-
սն վասն մեծի յուսոյն որ ի քրիստոս. և որ
առաջոյ պատրաստեալն կայ պատուիրանապահ
համբերողացն։ Որչափ չարութիւն զանարգուի

բաղմացուցանէր, նոքա ևս քան զևս զօրանային
'ի սէրն քո՝ մանաւանդ զի բաղումք 'ի նոցանէ
զգիրս սուրբս ուսեալք էին 'ի մանկութենէ,
զանձինս մխիթարէին, և զընկերսն քաջալերէին,
և աշխարայ զպաշտօնն ունէին և բաղմացուցա-
նէին։։։ Յայսմ հաւատոց զմեզ ոչ ոք կարէ
խախտել, ոչ հրեշտակք և ոչ մարդիկ, ոչ սուր
և ոչ հուր, ոչ ջուր և ոչ ամենայն զինչ և են
դառն հարուածք։ Ամենայն ինչք և սատացուածք
մեր 'ի ձեռս քո, և մարմինք մեր առաջի քո կան,
ըստ կամաց քոց արա զինչ և կամիս։ Եթէ սովին
հաւատովք թողուս, ոչ յերկրի այլ տէր փոխա-
նակեմք ընդ քեզ, և ոչ յերկինս այլ աստուած
փոխանակեմք ընդ Յի՝ Քրիստոսի։ որ չիք այլ
աստուած բայց 'ի նմանէ։ Ապա եթէ յետ այսր մեծի
վկայութեան այլ ինչ հարցանես, աւասիկ կամք
զբոլոր մարմին տուեալ 'ի ձեռս քո՝ վաղվաղա-
կի արա զինչ և կամիս։ Ի քէն տանջանք, և 'ի
մէնք յանձնառութիւնք։ սուրբ քո, և պարա-
նոցք մեր։։։ Եղիշէ։ Բ։ յեղանակ։ Այս հրեշտակա-
կրօն սուրբս վարդապետն Գրիգոր նարեկացի
'ի մեկնութեան երգոց երգոյն 'ի վերայ բնաբա-
նիս։։։ Զ. Զուրբք բաղումք ոչ կարասցեն շինուցա-
նել զսէր, և գեռք ոչ արգելցեն զնայ։։։ Մեկնա-
բանութիւն առնէ։։։ Զբդ որչափ առ աստուած

սէրն է, և անմեղկելի է 'ի մարդկանէ, և յաղթող հրոյ և ջրոյ և կապանաց և քերանաց և բանտից և կնոջ և որդւոց. որով յաղթեցին իսկ սուրբքն ամենայն առաքեալք և մարգարէք և մարտիրոսք և Հգնաւորք Քրիստոսի սիրովն արբեալք... Այլ այն սէրն որ առ աստուած, այնչափ գովութեան և մեծարանաց արժան է, որով և Դաւիթ պարծի. սիրեցից զքեզ տէր՝ զօրութիւն իմ. և թէ՝ Լուաղեց սիրտ իմ և մարմին իմ. աստուած սրտի իմոյ բաժին իմ ՀԾ յաւիտեն. այսինքն թէ դու ես իմ բաժին. և յորժամ զքեզ յիշեմ, նուաղէ սիրտ իմ յիս։ Եւ թէ՝ սիրտ իմ ցնծասցէ առ աստուած կենդանի։ Եւ այլ բազում բանս այսպիսի աղաւաղականս զմայլական սիրովն աստուծոյ ջերմեալ զսրբոյս գտանիս, զոր ո՛չ բաւեմ թուել։ Լոյնպէս և զՊօղոսին անբաւս ևս, սոյնպէս և զայլ առաքելոցն։ Բ՝ստ այսմ՝ և զայնչափ վարդապետացն և զսրբոցն աստուծոյ. որով սիրով ջերմեալ՝ յաղթեցին աշխարհի և ամենայն կրեաց և փորձութեանց։ Սոյն այս հրեշտակակրօն սուրբ վարդապետին մերոյ խնկելի մաղթանացն հաղորդ լինելով աղաղակեսցուք և մեք առ տէր անուն աստուած մեր Հշմարիտ այսպէս. «Յոյց ինձ տէր 'ի յելից աւուր շնչոյս արդ

ձակման մաքրութեան ոգի, լուսով ամբարձեալ
'ի յերկնաւորացն երջանկաց՝ պարգևօք սիրոյ քո
եկեալ հասել։ Ի յարդարոցն կատարելոց՝ կա-
րեաց ինձ կցորդ ժամանեցուսցես, զանակնկալն
բարի՝ չարիս 'ի յուսահատութեանն աւուր շնոր-
հեսցես։ նոր • Բ։

ԳԼՈՒԽ Ջ.

Այլ և պարտիմք ճանաչել հոգւոյ աչօք
և ուղղափառ հաւատոյ ճշմարտութեամբ դի-
տել զաստուծոյ սեփական ամենացանկալի
ճանապարհն, և գնալ ընդ այն անխոտոր • որով
յաւէտ լինի մեզ մերձենալ առ նա, և նորա
առ մեզ անսահման նախախնամութեամբ, անս-
պառելի ողորմութեամբ, ամենաբաւական բա-
րերարութեամբ, անճառելի մարդասիրութեամբ
և իրաւադատ դատաստանաւ, զորս խոստովա-
նելով աստուածատես մարգարէն Մովսէս օրհ-
նաբանէ, յասելն • «Աստուած որոյ ճշմարիտք
են գործք նորա • և ամենայն ճանապարհք նորա
իրաւամբք», Բ • Օրին • ԼԲ • 4։ Ուստ սմին օրինակի
երեք մանկունքն 'ի հնոյին բաբելոնի օրհնէին
զաստուած գոհաբանութեամբ սրտի • «Օրհնեալ
ես տէր աստուած հարցն մերոց • գովեալ՝ և

փառաւորեալ է անուն քո յաւիտեան։ Օ՜ի արդար ես յամենայնի՝ զոր ածեր ՝ի վերայ մեր և ամենայն գործք քո ճշմարիտք են. և ուղիղք են ճանապարհք քո՝ և ամենայն դատաստան քո ճշմարտութիւն։։ Դան. գ. 26։ Եւ հոգեներաշունչ մարգարէն Դաւիթ յայս միտս երգէ. ։։Ամենայն ճանապարհք տեառն ողորմութեամբ և ճշմարտութիւն են այնոցիկ, որ խնդրեն զուխտ՝ և զվկայութիւն նորա։։ Սաղ. իգ. 8. հշ. 12։։Ճանապարհք նորա, ճանապարհք բարեաց. և ամենայն շաւիղք նորա խաղաղութեամբ։։ Սաղ. գ. 17։ Այսմ աստուածային նախախնամական բարերարութեան ճանապարհին յուսալիր ցանկան հոգիք աստուածապաշտից, ըստ այնմ. ։։Ճանապարհք ՝ն իրաւունք են. յուսացաք յանուն քո՝ և ՝ի յիշատակս ցանկութեամբ ոգւոց. որում ցանկայաւ անձն մեր։։ Եսայ. իգ. 8։

Արդ՝ զայս ամենայն ճանապարհ աստուածային ճշմարտութեան՝ մի՛ ոք քննել զննել յանդգնեսցի մարդկային տկար հանճարով և խմաստութեամբ՝ ասէ Աղեքսանդրեան. բայց միայն ՝ի գրոց վկայութեամբ խոստովանիլ, եթէ սոցա ճանապարհն ունի շաւիղս ողորմութեան, բարերարութեան և մարդասիրական խնամածուէ. վասնորոյ գրէ երանելի առաքեալն Պօղոս.

«Մի՛ խորք մեծութեան և իմաստութեան և գիտութեան աստուծոյ, որպէս զի առանց քննելոյ են դատաստանք նորա, և առանց գննելոյ են ճանապարհք նորա։» Հռովմ. ԺԱ. 33։ Ահա՛ մեծ հայրապետան մեր և լուսաւորիչ՝ սուրբն Գրիգոր զայս լուսաշաւիղ ճանապարհ յաւիտենական կենաց բացայայտ ցուցանէ մեզ. աներկբայ յուսալ և խոստովանիլ յուղղափառ հաւատս քրիստոնէական ճշմարիտ կրօնից մերոց. «Եթէ զայս ճշմարիտ հաւատս ունիմք՝ ի սուրբ գրոց և յօրինաց եկեղեցւոյ, առաջնորդ կենաց ճանապարհի առ ՅԾ, և՝ ի սուրբ գիրս վարդապետութեան հաւատովք։ Այլ մի՛ խոտորիք՝ ի կարգաց իմաստութեան. մի՛ յաջ. և մի՛ յահեակս։» Ագաթ. երես. 135։

Յորդորակ.

Պարտէն՝ ոչ միայն առաջնորդութիւն հաւատոյ ճանաչել պարտ է զճանապարհն աստուածային ճշմարտութեան և բարերար նախախնամութեան. այլ և փութալ ջանալ ամենայնիւ առ՝ի մերձաւոր և արժանաւոր գտանիլ պէս պէս շնորհաց նորին. վասն յորդորէ զմեզ երջանիկ մարգարէն Դաւիթ, յասելն. «Արդար է Տէր յամ

Ճանապարհս իւր. և եթէ յամ 'ի գործս իւր։ Մերձէ՞ր առ ամենեսեանս, որ կարդան առ նա. առ ամենեսեան՝ որ կարդան առ նա Ճշմարտութիւն։ Զ կամս երկիւղածաց իւրոց առնէ տէր. աղօթիցն նոցա լսէ՝ և կեցուցանէ զնոսա։։ Սաղմ. ԺԷ. 18 —21։ Բան այսմ և սուրբ վարդապետն մեր Յոսրով գրէ 'ի մեկնութեան Ժամագրքի. ։։ Ընդհանրէ թէ ոչ առնուցուք զնդրուածս, որ ի կամաց նորա լինի. զի քան զամենայն հայր գթած է. և քան զամենայն մայր գորովագութ։ Եւ զկամս երկիւղածաց իւրոց առնէ տէր, աղօթիցն նոցա լսէ և կեցուցանէ զնո՞ա։։ Երես. 329։

Ահա 'ի սոյն միտս հրաշաբանէ սուրբ վարդապետն մեր Սարգիս շնորհալի. ։։Բաղուամ անգամ ասացաք զաղօթիցն եթէ՝ յամենայն իրս օգտակարէ և պիտանացու. և առաւել ընտանի առնէ զմարդն աստուծոյ քան զամենայն բարեգործութիւնս։ Զորին աղագաւ և աստուածպատրաստական կայ խնդրողաց իւրոց։ Մինչև ձեր ասէ կարդացեալ լցէ առիս՝ լուայց ձեզ. և մինչև խնդրեալ լինչ լցէ։ ասացիս բա՞ զինչ խնդրէք։ Այս է ասելն. Զկանչ նորա յաղօթս նոցա։ Որպէս Պուռնեղլէին. որոյ աղօթքն և ողորմութիւնն յիշեցան առաջի աստուծոյ. Գործ. Ժ. 4. 31։ Եւ որպէս առաքելոցն։ յորում

շարժեցաւ տեղին ուր ղաստուածահաճոյ աղ-
թքս կատարէին։ Գործ։ Դ։ 31։ Իսկ ղայլոց բաղ-
մաց ոչ ընկալաւ ղաղօթս թէպէտ և սուրբք
էին և մտահաճոյք։ Այլ այն գրէ թէ յաղագս
մատակարարութեան իրիք։ Որպէս Պօղոսի յե-
ղիցս աղաչէրն, ասէ շատ են քեզ շնորհք իմ
Պօղէ։ զի զօրութիւն իմ 'ի տկարութեան կատա-
րի։ Բ։ Կորն։ ԺԲ։ 9։ Այլ Այրեմիայի ասէր մի՛ կար
յաղօթս։ վասն զի չէմ լսելոց քեզ։ Մինչ-
զնոնարհութիւն ուսուցանէր, և միւսոյն միտ
տայր իմանալ եթէ ոչ են ապերախտ ժողո-
վուրդքն արժանի ողորմութեան։ Իսկ այլոց։ որք
ախտաւորաբար աղօթէին՝ ասէր, Զինչ օգուտ
է ձեզ գալ բողոքել առիս և ինձ ոչ լսել ձեզ։
Եսայ։ Ա։ 15։ Իսկ այնոցիկ՝ որք տիրապէս արդարք
էին և գիտէին զարժանն, և որ ինչ վայելէր
այ խնդրել, ոչ արգելոյր աստուած 'ի նո-
ցանէ զնենդիրան։ Զ՝ասն զի ողորմութեանց և
իրաւանց տուողէ։ և ոչ զլանայ և ոչ մի ինչ,
որ ինչ մեզ պիտանացուն է և շահաւէտ։ Զ՝մին
իրի ասաց։ Ունչք տեառն 'ի վերայ արդարոց։ և
ականջք նորա յաղօթս նոցա։ 'ի Մատթ։ Ա։ գլխ։ Բ։
12։ Ճառ։ է։

ԳԼՈՒԽ Լ.

Պա՛տ՝ արժան և հարկ իսկ է ուշադիր քրիստոնէից ճանաչել զերմեռանդն հոգւով զնախասահմանեալ ճանապարհն ճշմարտութեան՝ և յաւիտենական կենաց, և փափագանօք սրտի ցանկալ հասանել ժառանգութեան նորին. զոր յայտնի երևեալ աւետարանեաց մեզ նոր և շնորհական փրկարար օրէնքն Յիսուսի "Բեռի փրկչին մերոյ, զոր ցանկային վայելել մարգարէքն, նկատեալ 'ի հեռուստ մարգարէական հոգւով. "Ո՜ճանապարհս քո՞ր ցոյց ինձ, և զշաւիղս քո ուսո՛ ինձ։ Ուղղորդեա՛ ինձ 'ի ճշմարտութե՛ քում և ուսո՛ զիս, զի դու ես ած փրկիչ իմ և ես քեզ հանդիպերի զօրհանապազ,, Սաղ. իե. 3. 4։ "Ո՜ զօրացարո՛ւք ձեռք լքեալք՝ և ծունկք կթուցեալք։ Սնիթարեցարո՛ւք կարճամիտք սրտիւք. զօրացարո՛ւք՝ և մի՛ երկնչիք, ահաւասիկ աստուած մեր հատուցանէ զվատաստան՝ և հատուսցէ՝ ինքնին եկեսցէ՝ և փրկեսցէ զմեզ։ ... Ընդ ելիցի ճանապարհ մաքրեալ. և ճանապարհ սուրբ կոչեսցի. և մի անցցէ ընդ նա պիղծ. և մի ելիցի անդ ճանապարհ պղծոց. այլ ցրուեալքն գնասցեն ընդ նա՝ և մի՛ մոլորեսցին,, Եսայ. ղ. 3 — 8։

Զայս ամենայն մարգարէական տեսութիւնս՝ յայտնեաց և բացածանոյց ինքնին Յիսուս Քրիստոս փրկիչ մեր սիրելի աշակերտաց իւրոց, աստուածային անժխտելի բանիւ իւրով, յասելն. «Ես եմ Ճանապարհ և Ճշմարտութիւն և կեանք. ոչ ոք գայ առ Հայր՝ եթէ ոչ ինձ». Յովհ. ԺԴ. 6։

Ահա զայս նորոգ շնորհեալ մեզ Ճանապարհ յաւիտենական կենաց և փառաց, ահագին առաքելոն Պօղոս՝ քարոզէ հաւատացելոց, առ 'ի վատահամիտ և անմոլար դիմել առ փրկաւէտ Ճանապարհն կենաց և Ճշմարտութեան. «Եւ նիւթ այսուհետև ելեալք՝ համարձակութի 'ի մուտս սրբութեանցն արեամբն Յիսուսի։ Զոր նորոգեաց մեզ Ճանապարհ նորոգ և կենդանի 'ի ձեռն վարագուրին, այսինքն է՝ մարմնոյ իւրոյ. և քահանայ մեծ 'ի վերայ տանն աստուծոյ, մատիցուք Ճշմարիտ սրտիւք՝ լրութիւն հաւատոյ, լուացեալ զսիրտս 'ի խղճէ չարեաց՝ և մարմնեալ զմարմին 'ի ջուրն սրբութեան». Եբր. Ժ. 19 — 22։

Տեսանե՞ս սիրելի ընթերցող, զի Յիսուս Քրիստոս սահմանեաց զանձն իւր Ճանապարհ Ճշմարտութիւն և կենաց, ոչ միայն բանիւ, այլ տոկաչի և կամաւոր չարչարանօք իւրովք, և փրկարար խաչելութեամբն, և երկայնամիտ լի-

նեալուին զէսպէս նախատանաց։ Վասնորոյ պարտ
է և մեզ յաշխարհի աստ նեղութիւնս տա-
ռապանս և չարչարանս կրելով ընթացակից լի-
նիլ Ճանապարհին Յիսուսի Քրիստոսի. որպէս
զի կարող լինիցիմք յաւիտենական կենաց և
Ճշմարիտ փառաց երկնից արքայութեան ժամա-
նել վայելման։ Այս ունկնդիր լիցուք բանից
երանելի առաքելոյն Պետրոսի. «Քրիստոս վա-
սն ձեր մեռաւ, և ձեզ եթող օրինակ՝ զի ըզ-
հետս երթայցէք հետոց նորա. որ ոչն արար
մեղս, և ոչ գտաւ նենգութիւն 'ի բերանս նո-
րա. որ բամբասեալ՝ և ոչ փոխարէն բամբա-
սէր. չարչարեալ՝ և ոչ պահէր սպառնալիս.
բայց իրաւամբք մատնէր դատաւորին »։
։ գԼԲ. Բ. 21. 23։ Ի սոյն յորդորէ զմեզ երանե-
լի վարդապետն մեր Սարգիս շնորհալի, յասե-
լն. «Ինդ նոյն շաւիղ ընդ որ ոտք կարապետին
ձերոյ գնայ, պարտ է և ձեզ գնալ։ Ո՛չ գարշե-
ցաւ ծառայ լինիլ ազատն բնութեամբ. չ՛պար-
տիք և դուք գարշիլ 'ի ծառայութենէ՝ որ բը-
նութեամբ ծառայքդ էք։ Զ՛հրաժարեաց 'ի
մահուանէ անմահն բնութեամբ, ոչ պարտիք
և դուք հրաժարիլ, որ բնութեամբ էք մահկա-
նացուք։ Ա՛յլ զձեր զկամայ կիրս՝ նորա կա-
մաւոր կրելոյն կցորդս պարտականէք առնել՝ զբ-

նալով զկնի հետոց նորա։ Այլ զի մի՛ երբեք ա-
սիցեն թէ՝ ոչ ինչ մեղաք այնոցիկ որ զերկեն ըզ-
մեզ և չարչարեն։ իսկ նոքա յանիրաւի առանց
իրիք յանցանաց տանջեն զմեզ և սպանանեն։
Այ՛մի իրի զՅիսուսին առաջի դնէ նոցա ըզ-
տեսնն և զաստուծոյն, որ ամենեքին անմեղն է և
առանց իրիք յանցանաց։ և ըստ աստուածու-
թեանն բնութեան և ըստ մարդեղութենն տնո-
ղութեան։ Այս չարչարեցաւ և գանեցաւ և
մեռաւ և ասէ։ Ի Դեպ։ ա։ գեպ։ բ։ 1։ ճաա։ գ։

Յորդորակ։

Այդ՝ մի՛ լեցի մեզ թողուլ զուղիղ և զլու-
սաշաւիղ ճանապարհն փրկութեան և ճշմար-
տութեան, և հետևիլ ընթանալ զճանապարհս
խաւարային և կորստական, որով լինիմք ար-
ժանի բանից ողբոց և աւաղանաց։ «Որ հոգ, որոց
թողեալ են զճանապարհս ուղիղս՝ գնալ ի՛ ճա-
նապարհս խաւարին։ Ուրախ լինին ընդ չարիս։
և խնդայցեն ընդ խոտորումն չարութեան։
Որոց թիւրք են ճանապարհք իւրեանց՝ և կամա-
կորք շաւիղք նոցա։» Առակ։ բ։ 13 — 15։
Այդ՝ աստանօր ուշի ուշով աւանդիր լեցուք հո-
գեկեցոյց յորդորանաց Յիսուսի փրկչին մերոյ,

որով խորհեցուցել զմեզ յաշխարհասիրութենէ և 'ի մոլորութենէ կամակոր ճանապարհին՝ մերձաւոր առնել կամի ուղիղ և ճշմարիտ ճանապարհին արքայութեան իւրում։ Հրամայելովն։ «Ա՛տէք ընդ նեղ դուռն։ քանզի ընդարձակ է դուռն՝ և համարձակ ճանապարհն՝ որ տանի 'ի կորուստ։ և բազումք են որք մտանեն ընդ նա։ Քանզի անձուկ է դուռն՝ և նեղ ճանապարհն՝ որ տանի 'ի կեանս։ և սակաւք են որ գտանեն զնա»։ Մաթ։ է։ 13—15։

Զ. Եղեցիկս մեկնաբանէ զայս հոգեյորդոր բան ամենափրկչին մերոյ Յիսուսի սուրբ վարդապետն մեր Յովհան Ծորոբորեցի։ «Ա՛ռ զիր՝ զի և աստանօր զնոյն ցուցանէ թէ դուռն միայն է նեղ։ իսկ վայր ընդարձակ է կեանք՝ որպէս և մեռան զգուռն միայն ունի արձակ։ իսկ տեղին կորուստ է և գեհենն։ Այս դարձեալ՝ անդ թեթև ասաց յաղագս յուսոյն։ որպէս երդէ դաւիթ թէ՝ յոյժ անդորր են ինձ պատուիրանք։ և Յովհաննէս թէ՝ պատուիրանք նորա չ'են ինչ ծանրութիւն։ Իսկ աստ նեղ վասն հանդիսի ճգանցն։ ըստ առաքելոյն՝ թէ բազում նեղութեամբ պարտէ մեզ մտանել յայն հանգիստն։ և թէ՝ առ ժամայն նեղութիւնս զյաճախութիւն փառաց գործէ 'ի մեզ։ վայ մի՝

հայիր 'ի նեղն։ այլ յայն թէ ուր տանիցի. և
մի՛ ընդ լայնն՝ թէ ուր վախճան ունիցի։ Այլ
նեղ այն ասի։ զի յամ՛ կողմանց ճշիցի և վրատան-
դիցի յելս ճանապարհին ըստ նմանութեան կա-
մրջի։ ոչ խոտորելով յաջ և ոչ յահեակ։ Լայն
լայն՝ զի 'ի ճանապարհէն արտաքս ելեալ յընդ-
արձակութեան շրջի. մոլորեալ յուշիղ պողո-
տայէն։ Այլ դուռն անուանէ յիրաւի։ զի երբեմն
'ի դրանց արտաքս ելանեմք 'ի կենցաղոյս՝ թող-
ղեալ 'ի տան աշխարհիս զմ'թերեալ ընչից բազ-
մութիւնս։ նաև զվիշտս և զնեղութիւնս յո-
ղում ումանք սակաւ վշտացեալ իբր 'ի դրան ել՝
կենցաղ պատահին։ և ումանք 'ի դուռն՝ ժամանակ
ընդարձակ կենօք յօրացեալ՝ կորստեան արժա-
նաւորին։ Եւ զայն։ զի ընդարձակս ասէ
բազումք ընթանան յաղագս հեշտութեան
խաբեալք և յառաջնորդէ ճանապարհին այլ ոք
այլ ուր գահավիժեալ։ յորոյ կատարածն կո-
րուստն է բազմեալ սատանայ։ զամ՛ են ճանա-
պարհք՝ որք թուին թէ ուղիղ իցեն բայց։ ելք
նոցա հային յատակս դժոխոյ։ Եւ 'ի նեղն սա-
կաւք՝ վասն դժուարութեան նուրբ ընթացիցն։
զի խաչ կայ առաջի և չարչարանք. նահատակու-
թիւնք և վաստակք։ որոյ առաջնորդ ինքն է հան-
տատեալն 'ի գլուխն անմահ կենցաղ բաշխիչ

արքայութեան երկնից պարգևիչ։։։ Ի Տէր։ Մարտ։ Է։14։

Արդ արժան է յիշել զարտաշարժ բանս սքեյն Յովհաննու ոսկեբերանի, որ բնաբան ունի զայս բան սրբազան առաքելոյն Պօղոսի։։։ Զայս գիտասջիք եթէ յաւուրս յետինս եկեսցեն ժամանակք չարք։ զի եղեսցին մարդիկ անձնասէրք, արծաթասէրք, հպարտք, ամբարտաւանք, հայհոյիչք, անհաւանք ծնողաց, անշնորհք, անաստուածք։։։։։ Որ ունիցին զկերպարանս աստուածութեան, և 'ի զօրութենէ անտի նորա ուրացեալ իցեն, և խորշեսջիր 'ի նոցանէ։ Բ։Տիմ։Գ։1—6։ Գրէ այսպէս։ Սոքա են՝ որք խոյս տան 'ի նեղ ճանապարհէն Քրիստոսի։ որ տանի 'ի կենս յաւիտենականս։ սոքա են՝ որք անձամբ և կամակոր մտօք ընթանալ ընթանան ընդ համարձակ ճանապարհն աշխարհասիրութեան և արծաթասիրութեան և զանազան մոլութեան, որոյ վախճան հայի 'ի յաւիտենական կորուստ դատապարտութեան։ սոքա են՝ որք անամօթաբար չարաչար պաշտօնակից գտանին երկուց գլխաւոր կախարդացն Եգիպտոսի, որոց անուանքն էին Յանէս և Յամբրէս։ որք հրաշագործութեամբ Մովսիսի հակառակ բարբանջէին։ Նոյնպէս և սոքա հակառակ կան ճշմարտութեան ճանապարհին որոյ հեղինակն ոչ եթէ աստուածամարգարէն Մովսէս է, այլ ինքնին Ճշմարտութիւն

յաւիտենական աստուած փրկիչ մեր Յա Ռա։ Սոքա են՝ որք արծաթասիրութիւն մոլեալ ընկերակցեալ գտանին տիրավաճառ Յուդայի Իսկարիովտացւոյ ապերախտ աշակերտին Յիսուսի փրկչին մերոյ։ սոքա են՝ որք զաստծասիրութիւն թողեալ զաշխարհասիրութիւն զհետ գնան ընդ ուխտադրուժ և կամակոր Պետրոս անուն աշակերտին Պօղոսի սրբազան առաքելոյն։ զորմէ վշտացեալ սրտիւ գրէ։ «Պետրոս եթող զիս՝ և սիրեց զաշխարհ, և գնաց 'ի Թեսաղոնիկէ։ Բ։ Տիմ։ դ։ 10։ Մի սոսկալի աշխարհասիրութիւն, տեսս, զի՞նչ վնասիս դատապարտութեան տայ չարաչար համակելոցն յաշխարհասիրութիւնս։ «Հնացողք՝ ո՞չ գիտէք, զի սէր աշխարհի այսորիկ թշնամութիւն է առաստծ։ զի որ ոք կամիցի սիրել զաշխարհ՝ թշնամի առնէ զանձն այ»։ Յակ։ դ։ 4։ Ի վերայ այսր բանի՝ յորդորական գրէ շնորհալի սուրբ վարդապետն մեր Սարգիս։ յասելն։ «Յայսպիսի ահագին սպառնալեացս պարտ էր երկնչիլ և դողալ մեզ ովք սիրելիք։ և առ սաստիկ երկիւղին զաշխարհական իրս զամ իբրև աղբ անպիտան վարկանել։ առեալ և 'ի բաց դառնալ։ Ի հանդէս մերոյ մերոց առնել և խնամով քննել եթէ յորոց արդեօք իցեմք։ 'ի սիրելեացն աստուծոյ եթէ 'ի թշնամեացն։ զի մի՛ զաստծ մեզ թշնամի և

պատերազմող կայցուք։

Եւ արդ աղէ ասա, եթէ զոք սիրելի և բարեկամ ունէիր, երախտաւոր և բարերար, և տիրապէս գիտէիր եթէ այն իրք, զոր հանդերձեալս գործել՝ ընդդէմ հակառակ է սիրելոյն, և պատճառք թշնամութեան և հեռանալոյ նմա 'ի քէն։ Ոչ զամ հնարս հնարէիր և զգործելն զայն ատէիր և խափանէիր. զի զբարեկամն թշնամի և պատերազմող մի' ընկալցիս։ Եւ եթէ առ մարդ սիրելի այսպէս, քանի՞ և ես բիւրապատիկ առ աստուած պարտիմք զգուշանալ որ ամ ճշմարտութեամբ սիրէ զմեզ, և երախտաւոր և բարերար այնքան է մեզ զոր ոք երբէք ոչ կարէ թուել։։ 'Ի Դէ։Յակ։գ։4։ Ճառ։Բ։

ԳԼՈՒԽ Բ.

Եթէ կամիմք զևորհուրդս մտաց մերոց ուղղել ըստ բարերար կամայ ամենակալին այ, պարտիմք յայնժամ ճանաչել զճանապարհս ճշմարտին օրինաց և պատուիրանաց. զորս յայտ յանդիման կացուցանէն մեզ ճշմարտունչ սբ գիրք հին և նորկտակարանաց ուշադիր ընթերցանութեամբ և մտադրութեամբ։ Զայս ուսուցանէր իսրայէլեան ազգին ճշմարտօս մարգարէն Մովսէս.

«Զ՝այշ լերուք առնելոյ՝ որպէս պատուիրեաց քեզ տէրն աստուած քո։ Եւ մի՛ խոտորիցիս յաջ եւ մի՛ յահեակ։ Ընտ ամենայն ճանապարհին՝ զոր պատուիրեաց քեզ տէրն մեր գնալ։ զի հանգուցցէ զքեզ եւ բարի արասցէ քեզ»։ Բ։ Օրին։ Ե։ 32։ 33։ Տե՛ս՝ զի ՝ն ինքնին եցոյց զայս ուղիղ ճանապարհ Յեսուայ որդւոյ Նաւեայ։ հրամայելով նմա։ այսպէս։ «Այդ զօրացի՛ր եւ քաջ լեր յոյժ։ պահել եւ առնել ըստ ամենայն օրինացն որպէս պատուիրեաց քեզ մովսէս ծառայ իմ։ Եւ մի՛ խոտորիցիս 'ի նոցանէ յաջ կամ յահեակ։ զի խելամուտ լիցիս ամենայնի զի՛նչ եւ գործեսցես։ Այլ մի՛ մերժեսցես զգիր օրինացս այսոցիկ 'ի բերանոյ քումմէ։ Եւ խոկասցես 'ի դա՝ 'ի տուէ եւ 'ի գիշերի՝ զի իմասցիս առնել զամենայն գրեալսդ 'ի դմա։ Եւ ապա յաջողեսցես եւ ուղղեսցես զճանապարհս քո։ Եւ ապա խելամուտ լինիցիս»։ Յեսու։ Ա։ 7։ 8։ Զ՝նոյն ուղիղ ճանապարհ խրատէ զմեզ իմաստնացեալն յայ Սողոմոն ուղնել անսայթաք։ «Որդեակ իմոյ իմաստութեան անսա։ Եւ իմոց բանից մատո զուն՝ն քո։ Զի մի պակասեսցին աղբիւրք քո։ պահեա՛ զնոսա 'ի սրտի քում։ Քանզի կեանք են՝ որոց գտանեն զնոսա։ Եւ առ մարմնոյ՝ բժշկութի։ Ամենայն պահպանութեամբ պահեա՛ զսիրտ քո։ զի 'ի սոցանէ

էն էլք կենայ։ Ի բայ արա 'ի քէն զբերան կամակոր. և զշրթունս անիրաւս մերժեա 'ի քէն։ Աչք քո ուղիղ հայեսցին. և արտևանունք քո արդար ակնարկեսցեն։ Շաւիղս ուղիղս ա-ռասցես ոտից քոց. և զճանապարհս քո ուղղեսցես։ Մի՛ խոտորեսցիս յաջ՝ և մի՛ յահեակ. դարձո՛ զոտն քո 'ի ճանապարհէ չարէ. զի զճանապարհս որ յաջմէ են՝ գիտէ Տէր. Թիւրք են ճանապարհք՝ որք 'ի ձախմէ են։։ Առակ. գ. 20. 27։ Ու երջանիկ մարդարէն Դաւիթ գիտելով զվտանգաւորն և զդիւրախաբ վիճակս կենցաղավարութեան երիտասարդաց, խորհէր 'ի սիրտս իւր եթէ որով լինի հնար նոցա յուղիղն ընթանալ ճանապարհ առաքինութեան և հեռի մնալ 'ի մոլար և 'ի թիւրաթէք գնացից. վասն առ Տէր Աստուած աղաղակէր.։։Ի՞նչ ուղղեսցէ երիտասարդ զճանապարհս իւր՝ այլ 'ի պահել զբանս քոյ։։ Ընդ սմին յարակցէ և զաղերս և զանդրուածս վասն անձին իւրոյ առ Աստուած և 'ի խրատ ճշմարտաշատից։։Ողորմով սրտիւ իմով խնդրեցի զքեզ. մի՛ մերժեր զիս 'ի պատուիրանաց քոց։ Ի սրտի իմում թագուցի զբանս քո, որպէս զի մի՛ մեղայց քեզ։։ Սաղմ. ճԺը. 9. 13։

Որինակ լեցի մեզ առատանօր այրն Աստուածայն Նեղբինին. զորմէ ասի 'ի գործս առաքելոց.

զի էր այր ընթերցասէր սուրբ գրոց և մարգա-
բէականաց։ և ըստ Ակերբերանին, զնոյն գանձել
ցանկայր հանապազօր 'ի սրտի իւրում։ Այլ
մինչ յաւուրս միում եկն յերուսաղէմ երկր-
պագանել տեառն 'ի տաճարին։ և 'ի կառս իւ-
րում անդէն ըստ սովորութեան ընթեռնոյր
զմարգարէութիւն Եսայեայ։ աղդեցութիւն եղև առ
Փիլիպպոս 'ի հոգւոյն սրբոյ զայս օրինակ։ «Ա՛ա-
տիր՝ և յարեաց 'ի կառսդ յայդոսիկ։ որ և
մատեաւ, և լսէր՝ զի ընթեռնոյր զԵսայի մար-
գարէն, և ասէ, գիտիցես արդեօք՝ զոր ընթեռ-
նուցուսդ։ Այլ նա ասէ՝ զիարդ կարիցեմ, թէ
ոչ առաջնորդեսցէ ինձ։ և աղաչէց զՓիլիպ-
պոս երանելի նստել ընդ նմա։ Այլ գլուխ գրոյն՝
զոր ընթեռնոյր՝ էր այս։ իբրև զոչխար 'ի սպանդ
վարեցաւ, և իբրև զոր ոչ առաջի կտրչի անմ-
ռունչ, այնպէս ոչ բանայ զբերան իւր։ Ի խո-
նարհութեան նորա դատաստան նորա բարձաւ,
և զազգատոհմն նորա ո՞ պատմեսցէ։ զի բառնին
յերկրէ կեանք նորա։ Եսայ. ծգ. ७։ Պատասխանի
ետ նեռքինին Փիլիպպոսի, և ասէ, աղաչեմ զք-
քեզ՝ վասն ո՞յր ասէ մարգարէն զայս։ վասն ի՞ւր,
եթէ վասն այլոյ ուրուք։ Յայնժամ եբաց
զբերան իւր սրբազան Աւետարանն և մեկնաբա-
նելով զնորհրդական միտս մարգարէական գր-

ըոյն քարոզեաց նմա զխորհուրդ մարդեղութեանն և փրկարար տնօրէնութեան առեաւն մերոյ Յի՛սուսի Քրիստոսի. որով բացաւ նմա Հանապարհ երանելւոյ շնորհաց քրիստոսական հաւատոյ, և դուռն երկնից արքայութեան։ Այս հասեալ երկոցունցն 'ի ջուր լինէր ասէ Ներքինին, ահա՛ ջուր՝ զի՞նչ արգելու զիս 'ի մկրտելոյ։ Այս փիլիպպոս ասէ ցնա. եթէ հաւատաս բոլորով սրտիւ քով՝ մարթէ. նոյն ժամայն պատասխանի էառ Ներքինին ուղիղ խոստովանութեամբ և ամ ջերմեռանդութեամբ սրտի, և ասէ։ Հաւատամ եթէ Յիսուս Քրիստոս է որդի աստուծոյ։ Այս հրամայեաց կացուցանել զկառն, և իջին երկոքեան 'ի ջուրն՝ Փիլիպպոս և Ներքինին, և մկրտեաց զնա։ Այս իբրև ելին 'ի ջրոյ անտի՝ Հոգին սուրբ էկն 'ի վերայ Ներքինոյն։ Գործ. Ը. 27 — 29։

Տեսանե՞ս որչափ հոգեշահ արդիւնաւորութիւն ունին ընթերցանութիւնք մտաւորութեամբ ի մասանց սուրբ գրոց. վասն որոյ հրամայէ Աշխարհիս վարդապետն և փրկիչն Յի՛սուս ապերախտ ազգին հրէից. «Քննեցէ՛ք զգիրս. զի դուք համարիք նոքօք ունել զկեանս յաւիտենականս. և նոքին իսկ են՝ որ վկայեն վասն իմ, որովք հա-

մարիք ունել կեանս. և դուք ոչ կամիք գալ առ ինձ՝ զի զկեանսն ունիցիք։։ Յով. Ե. 39. 40։ Այսպէս սոյնպէս պատասխանի ետ և առն այնմիկ. որ եկեալ առ նա ասէր. ։։Վարդապետ բարի՝ զի՞նչ բարի գործեցից՝ զի ընդունիցիմ զկեանս յաւիտենականս։։ Մաթ. ԺԹ. 16։ Յայնժամ եցոյց նմա Յիսուս Վերստոյս Վերկիչ մեր զուշիշ ճանապարհն ժառանգութեան յաւիտենական կենաց, հրամայելով. ։։Օ՛ի հարցանես զիս զբարւոյ. մի է բարի. եթէ կամիս՝ ի կեանս յաւիտենականս մտանել՝ պահեա զպատուիրանսն։։ Անդ. ԺԹ. 17։ Նոյն յուշիշ ճանապարհէն ճծային օրինաց՝ կամակոր մոլորելոցն ասէ՝ Զարդուկեցուց. տէս զմրպիսի յանդիմանութիւն ետ տէրն մեր արդարադատ, յասէն. ։։Մոլորեալք՝ ոչ գիտէք զգիրս և ոչ զզօրութիւն՝ այս։։ Մարկ. ԺԲ. 29։

Յաղագս այսոցիկ սուրբ գրոց խրատէ սրբազան առաքեալն Պօղոս զսիրելի աշակերտն իւր զՏիմոթէոս. զի անշարժ և հաստատուն կացցէ ի ճշմարիտ ուսման իւրում. գրելովն. ։։Ա՛յլ մարդք չարք և կախարդք յառաջ եկեսցեն ի չար անդր. մոլորեալք և մոլորեցուցանիցեն։ Ա՛յլ դու հաստատուն կաց՝ յոր ուսարդ, և հաւատարիմ եղեր. գիտես ուստի ուսար. զի

'ի մանկութենէ զգիրս սուրբս գիտէս, որ կա-
րող են իմաստուն առնել զքեզ 'ի փրկութիւն՝
'ի ձեռն հաւատոցն որ 'ի Քրիստոս Յիսուս։ Ամ-
գիրք աստուածունչք և օգտակարք, 'ի վարդապե-
տութիւն են, և յանդիմանութիւն և յուղ-
ղութիւն և 'ի խրատ արդարութեան. զի կա-
տարեալ լիցի մարդն աստ յամ գործս բարու՛ն
հաստատեալ»։ Բ. Տիմ. գ. 13 — 17։

Ամսանօր մտադիր լիցուք հոգեբուղխ քարո-
զութեան սրբոյ հօրն մերոյ Գրիգորի լուսաւոր-
չին որ ասէ. «Ուսումն վարդապետութեան խր-
ատէ զմեզ յուղղութի՛ւն. որոշէ զլաւն 'ի վատ-
թարէն. և պահէ զարբուի՛ ըստ օրինացն արդա-
րութեան և ըստ աւետարանական վարդապե-
տութեանն. լուսաւորեալ խորհրդով և բա-
նիւ և գործով։ Ամ. յլև վկայութիւնք լաւու՛ն
նորա մտերիմք են անձնիշխանական կամաց 'ի
վարդապետութի՛ն հոգւոյն սրբոյ. որ 'ի ձեռն մար-
գարէից և առաքելոց և վարդապետաց գրովք
աւանդեցան մեզ. զի ծանիցուք զաստ. զերախ-
տաւորն, զարդարն, զբաբերարն, զսրբն, զճշմա-
րիտն»։ Յաստ ամ. ը։

Ըստ սմին քարոզուա՛ն գրէ Երանելի սուրբ
վարդապետն մեր Յովհան Ծորոնեցի. «Քան-
զի դուռն և մուտ 'ի կեանսն է օրինաց պահ-

պանուի ։ զամ ։ թէ արասցես զայս՝ կեցցես ո՞ քոջ ։ և Դաւիթ թէ՝ ծառայ քո պահեսցէ զայս ։ և ՚ի պահել նը զհատուցումն բազում ։։ ։ ՚ի Մէջ ։ Մաթ ։ ԺԸ ։ 18։

Յոդորոյ ։

Աստանօր յորդորիցուք յաւէտ յերանաւէտ ճծային բանից կենարարին մերոյ Յիսուսի ։ զոր ետ ասել սիրելի աշակերտաց իւրոց ։ որք սրտի մտօք աւետարանական շնորհաշէղ վարդապետութիւն երկնաւոր վըդծեալին մերոյ գանձել ՚ի սիրտս իւրեանց արժանացան այսմ ամենացանկալի երանութեան ։։ Երանի՛ է սգացդ՝ զի տեսանեն ։ և ակնջացդ ձերոց՝ զի լսեն ։։ Մաթ ։ ԺԺ ։ 16։ ։։Ո՛չ զմարմնաւոր տեսանելեացս և զլսելեացս ասէ ։ այլ զհոգւոյն աչացն և զսրտին լսելեացն ։ քանզի երևելի աչօք ։ վիարիսեցիք և հրեայք տեսին զՔրիստոս և զճայն նորա լուան ։ բայց ո՛չ հաւատացին ։ ապա ուրեմն երանէ զաչս և զականջս ։ զի այնպէս տեսանէին զՔրիստոս իբրև զորդի աստուծոյ ։ և որպէս պատշաճ էր լսել որպէս որդւոյն Աստուծոյ ։ այնպէս լսէին։։ Ծորիոբեցի ։ ՚ի Դէյ ։ Մաթ ։ ԺԺ ։ 16։ Զոկ ապերախտ խստասիրտ ազգն խորայէլացւոյ տեսա-

նեալով տեսին զփրկագործ տնօրէնութի փրկչին մերոյ Յիսուսի։ բայց կամաւ կախուցին զաչս հոգւոյ իւրեանց լուան զկենսաբուղխս աւետարանական Աշմարիտ վարդապետութիւնս ամենաքաղցր խրատուց և յորդորանաց ամենափրկչին։ բայց անձամբ իսկ կամակոր մոլորեալք խցին զականջս իւրեանց։ 'ի վերայ այսր կատարեցաւ հաւատի բան Եսայեայ մարգարէին։ «Ականջեալ լուիջիք՝ և մի՛ իմացջիք։ և տեսանելով տեսջիք, և մի՛ գիտասջիք։ Զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանդ այդորիկ։ և ականջքն իւրեանց ծանրունեան լուան և զաչս իւրեանց կախուցին։ զի մի՛ երբէք տեսանիցեն աչքք։ և լուիցեն ականջք։ և իմասցեն սրտիւք»։ Եսայ։ Ղ։ 9։ «Զի հաւաստութեամբ ամբաստանէ զնոցանէ մարգարէն՝ ասէ։ քանզի չ'ասաց թէ չ'տեսանէք՝ այլ թէ տեսանէք և ոչ տեսանէք, այսինքն՝ մարմնով միայն՝ և ոչ հոգւով, կամ տեսեալ՝ չ'տեսանիցէք, քանզի անձամբ իսկ զանձանց խցին զականջս, և կախուցին զաչս, և թանձրացուցին զսիրտս իւրեանց, որպէս վասն կամ սալ դարբնի։ և ոչ միայն չ'լսել կամէին։ այլև ծանրունեալս լսէին, այսինքն՝ դժուարանային 'ի լուրն։ և զայս հրաման։ Այսինքն։ զի մի՛ դարձցին և թողցի յաշխարհի չարեաց նոցա։ որով յայտ է

թէ՝ կամաւ և յօժարութեամբ սրտի խուսա-
փեցին, քանզի թէ կամեցեալ էին՝ մարթ էր
դառնալ և բժշկութիւն ընդունիլ 'ի ձեռն
ապաշխարութեան։։ Ծործոր 'ի Մէկ. Մաթ. ԺԳ. 15. 16։
Յաղագս որոյ լուր և սրբազան առաքելոցս
Պօղոսի և Յակոբայ, որք յորդորական խրատս
աւանդէն Ճշմարիտ հաւատացելոց բանին կենաց։
։։Զ ի ոչ եթէ որ լսելիք օրինացն են՝ արդարա-
ցեալ են առաջի աստուծոյ, այլ առնելիք օրի-
նացն արդարացին։։։ Հռոմ. Բ. 13։ ։։Ի ննիջիք
առնելիք բանին, և մի լսելիք միայն համարիջիք
զանձինս։ Զ ի թէ որ լսող միայն ի՛ցէ բանին՝
և ոչ առնելի. նման է նա մարդոյ, որ պշուցեալ
հայիցի ի երեսս իւր՝ որ ծնանիցին 'ի հայելւոջ։
Զ ի հայեցեալ ետես զինքն՝ և զանց արար, և
անդէն մոռացաւ թէ որպիսի ոք էր։ Իսկ որ
յառեալ 'ի կատարեալ օրէնս ազատութեանն
հայիցի և 'ի նմին կացցէ, ոչ եղև նա լսող մո-
ռացութեան՝ այլ առնելիք գործոյն. նա՝ յառ-
նելն իւրում լիցի երանելի։։։ Յակ. Ա. 22—25։
։։Զ ի էն սոքա ընթերցուածք ՀԾ-ային գրոց.
Ճշմարտապէս գանձք և անխաբ մեծութիւն։
Զ ի որք հարեալ էն 'ի սէր սոցա և Ճարակեալք
'ի պտղոյն քաղցրութեան, ոչ յագին ինչանել
'ի խորսն գտանել զամբարեալն 'ի նոսա գեղեց-

կուրթիւն։ Մանաւանդ եթէ զհոգին ևս ա-
ռաջնորդ ունիցին բանալ զդրուռնն և յուցա-
նել զանյայտսն։» • Սրբ • Նորհ • 'ի Մեկն • Յակ • ա •
21 • ՃՈ • Է։

Գ. Լ Ո Ի Ս Թ.

Լուսաշաւիղ Ճանապարհին ՅԾային օրինաց
և պատուիրանաց աւետարանական Ճշմարտուե-
պարտին միշտ ուսուցիչ և քարոզիչ հանդիսա-
նալ եկեղեցական հոգևոր պաշտօնեայք • այս է՝
Եպիսկոպոսք • Վարդապետք • Քահանայք և
ամ Ընդաջնորդք • որպէս էին երջանիկ Մարգա-
րէն • սրբազան առաքեալք և նախնի շնորհալի
սուրբ հարք մեր Ակնեղեցւոյ։ Տես՝ որպէս մար-
գարէն Սամուէլ զիւր հոգևոր պաշտօնն հան-
դիսացուցանէ առ ժողովուրդս իւր՝ ուսուցա-
նելովն։ «Զառայեցէք Տէրն յամ սրտի ձերմէ.
և մի՛ երթայցէք զհետ ոչնչիցն • որք զոչինչ վնաս
ուրեն • և ոչ փրկեն • քանզի չէն ՅԾք։ Զի ոչ մեր-
ժեսցէ տէր զժողովուրդ իւր վասն անուան իւրոյ
մեծի • զի հեղուաք հաւ զձեզ տէր իւր ժողո-
վուրդ։ Զու ինձ քաւ լիցի մեղանչել տէն • հեղգաչ
առ 'ի չ'առնելոյ աղօթս վասն ձեր • և ցուցից
ձեզ զճանապարհն զբարի և զուղիղ։» • • Թագ •
ԺԲ • 21— 23։ Ի վերուստ անտի յաստուածային

աշդէցուԹԷնէ հրաման ընդունի մարգարէն Յսայի բարձրաձայն քարոզել ըստ կարևորուԹեան պաշտօնի իւրում։։ Պոչեա՛ զօրուԹեամբ։ և մի՛ խնայէր։ բարձրացո՛ իբրև փողոյ զբարբառ քո։ պատմեա՛ Ժողովրդեան իմոյ զմեղս նոցա։ և տանն Յակովբայ զանօրէնուԹիւնս նոցա։ Զ։ Զիս օրըստօրէ խնդրեն՝ և ճանաչել զճանապարհս իմ՝ ցանկան՝ իբրև Ժողովրդեան՝ որոյ զարդարուԹիւն գործեալ իցէ։ և զկրաւունս աստուծոյ իւրոյ չ'ելցէ Թողեալ։ արդ էկեալ խնդրեն զկրաւունս արդարուԹեան։ կարօտին մերձենալ առ աստուա՛ծ։։ Եսայ։ ԽԸ։ 1 — 3։ Յառ մարգարէն Յրեմեայ լինի սոյն օրինակ աստուածային անհրաժեշտ պատգամ։ զի առանց կասելոյ յետս 'ի պաշտօնէն։ անվէհեր քարոզեսցէ։ որպէս ինքնին խոստովանի։։ Յե՛ եղև բան տեառն առիս՝ և ասէ։ Ո՞՝ինչչև ստեղծեալ էր զքեզ յորովայնի։ գիտեմ զքեզ։ և մինչչև ելեալ էիր յարգանդէ։ սրբեցի զքեզ։ մարգարէ՛ի հեթանոսս եդի զքեզ։ Յե՛ ասեմ՝ որ Եսդ տէ՛ր տէ՛ր։ ահաւասիկ խօսիլ իսկ ո՛չ գիտեմ։ զի մանուկ եմ ես։ Յե՛ ասէ ցիս տէր։ մի՛ ասեր թէ մանուկ եմ ես։ զի առ ամենեսեան՝ առորս առաքեցիս զքեզ՝ երթիցես և ըստ ամենայնի՝ զոր հրամայեմ պատուիրեցիս քեզ՝ խօսեսցիս։

Սկ՝ երկիցս յերեսաց նոցա՝ զի ես ընդ քեզեմ
՝ի փրկել զքեզ՝ ասէ տէր։ Երէ։ ա։ 4—8։
Լուր և զանխուսափելի հրամանն աստուա-
ծային առ մարգարէն Եզեկիէլ։ «Եւ դու
որդի մարդոյ՝ դէտ ետուս զքեզ տանդ իսրա-
յէլի։ և լուիցես բանից բերանոյ իմոյ։ զգուշա-
ցուսցես զնոսա ի բերէ։ յինէն։ Յասել ինձ ցմե-
զաւորն՝ թէ մահու մեռանիցիս։ և դու ոչ խո-
սիցիս զգուշացուցանել զամբարիշտն ՝ի ճանա-
պարհէ իւրմէ։ ինքն անօրէնն յանօրէնութեան
իւրում մեռցի՝ և զարիւն նորա ՝ի ձեռաց քոց
խնդրեցից։ Եպա թէ դու յառաջագոյն պատ-
մեսցես ամբարշտին զճանապարհս իւր դառնալ
նմա ՝ի նմանէ։ և ոչ դարձցի ՝ի ճանապարհէ
իւրմէ։ ինքն՝ յանօրէնութեան իւրում մեռցի։
և դու զանձն քո ապրեցուսցես»։ Եզէ։ գ։ 7—9։
Տես հոգեւնուագ մարգարէն Դաւիթ զամենա-
զօր կարողութիւն և գործութիւն սուրբ
հոգւոյն աստուծոյ ջերմեռանդն հոգւով խնդ-
րէ՝ անմեկնելի ՝ի նա՝ յինքեանէ։ որով կարող լի-
նիցի զհոգևոր պաշտօն իւր կատարել։ անխոնջ
ուսուցանելով զճանապարհս օրինաց և պատուի-
րանաց աստուածային բարերար կամաց։ «Սկ
ընկենուր զիս տէր յերեսաց քոց։ և զհոգի քո
սուրբ մի՝ հաներ յինէն։ Տուր ինձ ցնծութիւն

փրկութեան քոյ։ և հոգւով պետութեան քո հաստատեա զնս։ Ուսուցից անօրինաց զճանապարհս քո։ և ամբարիշտք առ քեզ դարձցին։։ Սաղ։ ծ։ 13—16։ Լուր երջանիկ մարգարէին Մաղաքեայ։ որ յայտնի առնէ զկարևոր պաշտօնն քահանայից։ յասելն։ «Շրթունք քահանային զգուշասցին գիտուել։ և օրէնս խնդրեսցին ի բերանոյ նորա։ զի հրեշտակ տեառն ամենակալի է։։ Բ։ 7։ Լիովերայ այսր բանի գրէ սուրբն Կիրսէս լամբրոնացի։ «Հարկ կայ ասէ ի վերայ քահանային։ զգուշանալ առ ի յամբարել և դնել ի սիրտս իւր՝ ի ներքոյ սեմոց շրթանց իւրոց զգիտուելի օրինացն այ։ Էր վասն։ քանզի օրէնք խնդրէ ի բերանոյ նորա ամենայն մարդ։ և նորա բարբառն սահմանէ ի մէջ նոցա զնատրուելի բարւոյ և չարի։ այնու՝ զի նա միայն է ի մէջ նց հրեշտակ այ։ Որդորպէս հրեշտակ արքայի ի մէջ քաղաքի կարէ զամ ինչ օրինադրել բանիւ թագաւորին՝ զոր կրէ ի սիրտ իւր։ այսպէս և քահանայն հրեշտակ է յայ առ ժողովուրդս իւր։ վասն այսորիկ օրէնս խնդրեն ամենեքեան ի բերանոյ նր։ իսկ նա կարէ զամ ինչ ուղղել ըստ կամացն այ՝ հնազանդութեամբ խնդրողացն։ յաղագս այսր հարկ կայ ի վերայ նորա զգուշութիւն պահել ի ներքոյ շրթանց իւրոց զամ գիտուելի։

զի յորժամ խնդրեսցեն՝ բացեալ զբերան իւր պարգևեսցէ նոցա զօրէնս Թագաւորին իւրոյ այլ որպէս հաւատարիմ հրեշտակ։ Իսկ ապա Թէ ոչ ունի զգիտուն՝ յորժամ խնդրեն ի նմանէ զօրէնս այլ տայ նոցա զայն ինչ՝ որ հեռի է ի կամացն այլ և գտանի ամենեցուն՝ զորս մոլորեցոյց պարտապան արեան։ որպէս ասացաւ զարիւն նորա ի ձեռաց քոց խնդրեցից։։ Ի՛ն. Պաղտ. երկ. 233։ Տե՛ս որպէս սքեղն առաքեալն Պօղոս զիւր ա-ռաքելական պաշտօնին անհրաժեշտ կարևորութի՛ յանդիման կացուցանէ հաւատացելոց. յասելն. ։։Օ՜ի եթէ աւետարանեմ՝ ոչ ինչ են ինձ պարծանք՝ քանզի հարկ ի՛ վրա՛ կայ. բայց վայ է ինձ՝ եթէ ոչ աւետարանեմ։ Եթէ կամաւ զայն առնեմ՝ վարձք են ինձ. և եթէ ակամայ տնտեսութի՛ յանձնեալ ինձ։։ ա. Կորն. Բ. 16. 17։ Այնպէս և սրբազան առաքեալն՝ ոչ միայն զիւրն պաշտօնիութիւն ընուլ՝ այլ և հաւատարիմ Տիմոթէոս աշակերտին իւր տայր քաջալերութի՛՝ ուսուցանել զՔրիստոսն փրկուելոյ աւետարանին ճշմարտութի՛։։ Այլ դու որդեակ իմ՝ զօրացիր շնորհքն՝ որ ի քո՛ յա՛։ Եւ զոր լսեար յինէն բազում վկայիւք զայն աւանդեսցես հաւատարիմ մարդոց՝ որք բաւական իցեն և զայլս ուսուցանել։ Համակի՛ց լեր իբրև զբարւոք զինուորք քո՛ի յա՛։ Ո՛չ ոք զինուո-

բեալ աստէն ընդ կեանս աշխարհիս պատաղի, եթէ զօրավարին Հաճոյ լինիցի։ Այլ եթէ մարտիկ ոք ինչ ո՛չ պակի՝ եթէ ո՛չ ըստ օրինին մարտիցէ։ Այլ հողագործին աշխատելոյ պարտ է նախ ՚իպտղոյն վայելել։ Եմա՛ զի՞նչ ասեմն, տացէ քեզ տէր իմաստութի՛ յաւմ։ . . Փութասցի՛ր զանձրն քո ընտիր կացուցանել առաջի այ, մշակ առանց ամօթոյ, ուղիղ համառօտել զբանն ճշմարտութեանն։ Բ. Տիմ. Բ. 1—15։

Զոր՝ աստանօր եկեղեցական հոգևոր պաշտօնեայք՝ ի միտ առցեն զիսրատական բան սրբոյն առաքելոյն Պետրոսի, որով ո՛չ միայն զհոգևոր հովուութեն նոցին զպաշտօն յայտ առնէ, այլ և հարկեցուցանէ՝ զբանաւոր հօտս քո՝ ՚ի դաշտ վայրս ճշմարտին պատուիրանաց արածել, և՚ի կենդանարար վարդապետութիւն քո փրկչին մերոյ՝ իբրև ՚ի ջուրս հանգստեան՝ սնուցանել, և ՚ի սբ եկեղեցւոջ, իբրու ՚ի փարախն ժողովել, որով համապատիւ առաքելոցն հանդիսանան և հաղորդ ճշմարտին յաւիտենական փառաց և երանութեանն լինին, ըստ այնմ։ ,, Զ. Երիցուն՝ այսուհետև աղաչեմ՝ իբրև երիցակից՝ և վկայ չարչարանաց քոց, որև հանդերձեալ փառացն յայտնելոյ հաղորդ։ Արածեցէ՛ք՝ որ ՚ի ձեզ հօտդ է այ, վերակացու լինելՔ՝ մի՛ իբրև ակամայ՝ այլ կամաւ ըստ այ, մի՛

զշաքաղուբ՝այլ յօժարուբ։ Մ'իբրև տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին։ Զ'ի յերբեւիլ հովուապետին ընդունիջիք զանթառամ փառս պսակ,, ա.պետ. է. 1—4։ ,,Յամ պատուիրանս այ՝ կամաւոր գործելն է գովուբ արժանաւոր և մեծաց վարձուց առիթ։ Իսկ ակամայն ընդ բամբասանօքն յաճախինսն՝ նմանապէս և 'ի մարդկայինսն։ Ա'յս և ամ իսկ չ'կամի զոք ակամայ և բռնադատելով ծառայել իւրն։ այլ զկամաւորն խնդրէ։ Ա'յորմէ աղաչաւ ամենայն ուրեք զպատուիրանն իւր յարակցէ՝ և 'ի կամն լսողքն ապաստան առնէ զառնելն և զոչն։ Ա'մին իրի և աստ զնոյն զկամաւորն պահանջէ յառաջնորդացն զվերակացութիւն հօտիցն։ Իսկ զակամայն խոտեալ արհամարէ։ Որմէն վասն ասէ. Մ'ի ակամայ, այլ կամաւ ըստ աստուծոյ. Զ'այս և Պօղոս զանձնէ ասէ. Եթէ կամաւ աւետարանեմ՝ վարձք են ինձ և եթէ ակամայ՝ տնտեսութիւն յանձնէ ինձ։

Տեսանեմ զի 'ի կամաւորն եւ զարիտուր վարձուցն հատուցումն և ոչ յակամայն։ Իսկ ըստ աստուծոյ ասելն՝ այնէ, եթէ զոր աստուած կամի և խնդրէ 'ի ձէնջ՝ կամաւորն է և ոչ ակամայն։ Զ'ի զոր զօրինակ ինքն ած ոչ ակամայ և 'ի հարկէ յանձն արար ձեզ զհօտ իւր, այլ

կամաւորաբար։ և 'ի վերայ այնոցիկ խնամարկէ հօտին և յանձանձէ և պահպանէ յամենայն վնասակարաց։ 'Լմանապէս խնդրէ և 'ի ձէնջ զվերակացուն։ Այլ զօշաքաղուբ։ այլ յօժարութեամբ։ Օշաքաղութիւն 'ի բազում իրս առադրի։ Բայց յայտնի տեսակաւ՝ սակս ինչս ժողովելոյ ասել և ըստ մտաց դիւրի շրջելոյ ի մանալ զանն ոչ ինչ վրիպեցուցանէ 'ի ճշմարտութենէ։ Օ. ի յայսպիսի չարիս անկանիլ առն վերակացուն և վարդապետի՝ առաւել ինն զեղծէ զնա յերկնաւոր կոչմանէն։ Ա. սան զի զնրի առեալ շնորհսն՝ վաճառականութեամբ մատակարարել և տալ՝ ոչ է առանց բամբասանաց։ այլ 'ի նեբբոյ անկեալ կայ պատուիրանաւն։ ասելով՝ ակրուենական աւանդուեցն զոր աւանդեաց իւրոց աշակերտացն ասելով՝ ձրի առէք և ձրի առաք։։ Սարգ։ Էնոր։ 'ի գլխ։ ա։ գլա։ ճառ։ գ։։

Օ. այս ամենայն պարուենակեալ տեսանեմք 'ի խրատական բանս առաքելապատիւ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի լուսաւորչի։ որ գրէ առ դասս հոգևոր պաշտօնէից։։ Գրել ձեզ և ուսուցանել կամիմ եղբարք իմ և որդիք՝ զրս 'ի քրիստոս Ծնայ։ ա։ կորն։ դ։ 16։ Օ. ի որք յարգեն զանձինս իւրեանց 'ի գործս բարութեան և յուսումն ճշմարտութեան, ինքեանք իսկ պատրաս

տեսցին 'ի վերասակարացն, և պէսպէս հնարիւք առնել զբարիս խորհեսցին։ Որպէս զի օրինակ ճշմարտութեան եղիցին յառնելն և յուսուցանելն միշտ. և անխիղճ և անպատճառ իցեն առ հեռաւորս և առ մերձաւորս ըստ բանին տեառն։ Լուսաւոր եղիցի առէ՝ լոյս ձեր արդարութեան առաջի մարդկան։ որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս և փառաւորեսցեն զՀայրն ձեր երկնաւոր։ Մաթ. է. 16։ Եւ դարձեալ երանէ զծառայս՝ յորոց անուն օրհնի ինքն տէր և փառաւորի։ Ղուկ. ղ. 20։ Եւ վասնորոյ և եղուկ զայնոսիկ վարկանի. յորոց անուն տեառն հայհոյեսցի. Ղուկ. ղ. 20. — 24։ Հռովմ. բ. 24։

Զի որք լինին քարոզք ճշմարտութեան, ճշմարտութիւն ինքնին յարդարէ զնոսա անմոլար գիտութեամբն. Յովհ. ը. 32։ Եւ աստուած փառաւորի զնոսա յորժամ տեսանէ 'ի նոսա բարեգործութեան ջանս։ Զի զոր նոքայն տնկեն և սնուցանեն։ աստուած աճեցուցանէ և հասուստուտ աւետեաց կենացն. 'ի փառս և 'ի պարծանս նոցա 'ի տիեզերական ատենին 'ի յարութեան որ 'ի մեռելոց։ Եւ կարասցեն ասել ահա մեք և մանկունք մեր ճշմարտեալ. զորս տուաւ մեզ աստուած։ Եսայ. ը. 18։ Եւ պակեալ առաքինութիւնք՝ առնուն զգրաւականն խոստացեալ աւետ-

տեսցն քրիստոսի։ Զի որ արասցէ, ասէ, և ու-
սուսցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեանն երկ-
նից։ Մաթ։ է։ 19։ Զի սկսաւ ասել յա՞ առնել և
ուսուցանել մինչև։ յօրն յորում հանձնեաւ
յերկինս։ Գործ։ ա։ 1։ Իսկ որում հաւատացաւ վե-
րակացու՞ ժողովրդեց, և հեղգասցի՞ ինչ խնամն և
՝ի հոգևոր ուսումն և ՝ի խրատ, և ստուգա-
նիցէ, կամ ո՛չ տացէ զմարմնաւոր պէտս կարօ-
տելոց։ այլ ուտէ և ըմպէ անզգայաբար, յան-
կարծակի գայցէ ՝ի վերայ նոցա մահ։ յորում ա-
ւուր ակն ո՛չ ունիցի։ և հատուցանող բանն ՝ի
սուր։ Եբր։ դ։ 12։ ընդ մէջ կտրեսցէ զնա։ յինքն
առեալ զշնորհսն՝ որ ՝ի տեառնէ։ և զվատթարսն
ընդ անհաւատսն դիցէ ՝ի խաւարն արտաքին և
՝ի հուրն։ ուր լալ աջացէ և կրճտել ատա-
մանց։ Մաթ։ իդ։ 51։ Զի հաւատք ՝ի լսելոյ են
(ասէ առաքեալն։) և լուր՝ ՝ի բանէն քրիստոսի։ զի-
արդ հաւատան զոր ո՛չն ուսան։ և կամ զիարդ
աղաչեսցեն զոր ո՛չն գիտեն։ Հռովմ։ ժ։ 17։

Եւ առ մարգարէն Եզեկիէլ օրինակաւ
առ վերակացուս ասէ, դէտ կացուցի զքեզ ըզ-
գուշացիր անձինդ։ և զգուշացիր ժողովրդենդ։
և ասասցես ցանօրէնն երթէ մահու մեռցիս։
Եթէ ո՛չ զգուշացի և դարձցի խոստովանութիւն յա-
պաշխարութիւն, մեռցի զմեղացն մահ։ և դու

ապրեսցես ։ զի զգուշացուցեր յառաջագոյն։ Ապա եթէ զղջասցի և դարձցի խոստովանութիւն յապաշխարութիւն ։ կեալով կեցցէ զարդար կեանսն և մի մեռցի զմեղացն մահ ։ Ապա եթէ ոչ ըզգուշացուցեր նմա ։ նա ի մեղս իւր մեռցի ի պատուհաս ։ և զարիւն նորա ի ձեռաց քոց խնդրեցից ։ ասէ զայս ամենեցունց տէրն ։ եղէկ ։ է ։ 17 ։ Յաձախ ։ ձառ ։ էէ ։

Յորդորակ ։

Զունիմ ասասանօր զայլ ինչ բազում բանս յորդորակսն հանդիսացուցանել առաջի հոգևոր հովուացն Եկեղեցւոյ ։ զի ամենեքեան ի միտս ունին զայն տէրունական ամենաշնորհաքաջայորդոր բան ։ զոր ոչ միայն յառաքելոց անձինս ներգործեաց ։ այլև մինչև ցյաւիտեան ունի ներգործել յամ հոգևոր հովիւս և ի վարդապետս Աշխարհս ։ և բան կենարարին մերոյ Յեսի Քրիստի է այս ։ ։ Գնացէք այսուհետև՝ աշակերտեցէք զամ հեթանոսս ։ մկրտեցէք զնոսա յանուն Հօր՝ և Որդւոյ՝ և Հոգւոյն սրբոյ ։ Ուսուցէք նոցա պահել զամ՝ որ ինչ պատուիրեցի ձեզ ։ և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամ աւուրս ։ մինչև ի կատարած աշխար-

հի։։ Մաթ. իբ. 19. 20։ «Հանդի մեծամեծ հրամանս էառ նոցա։ այսու յորդորէ և քաջալերէ զմիտս նոցա՝ զոր իբր իշխանաբար խօսի ընդ նոսա թէ՝ ես ընդ ձեզ եմ. որով յայտ եղև թէ՝ առաջինքն վե զիջանելոյ ասացան ը նոսա։ Բայց գիտելի է թէ՝ ոչ ընդ նոսա միայն, այլև ընդ ամենեսեան, որք ընդ նոսա հաւատացին. քանզի ոչ է թէ մինչ ի վախճան կալոյց էին աշաքեալքն, այլ իբրև ընդ միոյ մարմնոյ խօսի ընդ նմա հաւատացեալսն. որպէս այլուր ասէր թէ՝ ոչ միայն վասն սոցա աղաչեմ, այլ վասն ամենայն հաւատացելոց բանիւն նոցա յիս. նոյնպէս և սոսա ասէ։ Հաւասիկ ես ընդ ձեզ եմ։ Յինքն՝ արագ նմա ուրեք հասանեմ, և զգժուարինս ի դիւրինս դարձուցանեմ, զի՝ Ուր երկու և երեք ժողովեալ են յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա. և ի հինն՝ մարգարէին ասէր, Դրեմիայի և Մովսիսի, թէ ընդ ձեզ եմ ի փրկել զձեզ. և թէ՝ ոչ թողից զձեզ, և ոչ ընդ վայր հարից։ Զի՝ ամ աւուրս ասէ մինչև ի կատարած աշխարհի։ Յսու մի խիթարէ թէ՝ ոչ ի ժամանակս ժամանակս, այլ յամ աւուրս և ի ժամս՝ մինչև ի կատարած յաւիտենից. միանգամայն և ի վախճանէն յիշեցուցանէ՝ զի և յոլովագոյնս յինքն ձը-

գեսցէ, զի մի՛ զանցաւորս իբրև զմնացականս
համարիցեն, այլ ՝ի հանդերձելոցն անսպառ բա-
րութիւնքն հայեսցին. վասն զի տրամականքս՝
զորս կրէ ոք ՝ի յանցաւոր աշխարհիս, լուծանի-
ցին որպէս զաշխարհս, և բարութիւնքն՝ զոր
վայելելոց է՝ անմահ մնասցեն ՝ի մեծի աւուրն
աներեկի, որ արդարոցն ցանկալի է և մեղաւո-
րացն սոսկալի. Յոհ. Ծորձոր. ՝ի Դէն. Մաթ. իբ. 20։
Այս՝ երանելի սրբազան առաքեալն Պօղոս՝ հե-
տևողն կենարարին մերոյ Յիսուսի Քրիստոսի
հրամանին, զպարտուպատշաճ կատարումն հո-
գևոր պաշտօնի յուցանելով, յորդորէ զպաշտօ-
նակիցս իւր, յասելն. «Զոր մեքն քարոզեմք.
և խրատեմք զամենայն մարդ՝ և ուսուցանեմք
զամենայն մարդ ամենայն հոգևոր իմաստութիւն.
զի կացուսցուք զամենայն մարդ կատարեալ ՝ի Քրիս-
տոս Յս։ Յորմէ և աշխատիմ պատերազմեալ ըստ
յաջողութեան նորա՝ որ յաջողել է յիս զօրու-
թեամբ». Կող. ա. 28. 29։ Վերջ տայ յորդո-
րական բանիցս նախահայրապետն մեր սբն Գրի-
գոր լուսաւորիչ. «Ամենայն դպիր աշակերտել
արքայութեանն աստուծոյ (ասէ տէր) նման է
առն տանուտեառն որ հանէ ՝ի գանձէ իւրմէ
զնորն և զհինն. Մաթ. ԺԳ. 52։

Տանուտէր անուանեաց զառաջնորդս Եկե-

ղեցւոյ զաշակերտեալսն ճշմարտութեան աւանդ-
դիցն. և գանձք՝ զիմաստ սրտին. որ 'ի հնոյն և
'ի նորոյս ունի ստուգութիւն. և վայելեցու-
ցանէ զմերձաւորս և զհեռաւորս բարի խորհր-
դովք և բարի գործովք և անարատ սրբութիւ։
Այլ զչար գանձուցն զմթերան արտաքս պեղէ.
մինչև ոչ մնասցէն նշխարքն չար գանձուց 'ի բա-
րի ուսմունսն. ընտրելով զլաւսն 'ի վատթարէն։
Ինքեանք ասէ օրինակ լիցին կացիւք և գնացիւք.
զի աշակերտէլքն յորդորեսցին 'ի ճշմարիտ վա-
րըս որք վատք են վարդապետաց. գնալ 'ի ճա-
նապարհս արդարոց և խորհել 'ի պատուիրանս
տեառն. և առաջնորդել 'ի լուսաւոր վարդա-
պետութեան վարս և յարդարութիւնս ամ։
Զի զամենեսեանսն ժառանգորդս արասցէ սր-
քայութեանն աստուծոյ. գործակից լինիլ կե-
նարար աւետարանական խրատուն. և մի' իւիք
զանց առնել ճշմարիտ աւանդիցն։ Զի եթէ
միով իւիք ինչ ասէ գթիցես, եղեր ամենայն
օրինացն պարտական. Յակ. Բ. 10։ Զի ճշմար-
տեալք հաւատով և սրբեալք 'ի խղճէ չարեաց,
միշտ մերձաւորք լիցին մարմնոյ և արեան տեառն.
'ի ներքին մարդն ընկալեալ զքրիստոս. որ լու-
սաւորէ զսուրբս անարատ և անբիծ երախտեօք
սուրբ սիրոյն. հոգևոր և մարմնաւոր դարմանօք

յամենաՀՐ Աստուածաբանին միշտ։ Իսկ յորժամ Քրիստոս յայտնեսցի կեանքն մեր (ասէ առաքեալն) յայնժամ և դուք ընդ նմա յայտնեսջիք փառաւք։ Կող։ գ։ դ։ Որպէս զի եղիցի մեզ ամենեցուն որ զգեցաք զՔրիստոս, ՀՇմարտեալ հաւատովք և առաքինասէր վարուք հաճոյանալ աստուծոյ և մերձենալ 'ի ըղձն անմատոյց։ և պայծառանալ 'ի փառացն Քրիստոսի յուսոյն մերոյ 'ի տիեզերական առեանին 'ի յարութեանն որ 'ի մեռելոց։ Յե փառաւորեսցուք զամենաշնորհ տէրութիւնն միշտ ընդ հրեշտակս յաւիտեանս յաւիտենից։ ամէն։ Յաճախ։ Ցաս։ ԺԷ։

Գ։ Լ՚Ոի։ Ի։

Արդ՝ ուսուցանեն մեզ սուրբ գիրք և բարոյական վարդապետութիւնք։ Եթէ բարձրագահ և պարագլուխ հանդիսանայ յամենայն առաքինութիւնս պանծալին արդարութիւն։ զի սա է՝ առաջին սկզբունք բարոյական վարուց։ «Ակիզբն ճանապարհի բարւոյ՝ առնել զարդարութիւն»։ Սաղ։ ԺԵ։ 3։ Սա է՝ որ ուղիղ զսքանչելի և զամենայանկարի տիպ ՀՇծանմանուն։ «Արդար է տէր՝ և զարդարութիւն սիրէ։ զուղղութիւն տեսանէն երեսք նորա»։ Սաղ։ Ժ։ 8։ Սա է՝ որ գիտէ և ու-

սուրյանէ խոտորիլ 'ի չարէն և առնել զբարին. Սաղ. Լ. 14։ Այս է՝ որ սիրելի որդի առնէ զմեզ հօր աստուծոյ ամենակալին և տայ վայելել 'ի նմանէ զշնորհս և զփառս որդեգրութեան մեր. «Օ՛ի եթէ գիտիցէք. եթէ արդար է նա, իմացէք՝ եթէ ամ՛ որ առնէ զարդարութի՛ւն՝ առ 'ի նմանէ է ծնեալ։ Այսուիկ յայտնի են 'ի միմեանց որդիք այ՝ և որդիք սատանայի։ Ամենայն որ ո՛չ առնէ զարդարութի՛ւն. չէ՛ նա յայ»։ Ա. Յովհ. Գ. 29։ Դ. 10։ Այս է՝ որ ամենայնի ամենայնակալն երանութեամբն յագեցուցանէ զհոգիս ստացողաց և հետեւողաց սմին. զոր խոստացաւ աստուած վերկիչ մեր հրամայելով, այսպէս. «Երանի՝ ոչ քաղցեալ և ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին»։ Մատ. Է. 6։

Խորհրդական բայատրութիւն սորին տայ երանելի հայրապետն մեր սուրբն Կիրեղոս շնորհալի, յասելն. «Չա՛ արդ՝ որ իցէ արդարութի՛ւն կերակուրն՝ որ յամենեսին ժամանէ և իբրև զսեղան առաջի կայ ամենայնի՝ որ քաղցնուն նմա, այն է՝ զոր ինքն ասաց, իմ կերակուր այն է՝ զի արարիցէ զկամն հօր իմոյ։ Ո՛չ միայն քաղցնուլ խնդրէ արդարութեան, այլ և ծարաւել։ Դայց զծարաւն յիշելով՝ ծայրագոյն ինն լինելով, զբարի ցանկութիւնն՝ բանս օրինադրէ. զի ծա-

բաւն առաւել ստիպէ զբնութիւն 'ի լրումն, քան զքաղցն. որպէս Դաւիթ փափագէր առ աստուած։ Եւ զքաղցուն յիշմամբ և ծարաւոյն՝ զփափագողն երկեակ իմաստասիրութեան երանէ բանն՝ գործով և բանիւ։ Քաղցն իբր թանձրագոյն իրի՝ զգործնական իմաստութեանն ուներով զօրինակ։ Իսկ ծարաւ յաղագս անօրագուներին նիւթոյ՝ զտեսականն։ Դարձեալ՝ է իմանալ մեզ արդարութիւն զնոյն ինքն զայն բան, զորմէ ասէն Պօղոս՝ որ եղև մեզ արդարութիւն և սրբութիւն ,,։ Ուր . էոր .'ի Դէպ՝ Մաթ.Է.6.Բարոյական իմաստասէրքդ սահմանեն զարդարութիւն յԸնչիսատեղէ առեալ։։Ընդարութիւն է ունակութիւն, որով յօժարի մարդ առ անիրաւ իր, եթէ առ առնել զնոսա, և եթէ 'ի կամել թէ արասցէ,,.Թէս.գիր.գլ.գլ.ա։

Այս իրաւամբ ըստ ճծային կամայ՝ իմաստուն, գտանել ցանկայր յաճահաճոյ յարդարութեան, մարգարէն Դաւիթ՝ առ անմոլար և յարատև ընթանալ զճանապարհն արդարութեան, և ատանալ զսքանչելի զօրութիւնս՝ և հասանել ճծապարգև երանութեան. «Այ սրտի մտօք աղաղակէր և հայցէր յայ։։ Ի ճանապարհս արդարութեանց քոց իմաստուն արա՝ զիս և քննեցիր զսքանչելիս քո,, Սաղ.ճգը.27։ Այս արդարութի

ուր գտանի և հանդիսանայ անդանօր ՅԾային
զօրութիւնն և սքանչելի նախախնամութիւնն
յայտնի. քանզի ուր ՅԾահաճոյ արդարութիւն
է՝ անդ չ'ելք վնասակարուն հոգւոյ և մարմնոյ.
այլ ազատութիւն 'ի չար պատահարաց, և ժա-
ռանգութիւն աստուածային շնորհաց և բարեաց.
«Սակս արդարութեան մարտիր վասն անձին քո.
և մինչև 'ի մահ ճգնեաց սակս արդարութեան.
և ՅԾ պատերազմի փոխանակ քո ընդ թշնամիս
քոյ» Սիրաչ. գ. 33։ «Պատուաւոր իմ առաքեաց
զՀրեշտակ իւր՝ և եխից զբերան առիւծուցս.
և ոչ ապականեցին զիս. առաջի նորա ուղղութի
գտաւ իմ»։ Դան. գ. 22։ Պա երանելիք են՝
որք ուղղութեամբ սրտի պահեն զկիրաւունս,
և ոչ երբէք խոտորին 'ի ճանապարհէն արդա-
րութեան ըստ հոգեւոր մարգարէին. «Երա-
նի՝ ոք պահեն զկիրաւունս, և առնեն զարդա-
րութիւն յամենայն ժամ»։ Սաղմ. ՃԷ. 3։

Ուրեմն վայ սոսկալի 'ի վերայ կայ՝ ո-
րոց 'ի բաց թողեալ զարդարութեան ճանա-
պարհն մոլորեալ ընթանան յանօրէնութիւնս,
յամբարշտութիւնս և յանիրաւութիւնս. որոց
վերնակ գրէ մարգարէն կայծակնամաքուր. «Վայ
այնոցիկ՝ ոք ձգեն զմեղս իւրեանց իբրև երկայն
պարանաւ, և իբրև լծոյ երնջոյ զանօրէնութիս...

Վայ այնոցիկ՝ որք ասիցեն զչարն բարի, և զբարին չար. որք դնիցեն զլոյսն խաւար, և զխաւարն լոյս. որք դնիցեն զդառն քաղցր, և զքաղցր դառն։ Վայ այնոցիկ՝ որք զանձինս առ իմաստուն ունիցին, և յաչս անձանց իւրեանց խորհրդականք։ ։ Որք արդարացուցանեն զամբարիշտսն վասն կաշառաց, և զիրաւունս գողանան զարդարոյն։ Վասն այնորիկ որպէս վառի եղեգն 'ի կայծականց հրոյ, այնպէս այրեսցին 'ի բորբոքելոյ բոցոյ. արմատ նոցա իբրև զմշեղ եղեցի և ծաղիկ նոցա իբրև զփոշի ելանիցէ։։ Եսայ. Է. 81 — 24։

Պատանեաց հարկ 'ի վերայ մեր կայ ճանաչել և գիտել զքանի՞ ինչ գլխաւորս արդարութեան, և զհակառակս նորին։ Այսպէս՝ պարտիմք ունել զարդարութի՞ առ ՝ն ընդդէմ անիրաւ և չարաչար մոլորութե՞ կռապաշտից, և խոստովանիլ սրտի մտօք, ուղղափառ հաւատով, եթէ մի է Ճշմարիտ աստուած Հայր, Որդի, և Սուրբ Հոգի, երեք անձնեայ աստուածութիւն. մի պարզ և եզական բնութիւն։։ Ինտասցես թէ տէր նա է աստուած. և չիք այլ որ բաց 'ի նմանէ։ Լսուր Իսրայէլ՝ Տէր աստուած մեր՝ տէր մի է։։ Բ. Օրէն. Դ. 35. Ղ. 4։ Մարկ. ԺԲ. 29։ ։։ Տէր սաբաւաթ. աստուած Իսրայէլի՝ որ նստիս 'ի քերովբ

բէս՝ դու ես միայն՝ ամենայն թագաւորութեան տիրակալ։ դու արարեր զերկիր և զերկին։ եսայ. ԼԷ։ 16։ «Այս են յաւիտենական կեանք, զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ աստուած՝ և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս։» Յով. ԺԷ։ 3։ «Օ՛ի թէպէտ և իցեն անուանեալ աստուածք...» Այլ մեզ մի է աստուած Հայր՝ յորմէ ամենայն, և մեք ի նա։ և մի տէր Յիսուս Քրիստոս՝ որով ամենայն, և մեք նովաւ։ Այլ ոչ յամենեսեան գիտութիւն է։ ոմանք առ խղճի մտաց մինչև ցայժմ զկուռսն իբրև զոհեալ ուտեն։ և խիղճ մտացն նոցա քանզի տկար է, պղծի։» ա. Կորն. Ը. 5 — 8։

Որդ լուր վկայութեանցս։ որով յայտնի քարոզի ամենասուրբ Երրորդութիւնն՝ երեք անձնեայ մի աստուածութիւն։ որ է մի բնութիւն։ մի իշխանութիւն։ մի էութիւն։ մի կամք և մի արարչագործ զօրութիւն՝ յերիս անձնաւորութիւս։ Ահա զայս ճշմարիտ խոստովանութիւն ունի ուղղափառ սուրբ Եկեղեցի մեր։ «Խոստովանիմք զամենասուրբ զԵրրորդութիւնն՝ զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, յերիս անձնաւորութիւս բաժանել, և ի մի բնութիւն և յաստուածութիւն ժողովեալ։ Հայր անծին և անսկիզբն յառաջքան զյաւիտեանս։ Որդի ծնեալ ի բնութենէ Հօր՝ անախտ և անմարմին նախքան զժամանակս։

Հոգին սուրբ բղխումն 'ի Հօրէ՝ ոչ ըստ որ-
դւոյ ծննդեամբ, այլ յառաջ եկեալ աղբիւ-
բաբար՝ ինքեան միայնոյ քննելի օրինակն և յա-
բարածոյ անգիտելի։ Այլ ոչ էր երբեմն Հայր՝
յորժամ՝ ոչ էր ընդ նմին Որդի և Հոգի։ այլ
որպէս Հայր՝ միշտ հայր և ոչ յետոյ ստացեալ
զանուն հայրութեան։ նոյնպէս և Որդի՝ միշտ
որդի ընդ հօր իւրոյ մշտնջենաւոր։ այսպէս և
Հոգին սուրբ՝ միշտ Հոգի ՈՅ։ անմեկնելի 'ի Հօրէ
և յՈրդւոյ։ մի էութիւն մի իշխանութիւն մի
կամք և մի արարչագործ զօրութիւն յերիս
անձնաւորութիւնս խմբեալ։ Ոչ մեծութի և ոչ
փոքրկութի։ ոչ բարձրութի և ոչ խոնարհութիւն,
ոչ առաւելութի և ոչ նուազութի։ այլ մի կարգ
մի պաշտօն մի երկրպագութի՝ որ Այրարդութե-
դաւանի։։ ՆԵՐ։ ԷՍՐԻ։ 'Ի ԲՂԽԻՆ ԱՍ ՈՒՂԻՍ։ ԴԵ ՊՈՍ-
ՊՈՍԳԱՊՈՍ։ ։։Այլ ասաց ՅԱԾ։ արասցուք մարդ
ըստ պատկերի մերում՝ և ըստ նմանութե։ և թէ։
Ոչ է բարւոք մարդոյդ միայն լինել։ արասցուք
դմա օգնական ըստ դմա։։։ ԾՆՆ։ ՄԱ։ 26։ Բ։ 18։
։։Հօր արարչի խորհուրդ 'ի մէջ եղեալ ընդ ա-
րարչակից որդւոյ և Հոգւոյ։ իբրև զևսորհուրդն
առաջին 'ի նախատեղծ մարդոյն։ զի որպէս
անդն ասաց։ թէ՝ արասցուք մարդ 'ի նմանութի
պատկերի կերպարանաց մերոյ։ և անդէն ստեղ-

ծեալ զաղամ 'ի կենդանութիւն, 'ի չգոյէն հաստատեցաւ։ 'Այն օրինակ և աստ ասացեալ հօր առ որդին և առ հոգին. ասէ՝ եկայք արասցուք ադամայ օգնական նման նմա. ըստ նմանութեան պատկերի իւրոյ և կերպարանաց,, . Գլուխ։ ,,Զի այն որ ասաց, բա Ընասցուք մարդ ըստ նմանութեան պատկերի. ապաքէն յայտ է թէ ընդ ուրեք որ առ նմա կայր, ասէ։ Եւ յայտնագոյն և սաղմոսարանն ցուցանէ։ 'Այս ասաց, և եղեն, ասէ՝ ինքն հրամայեց, և հաստատեցան,, . կէ։ ընդ. գ։ ,,Խորհեցար հայր անսկիզբն ընդ միածնի որդւոյ քո և ընդ կենդանարար սուրբ հոգւոյդ՝ և ասացեր, արասցուք մարդ ըստ պատկերի մերում՝ և ըստ նմանութեան,, . Մաշ. յաղօթ. պսակի։ ,,(Որ Ընասցուքն ըստ մերում՝ պատկերի) ասաց 'ի ձեռն յոգնական նշանակին՝ զոր Ընդորդուին ծանոյց,, . Գրիգ. Նիս. 'ի գիր. խոշ. մարդ։ ,,Ողորմութեամբ տեառն լի երկիր, և բանիւ տեառն երկինք հաստատեցան. և հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա,, . Սաղ. լբ. 4։ ,, Արդարութիւնքն յայտնեցին և թագուցանեցին։ Յայտնեցին բանիւք, և թագուցանեցին արդեամբք։ Զոր և մեծն Դաւիթ ծանուցեալ 'ի հոգւոյն, յայտնութեամբ զխոստովանութիւնն առաջի դնէ զերից անձանցն և

զմիոյ տէրութեան և զիշխանութեան։ Ի յայլ գոլով բանին։ Զշրմութեամբ տեառն լի եղև երկիր։ զայս հօր գնեմք։ Յե բանիւ տեառնէ երկինք հաստատեցան։ զայս անյերկուանալի որդւոյ գնեմք։ Յե հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա։ Տեսէք եթէ զիարդ զանազանեաց զդէմսն։ և 'ի միոյ գործոյ զմի տէրութիւն զեկոյցն։ Սարգ. Ներս. Ի՛ դիմ. ա. պէս. Ճառ. գ։ «Յե եղև յամին յորում մեռաւ Զկնա արքայ։ տեսի զտէր նստեալ յաթոռ բարձրութեան և վերացեալ։ և լի էր տունն փառօք։ Յե սերովբէք կային շուրջ զնովաւ։ վեց թևք միոյ՝ և վեց թևք միոյ։ երկուքն ծածկէին զերեսս իւրեանց։ և երկուքն ծածկէին զոտս իւրեանց։ և երկուքն թռուցեալք։ Աղաղակէին մի առ մի՝ և ասէին։ սո՛ սո՛ սո՛ տէր զօրութեանց՝ լի է ամենայն երկիր փառօք նորայ։ Եսայ. Ղ 1 — 4։» Զսան զի սուրբ է Հայր, սուրբ է որդին, սուրբ է և Հոգին սուրբ։ Ոչ այլ և այլ սրբութիւն ասացեալ։ այլ ծնեալ սուրբ որդին՝ և յառաջ եկեալ սուրբ Հոգին։ Զսա վկայութեան սերովբէիցն, երիցս սուրբ ասէլով և մի տէր։» Սարգ. Ներս. Ի՛ դիմ. ա. պէս. Ճառ. ա։ «Յե իբրև մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի 'ի ջրոյ անտի։ և ահա՛ բացան նմա երկինք։ և ետես զՀոգին նոյ՝

զի իշանէր իբրև զաղաւնի, և դայր 'ի վրայ նորա։ Եւ ահա՛ ձայն յերկնից՝ որ ասէր. դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ։։ Մատ. գ. 16 — 18։։ Այսոյն այս հայրական ձայն՝ յամօթ առնէ և զբաժանողն մարդոյն յածուէն՝ որք յերկուս որոշելով Որդիս, այլ զոր յաստուծոյ հօրէ՝ և այլ զոր 'ի մարիամայն, ասեն ծնեալ. քանզի ո՛չ ասացս որ 'ի դմա է որդի իմ է, այլ՝ դա է որդի իմ. այսինքն յինէն անժամանակաբար՝ նոյն է և 'ի մօրէ ըստ ժամանակի. ո՛չ այլ և այլ. այլ մի և անբաժանելի։ Դարձեալ՝ որդիութեանն կոչմամբ զբնութեանն միաւորութիւն ցուցանէ՝ որ ըստ ինքեան. զի ծննուեցեալ է հօր՝ և ո՛չ ստացեալն, ըստ արիոսի։ Իսկ սիրելին ասել՝ զհամակամութի նշանակէ. զի ուր սէր է. ջիք բաժանումն կամայ... Եւ արդ՝ քանզի ձայն հօր բաւական էր վկայել զ՝Քրիստոս՝ թէ ճշմարիտ Որդի է աստուծոյ, զի՝նչ և հոգւոյն երևումն ընդ նախկի աստուածեալք. և այս է զատաւոր. զի եթէ ձայնն միայն էր եղեալ, կարծէին մարդիկն՝ եթէ վասն Յովհաննու եղև, զի նա էր յայտնի և մեծ առ նոսա։ Քանզի ո՛չ յաստուծոյ վասն Քրիստոսի, այլ խառնի խուռն եղև բարբառն. վասն այնորիկ՝ նախ Հոգին իջանէր 'ի վերայ նորին՝ իբրև մատամբ իմն ցուցանելով. և ապա ձայնն հօր

գայր 'ի վերուստ, զի մի՛ այլ ընդ այլոյ կարծիցեն. այլ թէ՝ սա է վասն որոյ վկայէ հայր՝ թէ դա է որդի իմ՝ սիրելի։ Եւ դարձեալ՝ զի յերիս անձնաւորութիւնս յատկութիւն՝ մաքրեսցէ զհաւատս Եկեղեցւոյ՝ 'ի Սաբէլի հրէականին խորհողն աղանդից, որ 'ի մի դէմս ժողովեաց զերրորդութիւն։։ Նէր. Հնոր. 'ի Դէն. Մաթ. գ. 17։ ։։Գնացէք այսուհետև՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն հօր՝ և որդւոյ՝ և հոգւոյն սրբոյ։։ Մաթ. իբ. 19։ ։։Երեք են. որ վկայեն յերկինս հայր, բան և հոգին սո՛ւրբ, և երեքին մի են։։. ա. Յով. ե. 7։

Երկրորդ՝ հաւատալ յամենասուրբ երրորդութիւնն ճշմարիտ խոստովանութեամբ, և սիրել զնա միշտ 'ի ա՛ր սրտէ և ամենայն յօժարութեամբ. կատարել զօրէնս նորա և զպատուիրանս 'ի բանս և 'ի գործս մեր՝ ատելով և մերժելով 'ի սրտից և 'ի գործոց մերոց զհակառակն աստուածային օրինաց և պատուիրանաց. լո՛ւր սուրբ գրոց։ ։։Սիրեսցես զտէր աստուած քո յամենայն սրտէ քումմէ. և յամենայն անձնէ քումմէ. և յամենայն զօրութենէ քումմէ։։. Բ. Օրին. զ. 5։ Ղուկ. ժ. 27։ ։։Յամենայն կեանս քո սիրեա՛ զտէր. և կոչեա՛ զնա 'ի փրկութե՛ քումմ։։. Սիրաք. կգ. 18։ ։։Զչուրս պատուիրանին սէրն,

'ի սուրբ սրտէ՝ և 'ի մոտաց բարեաց՝ և յան-
կեղծաւոր հաւատոց։։ Ա։Տիմ։Ա։5։։«Այլ գի-
տեմք՝ եթէ որոց սիրեն զաստ՝ յամենայնի գոր-
ծակից լինի 'ի բարիս՝ որք հրաւիրեալք կոչե-
ցան։։Հռովմ։Ը։28։Ի վերայ վկայութեանս մեկնա-
բանութիւն տան երանելի սուրբ վարդապետք մեր։
Իգնատիոս։ և Յովհան Ծորդորեցի։։«Զ-
ամենայն տեսակ բարեաց վերջին լինիլ աստուա-
ծային սիրոյն՝ և 'ի տեսանել աստուածանեցաւ։
նոցն և յօրէնս։Զամ զօրութիւն և զամենայն
ցանկութիւն 'ի նա ունիլ։ և խոտան համարել
զամ որ ընդդէմ և աստուածային սիրոյն անկա-
նիցի։«Լա և որք կարծեցին թէ բարիք իցեն՝ և
զսէրն որ առ ամ իցէ խախտեն՝ մերկանալ զնո-
սա իբրև զչար և զվնասակար բարեպաշտութեամ
վարուցն։ և միայն զսէրն աստուծոյ խնդրել։։
'ի Դէն։Ղ։Ա։Փ։27։։«Զշմարիտ ասէ։ զի օրէնք և
մարգարէք՝ որք գրեցան։ վասն երկու իրաց
գրեցան։ մի՝ զի զշմարիտն աստուած ծանիցեն
հաւատովք։ Յերկրորդ՝ զի 'ի չարեաց 'ի բաց
կալցեն։ զոր Յակոբոս հաւատ և գործ ասէ։
և մինն առանց միւսոյն դատարկ և մեռեալ։և
Պօղոս՝ հաւատ սիրով զօրացեալ գրէ։։'ի Դէն։
Մաթ։ԺԲ։40։

Լուսանոր առաջնորդ և ուսուցիչ լեցի մեզ

երջանիկ մարգարէն Դաւիթ, որ բանիւ և գործով քարոզէ. նախ՝ զփափագ սրտին խոստովանելով. «Սիրեցից զքեզ տէր զօրութիւն իմ, տէր հաստատիչ իմ ապաւէն իմ, և փրկիչ իմ։ Աստուածն երկրորդ՝ զպարտուապատշաճն ճշգրտիւ ասոյգ աստուածասիրութեան ճշմարտութիւն. յանձին իւրում յուցանելով, ասէ. «Օ՜ մեղս առեցի և անարգեցի, և զօրէնս քո սիրեցի». Սաղ. ԺԷ. 1. Ծէր. 163։

Ունկնդիր լեցուք աստանօր սրբոյ հօրն մերոյ Գրիգորի լուսաւորչին, որ ի վերայ մարգարէական բանիցս, գրէ. «Արարերարին աստուածոյ բարերար խնամքն ոչ անտես առնէ որք դառնան առ նա. բանայ զդրունս ողորմութեան շնորհայ և ընդունի գթութեամբ երախտաւորս սրբ սիրոյն. և յանձանձէ զապաւինեալսն ի նորա գթութիւնսն՝ ի ձեռն ճշմարիտ խոստովանութեան։ Աստ որ խոնարհեալ և բեկեալ սրտիւք ի զղջումն ագաւորի. գթայ ի նա և ողորմի և այցելու լինի փրկիչն։ Օ՜ի զծածկեալ մաղձն դառնութեան ի բաց փսխեայ. և ելցոյց եթէ զմեղս առեցի և անարգեցի և զօրէնս քո սիրեցի. զառողջութեան և զսրբութեան և զարդարութեան». Յոանէ. Ճաա. ԺԸ։ Պարէն սրտի մնաք և շրթամբք հոգւոյ ձայնակից լեալ սրբազան

առաքելոյն Պօղոսի ։ և մեք ապաշակեսցուք ։ «Ամ մեկնեսցէ զմեզ 'ի սիրոյն քրիստոսի ։ նեղութիւն՝ թէ՛ անձկութիւն՝ թէ՛ հալածանք՝ թէ՛ սով՝ թէ՛ մերկութիւն՝ թէ՛ վիշտք՝ թէ՛ սուր ։ Որպէս և գրեալ է ։ վասն քո մեռանիմք զօրհանապազ ։ համարեցաք իբրև ոչխար 'ի ըսպանդ»։ Հռոմ. ը. 35։

Աբդ՝ ՅԾ-սիրութիւնն յայնժամ ապացուցեալ Հշմարտի 'ի մեզ ։ յորժամ զայս կրկին եղանակս կարևորագոյնս 'ի սրտի մերում անմոլիպէտն պահեսցուք ։ «Լսա՝ պահպանութեամբ ՅԾ-ային օրինացս և պատուիրանաց ։ «Հրեշտ սիրէք զնս՝ զպատուիրանս իմ պահեսջիք։ ։ Որ ունի զպատուիրանս իմ՝ և պահէ զնոսա ։ նա է որ սիրէ զնս ։ և որ սիրէն զնս՝ սիրեսցի 'ի Հօրէ իմմէ ։ և ես սիրեցից զնա և երևեցուցից նմա զիս։։։ «Հրեշտ որ սիրէ զնս՝ զբանն իմ պահեսցէ ։ և Հայրն իմ սիրեսցէ զնա»։ Յովհ. ԺԴ. 15 — 25։ Հրկրորդ՝ ընդ ապուռաձ սիրութեան ։ զէ զբարս զպզգայինս մեր սիրելով իբրև զանձն մեր ։ Յամ։ «Սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո»։ Մատ. ԺԲ. 39։ «Այս է պատուէր իմ ։ զի սիրեսջիք զմիմեանս որպէս և ես զձեզ սիրեցի։ Այս պատուիրեմ ։ զի սիրեսջիք զմիմեանս»։ Յովհ. ԺԵ. 12 · 17։ «Հրեշտ որ ասիցէ՝ Եթէ սիրեմ զՅԾ ։ և զեղբայր իւր

առիւծէ, սուտ է. որ ոչ սիրէ զԵղբայր իւր՝ զոր տեսանէ, զԱստուած զոր ոչն ետես՝ զիարդ կարիցէ սիրել։ Եւ զայս պատուէր ունիմք առ Ինանէ, զի որ սիրէ զԱստուած՝ սիրէ նա և զԵղբայր իւր։» Ա. Յովհ. Դ. 20. 21։ «Մենայնիւ Ջանայ և Հնարի չբաժանել 'ի սիրոյն այ զահր ընկերին։ Զատն զի զորօրինակ մի կենդանի մարդ՝ յերևելոյն և յիմանալւոյն Ճանաչի գոլ մարդ. և եթէ մինն բաժանի 'ի միւսոյն, երկոքեան խանգարին. վասն զի տիրական մարդն կորոյս զիւր ներգործութիւնն 'ի մերկանալն 'ի զգալւոյն։ Զիմանալէս և սէրն այ որ տիրականն է և իմանալի, 'ի զգալի սիրոյ ընկերին Ճանաչի կենդանի։ Եւ եթէ բաժանի 'ի սիրոյ Եղբօրն, թէպէտ և կատարեալ է, թէպէտ մինչև յերկինս բարձրացեալ իցէ, կորոյս զիւր ներգործութիւնն և խոտան գտաւ։ Եւ թերևս Պօղոս յայս միտս հայեցեալ ասաց, եթէ վասն սիրոյն այ մատնեմ զմարմին իմ յայրուձն հրոյ, և ջամբեմ զամենայն ինչս իմ աղքատաց, և սէր ընդ ընկերն ոչ ունիցիմ, 'ի սիրոյն այ ոչ ինչ օգտիմ։ Եւ եթէ արդար է ասացեալն եթէ՝ դաշն ընդդեմ Եղեալ է՝ որ Եղբօրն ոխս պահէ՝ կամ ատելութիւն ունիցի։ Ընդ առ ած սիրով միաբանութիւն զիարդ ունիցի՝ որ դիւաց դաշնա-

կինցն է։։ • Սարգ • Ներս • Ճառ • է։

Յորդորակ •

Տես՝ զինչ յառաջ բերի պատճառս յորդորիչ Եղբայրսիրութեան սրբազան առաքեալն Պօղոս • որ գրի առ Եկեղեցիս Կիլիկացւոց • ։։Կղերուք նմանողք ամ, իբրև որդիք սիրելիք • և գնացէք սիրով՝ որպէս և Քրիստոս սիրեաց զմեզ, և մատնեաց զանձն իւր վասն մեր՝ պատարագ և զեներամն աստուծոյ ի հոտ անուշութեան • Եփես • է • 1—3։

Այսն այս երանելի սրբազան առաքեալն Քրիստի ոչ ասաի և անտի օրինակս բերէ ի յորդոր եղբայրսիրութեան • այլ զանձն իւր, յասելն • ։։Թէ զլեզուս մարդկան խօսիցիմ և զհրեշտակաց՝ և սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրև պղինձ, որ հնչէ • կամ իբրև զծնծղայս՝ որ զողանջեն։ Եւ եթէ ունիցիմ զմարգրէութիւն և գիտիցեմ զխորհուրդս ամենայն՝ և զամենայն գիտութիւն • և եթէ ունիցիմ զամենայն հաւատս՝ մինչև զլերինս փոփոխելոյ, և սէր ոչ ունիցիմ • ոչ ինչ եմ։ Եւ եթէ ցամքեցեմ զամենայն ինչս իմ աղքատաց, և մատնիցեմ զմարմին իմ յայրումն, և սէր ոչ ունիցիմ՝ ոչ ինչ օգտիմ։ Սէր երկայնամիտ է՝

քաղցրանայ։ սէր ոչ նախանձի, ոչ ամբարհաւաճէ, ոչ հպարտանայ։ ոչ յանդգնի, ոչ խնդրէ զինքս, ոչ գրգռի, ոչ խորհի չէաթ։ ոչ ինդայ թ անիրաւութիւն՝ այլ խնդայ ընդ ճշմարտի,,։ ա։ կորն։ ԺԳ։ 1—7։ Այսն օրինակ և սրբազան առաքեալն Պետրոս յորդորելնի ընկերանդրապետս ամենայն հաւատացելոց։ հնազանդիլ յամենայնի ձշմարտութեան սուրբ հոգւոյն աստուծոյ, և սրբութեամբ սրտի կատարել զօրէնս եղբայրսիրութեան։ յասէն։ ,,Զանձինս ձեր սրբել հնազանդութեամբ ձշմարտութեանն, յերդայրսիրութեան առանց կեղծաւորութեան, ի սուրբ սրտէ սիրել սերտիւ զմիմեանս,,։ ա։ Պետ։ ա։ 22։ Առաքելական հայրապետն մեր և լուսաւորիչ հոգւոյ մերոյ՝ սուրբն Գրիգոր ներբողելով զաստուածասիրութեան և զերդայրսիրութեան արդեանց յորդորէ զմեզ՝ գանձել զնոյն ի սրտի մերում։ յասէն։ ,,Սէր սուրբ՝ մայր է առաջութեան անարատութեան և անբծութեան, որ խնամէ և յորդորէ յառաքինութիւնս։ և յարդարէ յամենայն բարեգործութիւնս։ Սէր՝ աղբիւր է ամենայն բարեաց։ որ արբուցանէ զսուրբ անձինս։ և գրաւական ամենայն երանութեանց և մեծութեան պարգևացն աստուծոյ բաշխող։ Սէր՝ բղխումն երախտեացն քրիստոսի։

և վայելեցուցիչ յանպատուամն շնորհս նորա. լու-
ծիչ խռովութեան և տուիչ խաղաղութեան.
լուսաւորիչ մտաց և անդամոց։ Սէր ՅԲ՝ հոգ-
ւոց և մարմնոց անեղծ ստացուած. զի որք ու-
նին զնա միշտ, են 'ի կենդանի շնորհն քՅի. ամե-
նաշահ երանութեամբք յարդարեալ 'ի գովեստ
փառացն աստուծոյ։ Սէր՝ աւետիք կենդանի
յուսոյն. ցրիչ նեղութեանց և վշտաց, և լուծիչ
ամենայն դժնդակաց 'ի վերայ եկեալց որ զինու-
որին ընդդէմ առաքինութեան հանդիսից։
Սէր սուրբ երախտեօք՝ հրեշտակ է խաղաղա-
բար. որ ցցատուամն մերժէ և զոխութիւն լու-
ծանէ. և զնախանձ արտաքս մղէ. և ցածուցանէ
զչարն։։ Յաճախ. ՃՈՈ. ԺՈ։

Գ. Լ. ՈՒԽ ԺՈՒ.

Ուռած է 'ի բարոյականս. եթէ ամենայն իրաց
և ընթացից վախճանն է գովելի, որ հասուցանէ
'ի նպատակն։ Ապա պարտ է զսկսեալ գործն
անխոնջ շարունակել. զի մինչև ցլրումն գործոյն՝
և ընթացողն 'ի ճանապարհս ուղղափառ հաւա-
տոյ աստուածպաշտութեան և առաքինութեան
յարատև և անմոլար ընթացեալ՝ հասանիցի
ստացման ամենայնակալի յաղթանակին ՅԾ-

պաշտուութեան և աստուածսիրութեան. որ է ժառանգուի յաւիտենական կենաց և փառաց։

Տե՛ս զկարատական քարոզութիւնս անօթոյն ընտրուեր երանելոյն Պօղոսի՝ որ առ Հաւատացեալս զանձն իւր վշտակիր օրինակ տալով, գրէ. «Մի՞ գիտէք եթէ որք յասպարիզին ընթանան, ընթանալ ամենեքեան ընթանան՝ բայց մի՝ ոք առնու զյաղթութիւնն. այնպէս ընթացարուք զի հասանիցիք։ Ամենայն որ պատերազմի՝ ամենայնի ժուժկալ լինի. նոքա զի զեղծանելի պսակն առնուցուն՝ և մեք զանեղծութեան։ Ուրդ ես իսկ այնպէս ընթանամ, ոչ որպէս յանեբևոյթս. այնպէս մրցիմ, ոչ որպէս թէ զհողմն ինչ կոծելով։ Այլ ձնշեմ զմարմինս իմ, և հնազանդեցուցանեմ։ Զի գուցէ որ այլոցն քարոզեցի՝ ես ինքն անպիտան գտանիցիմ»։ Ա. Կորն. Բ. 24—27։ Բայց սոյն այս սրբազան առաքեալն Քրիստոսի, ողբայ և ամբաստանելով ստգտանէ զանհաւատ ընթացից ուղիղ ճանապարհութեանն գաղատացւոց, եթէ. «Բարւոք ընթանայիք. ո՞վ կասեցոյց զձեզ ճշմարտութեան չհաւանել։ Զի այն հրապոյրք՝ ոչ յայնմանէ են, որ կոչեացն զձեզ։ Փոքր մի խմոր զամենայն զանգուածն խմորէ»։ Գաղ. Է. 7. 8։ Զատ ոսկեբերանին կամի ասել. Մի՞ գաղատացիք բարւոք ընթա-

նայիք 'ի խաւարէ կռապաշտութեան, դիմեալք 'ի լոյս աւետարանին և օր ըստ օրէ յառաջանայիք ուղիղ և աստուածապաշտ գնացիւք և բազում ակնկալութիւն տայիք մեզ 'ի կատարածն հասանելոյ։ Որդ ո՛ կասեցոյց զձեզ, ո՛ դադարեցոյց յուղիղ ընթացից քրիստոնէական լուսաշաւիղ ճանապարհին։ Որպիսի պատրանօք յոժարացայք 'ի հրէութիւն. որ երբեմն դիմեալք էիք 'ի լոյս աւետարանական ճշմարտութեան, այդ հրապոյրք ո՛չ 'ի հոգւոյն սրբոյ է, այլ 'ի սատանայէ և 'ի պաշտօնէից նը, այդ հրապոյրք թշպատութեան և խտրանաց հրէական խմոր է, բայց գիտասջիք՝ զի փոքրն այն խառնեալ 'ի ձեզ ըստ օրինակի խմորոյ, կարող է յետոյ 'ի կատարեալ հրէութիւն արկանել զձեզ, և փոխանակ զհրէայս շահելոյ 'ի Քրիստոս, դուք 'ի նոցա թիւրութիւն ընդունիցիք։

Տէ՛ս աստանօր և սրտի մտօք 'ի միտ առ, մեծահաւատ ընթերցասէ՛ր. զի սրբազան աւետարանիչն Յովհաննէս ըստ կանխապէս կոյց ապրեցուցեալ սրբոյ հոգւոյն ՝այ, ընդհանրապէս առ ամենայն ուղղափառ քրիստոնեայս գրէ առ զգուշութիւն նոցա 'ի մոլար վարդապետութենց անտի չարաչար մոլորելոց։ Զամենայն որ յանցանէ՝ և ո՛չ կայ 'ի վարդապետութեն Քրիստոսի, զաստուած ո՛չ

ճանաչէ · որ կայ ի վարդապետութեանն ։ նա՝ և զորդի և զՀայր ընդունի ։ Եթէ ոք գայցէ առ ձեզ ։ և զվարդապետութիւնս զայս ոչ ունիցի ։ մի՛ ընդունիցիք զնա ի տուն · և մի՛ ողջոյն տայցէք նմա ։ Եւ որ ասասցէ նմա ողջոյն՝ կցորդ լիցի չարեաց գործոց նորա ։։ Բ · Յով · ա · 9 · 10 ։ «Եթէ ոք եկեսցէ առ ձեզ բանիւ վարդապետութեան իբրև ի մէնջ և կամ եթէ յանուանն Եւսեբիոս · և զայս սեռն և սերտ վարդապետութիւն զոր մեք քարոզեմք յանուանն յիսի և ուսուցանեմք · և նա ոչ ունիցի և ոչ այնպէս ուսուցանէ ։ այլ նոր օրինակ ինն բանիւք · կամ յաւելու ի սոյն օտարոտի խնամատիւք · և կամ պակասեցուցանէ ի բաց բառնալով · մի՛ ասէ ընդունիք զնա ի տուն ։ Ա. յսինքն ասպնջականութեան անդամ զնա արժանի մի՛ առնիցէք և մի՛ հացակից և սեղանակից նմա լինիցիք ։ Ա. յԼ իբրև զգազան մի չար և անընտել և պատառող ի բաց վարեցէք ։ Եւ ոչ միայն զայս առնիցէք նմա ։ այլ բանիւք անդամ ողջոյն մի՛ տայք ասէ նմա ։ Ա. յսրմ և Պօղոս վկայէ · և Եւ առաւել դատապարտէ զայնոսիկ · որ զայլանդական · ուսուցանեն · ոչ սովին բանիւք · այլ սովին մտօք ։ Յառնէ ասէ Հերետիկոսէ յետ միանգամ և երկիցս խրատեալ՝ հրաժարեաց ։ Եւ ապա զպատճառսն ի նոյն

յաւելու։ գիտասջի՛ր ասէ զի թիւրեալ է այն-
պիսին և մեղանչէ անձամբ զանձն դատապարտելլ։
Յայլում վայրի և նշովից արժանի վարկանի զայ-
նպիսին։։ Սարգ։ Ներս։ Ի Ռեին։ Բ։ Յով։ ա։ 10։ Ճառ։ Բ։

Այս ամ բանք զգուշացուցիչք են ուղղափառ
հաւատացելոց ՝ի մոլար ուսուցչաց։ որք զհետ
լինին միշտ տալ գայթակղութիւն պարզամտաց՝ և
մոլորեցուցանել յուղիղ ընթացից աստուած-
պաշտութեան և յաւետարանական ճշմարտու-
թեանց։ զոր բազայայտ քարոզեցին սրբազան ա-
ռաքեալքն՝ և հոգեշունչ սուրբք հարք եկե-
ղեցւոյն Քրիստոսի։ որոց վարդապետութի ճշմար-
տապէս հայի յայն աստուածային հրաման փրկ-
չին մերոյ Յիսուսի Քրիստոսի։ զոր աւանդեաց
սիրելի աշակերտաց՝ և ամենայն ուղղափառ հա-
ւատացելոց։։ Եթէ ակն քո աջ գայթակղեցու-
ցանէ զքեզ՝ խլեա՛ զնա։ և ընկենա ՝ի քէն։ զի
լաւ է քեզ՝ եթէ մի յանդամոց քոց կորիցէ։ և
մի՛ ամենայն մարմինդ քո անկանիցի ՝ի գեհենն։
Եւ եթէ աջ ձեռն քո գայթակղեցուցանէ զք-
քեզ։ հատ զնա՝ և ընկենա ՝ի քէն։ զի լաւ է քեզ՝
եթէ մի յանդամոց քոց կորիցէ։ և մի՛ ամենայն
մարմինդ քո անկանիցի ՝ի գեհենն։ Այ մարդոյն
այնմիկ յոյր ձեռն։ գայցէ գայթակղութիւն։

Մաթ։ Է։ 29։ Ժբ։ 7։

Ի վերայ այսր կենսաձիր հրամանի փրկչին մեր Յիսուսի բացատրութիւն տայ որ հայրապետն մեր Ներսէս շնորհալի. «Ամենք ի կարգ բանիս հայելով՝ յաղագս մարմնական անդամոց կարծեցին զասացեալս. քանզի ասաց նախ թէ որ հայի ցանկութեամբ, շնացող է. և այժմ թէ. ակն աջ գայթակղեցուցանէ զքեզ՝ հան զնա և ընկեա ի քէն. որպէս արար սրբոյն Վարդոց, յոր հարեալ երիտասարդ ոմն ցանկութիւն աչացն գեղեցկութիւն, և հար կկոցայիւ ոստայնին և փորեաց զաչս իւր, և զգաստացոյց այնու զերիտասարդն մոլեալ։ Բայց մեք ի նոր բութիւն իմաստից հայելով, ոչ վասն մարմնական անդամոց կարծեմք, զորս յարդարեաց ածի պէտս իմաստասիրութեան և վայելչութեան հնգից սեռականացն սեռից, և են ծառայք իշխանականին յոր կոչին և վարէ զնոսա. զի թէ վասն անդամոց ինչ էր՝ ոչ միայն զաչն, այլև զձախն յիշէր. նաև՝ այն՝ զի թէպէտ և աստ հատանէր, ի վերստին նորոգմանն առնլոց է և ոչ կաղ ի կեանս մտանելոց, որպէս ասացն։ Այլ ճշմարտապէս վասն չարութեանն, որ յանդամս զօրանայ, է բանս. վասն որոյ ըստ երկու յեղանկս իմանամք զասացեալսն տեառն. նախ զի ասաց թէ՝ որ ձգի ցանկութիւ՝ շնացող է. այժմ զապաշ-

խարուելն տալ ընթեր դնէ՝ թէ յորժամ դայթա-
կղեցուցանէ զքեզ ակնդ արատ հայեցուածով՝
և կամ ունկդ չարախօսուբ՝ և բերանդ ատուբ՝
և ձեռքդ գողուբ՝ և կամ սպանմամբ՝ հատ
ընկեա՛ զնա՝ ի քէն՝ ոչ զմարմնդ՝ այլ զգործն՝
զոր մարմնովդ կատարեցեր՝ ը այնմ՝ պատաւեա-
ցէ՛ք զսիրտս և մի՛ զհանդերձս՝ վասն զի լաւ է
քեզ առանց գործոյն անարատ մարմնով՝ ի կենս
մտանել՝ քան յօրանալ զդայուբ՝ առ ժամանակ
մի զկնի հեշտալեացն և գեհենին լինել ժառան-
գորդ՝ որպէս ե՛հատ Պետրոս ոչ զանդամս՝ այլ
զգործս անդամոցն՝ ասելով՝ Պ՝ետ թողաք զամ և
եկաք զկնի քո՝ առ որ ասաց թէ՝ կեցանս ժա-
ռանգեսցես։ Պ՝ետ դարձեալ՝ թէ ոք պատճառ լինցի
քեզ մեղանչելոյ՝ և նա յընտանեաց և ի սիրե-
լեաց իցէ և կամ ի գոյաւոր ընչից՝ և այնպիսի
իցէ սիրելի՝ իբրև զանձն ածոյ՝ և կամ պատճառ
ածոմանն իբրև զձեռն ածոյ՝ որպիսի էր մեծա-
տանն՝ փարթամութիւնն իւր՝ և Հերովդէի՝
Հերովդիադայ ընտանի իւր՝ հատ ասէ և ընկեա՛
ի քէն՝ զի լաւ է քեզ առանց սիրելեաց և ընչից
քոց՝ կենաց լինել ժառանգորդ՝ քան թէ զկամն
նոր կատարել՝ և տանջանաց նորին հաղորդել՝՝
՝ի Դեմ. Պապ. է. 29։

Ա՝յսօրինակ գայթակղեցուցիչք և մոլորեցու-

ցիչքեն՝ որք զՀետ հոգեկորոյս թեղադրուբ սատանայական խաբէութեան մերեալ ընթանան, և ջանան խաբել յափշտակել զմիտս պարզամտաց, քաղցրաբան օրհնաբան և բարի մարդ ձևանալով յաչս նոցա. որոց գիւրին և շուտափոյթ հաւատան բանից պարզամիտք՝ ըստ։։ Ինքեանքն հաւատայ ամենայնի բանի. իսկ խորագէտն գայ ի զգՀուշանն։։ Սաղ. ԺԴ. 15։ Ահա յայսպիսեաց մոլորեցուցչաց զգուշանալ և խոյս տալ յորդորէ՝ ասելով՝ ի մէջ արկանէ սրբազան առաքեալն Պօղոս. «Զայսչափ զՀեղ ելղբաբք՝ գիտեալ զայնպիսին, որ հերձուածս և գայթակղութիւնս առնիցեն արտաքոյ վարդապետութեանն՝ զոր դուք ուսայք. և խորշեցարուք ի նոցանէ։ Օ՛ի այնպիսիքն տեառն մերում Յիսուսի ոչ ծառայեն, այլ իւրեանց որովայնի. և քաղցրաբանութեամբ և օրհնութեամբ պատրեն զսիրտս անմեղաց։։ Հռովմ. ԺԶ. 17. 18։

Այսպիսիք՝ ոչ միայն մոլորեցուցանեն զուշադրութիւն քրիստոնէայս ի լուսաշաւիղ ճանապարհէն ճշմարտութեան. այլ և յարդարութեան և յաւանութեան երանաւէտ շաւղաց խոտորեցուցանեն։ Սոքա են՝ որք քրիստոսական եկեղեցւոյ ուղղափառ վարդապետութեան հակառակ ուսուցանեն՝ թիւր և խոտոռնակ վարդա-

պետութեամբ։ Սոքա են՝ որք 'ի ներքուստ զգայ-
լոց ուներն զեսորհուրդ յափշտակութեան, և
արտաքուստ՝ հեղուք բերեն զոչխարայ զնմա-
նութիւնս։ Մաթ. է. 15։

Յաղագս չարաչար մոլորեցուցչաց գրէ Ե-
ղանեղին Յակոբ՝ որ Հայրապետն Ս՝ծբնայ.
«Ընդ նմանութիւն օձին որ խաբեաց զԵդեմ, յարեն
կացին 'ի միջի մերում ոմանք մոլորեցուցիչք և
խռովիչք. չարք և յամառք. նենգաւորք և ան-
օրէնք. չինիչք մեղայ, և քակտիչք արդարութեան.
անկիչք ամբարշտութեան, և խլիչք յատակիչք շնոր-
հացն ողորմութեան. անուցիչք որոմանց, կորուսիչք
վատնիչք ցորենոյ թշնամիք, դստրուիչք ոտուգաց.
օրհնիչք և գգուիչք անօրինաց. բարեկամք և բարե-
սայք հպարտաց. չարասացք և ատելիք խոնարհաց։
Գովիչք ճշմարտացուցիչք սասխասայ. բասրողք
և հայհոյիչք ճշմարտաց. ուխտիչք մեղայ և կա-
տարիչք անօրէնութեան։ Յղացողք և ծնողք բանից
ապականութեան։ Ա՝յսր և անդր լեզուօք և ա-
պիրատախօսք։ Գատարկացեալք և անացեալք
'ի շնորհաց. յօրացեալք և յշխացեալք ատու-
թեամբ,» . Զ գոչ. էրէս. 334։ Սոքա են՝ որք ոչ երբ
բէք հնազանդին ուղղափառ եկեղեցւոյն Քրիստ-
և խոնարհեցուցանեն զլսելիս հոգւոց իւրեանց
ուղիղ և ճշմարիտ հաւատոյ խոստովանութեամբ. որ

է դուռն յաւիտենական կենաց։ այլ արտաքոյ սորին խոտորնակ և մոլար շաւղօք մերձենան հը-
պին առ միամիտ որդիս եկեղեցւոյն։ առ գողա-
նալ յափշտակել և օտարացուցանել զնոսա 'ի
հոգևոր մայրական գրկաց սուրբ եկեղեցւոյն։
յորում՝ յարգանդ սուրբ աւազանին վերա-
ծեալ ծնան 'ի ժառանգութիւն որդեգրութ
հօր ՀՍ։ զերծեալ 'ի սկզբնական մեղաց դատա-
պարտութենէ։։ Յով. գ. 7։ ֆ. 1—4։

Զդ առ այս ամ խորհրդածութիւնս մեր վը-
կայութեամբ սբ գրոց՝ բացայայտ մարգարէն
Դաւիթ յաղագս այսպիսեաց մեղաւորաց մոլ-
ութեանց յուղղափառ դաւանութենէ սբ եկեղե-
ցւոյն՝ և օտարացելոց 'ի հոգևոր մօրէն իւր-
եանց։ այս է յեկեղեցւոյ։ասէ։ ։։Օտար եղեն
մեղաւորք 'ի մօրէ։ խաբեցան յարգանդէ։ և
խօսեցան սուտ։։ Սաղ. ֆէ. 3։ Ի վերայ այսր բա-
նի՝ զի Երանելին Յոսորով՝ եպիսկոպոսն Ան-
ձևացեաց։ ։։Վայ ինձ։ և վայ այժմու ժամա-
նակիս։ որ ըստ մարգարէին կանխասացութեանն
օտարացաք 'ի մօրէս։ և յայսչափ պարգևէ զմեզ
օտարացուցաք։ Զի թէ և այլ ինչ չունէաք
յանցումն։ այս միայն բաւական էր մեղաւորս
առնել զմեզ։ Դանդի և աստանօր մարգարէս
ոչ վասն այլ իրիք։ այլ վասն 'ի հոգևոր մօրէս

օտարտնալոյ կոչէաց մեղաւորս։ Օտար էղէն
ասէ մեղաւորք 'ի մօրէ։ խաբէցան յարգանդէ,
այսինքն յաւազանէն։ Հանգլ վրիպին 'ի շնոր-
հէ, օտարացեալքն յեկեղեցւոյ։ և առեցեալ
ընին իբրև զնորթսն վասն զնուաւ արհամար-
հանացն։ Այս զի՞նչ է՝ խօսեցան սուտ։ Օ՛ի ա-
սեն, իբրև սիրելի են յարկք քո տէր զօրուեց։
ցանկայ և փափագի անձն իմ 'ի գաւիթս քո։
Այս դարձեալ ասեն։ զմի խնդրեցի 'ի տեառնէ
և զսոյն աղաչեմ։ բնակիլ ինձ 'ի տան տեառն
զամ աւուրս կենաց իմոց։ Այս դարձեալ թէ,
Ուրախացայ ես ոյք ասէին ցիս 'ի տուն տեն էր-
թիցուք մեք։ Օ՛այս և որ սոցին նման ասեն և
մեծապէ սատեն։ Օ՛ի սխորժելի համարին յա-
ւաջիկայս ժողովել զժողովուրդն այ, քան բնա-
կիլ 'ի տուն նորա։ Մ՛հ գործոյն և ողբումն
գործելեացն։ Այ կեղեցի՛ք այ խրթնացեալք, և
ժողովուրդք 'ի նոցանէ քեցեալք։ Զ՛սա կամաց
ուր և լաւ ինքեանց հաշուեսցեն՝ անդ զեկե-
ղեցւոյ զվասս տան։։ 'ի Դէն։ յ.տ.թ.գրի։։։ Յուցա-
նէ թէ ոչ է այ, այլ այլոց ուսմն թշնամւոյ ա-
բարուսած չարութիւն, և ճշմարտապէս թշնամի՝
ոչ միայն բնուէս՝ այլ և այ։ քանզի սկիզբն
դրժութեանն՝ ոչ յայնմանէ ինչ է զի 'ի մեզն
մեղանչեաց, այլ զի և կամացն աստուծոյ

հակառակել իշխեաց։ Զոր դարձեալ՝ յայտնապէս զՀերձուածողսն թշնամի ասէ՝ զի որք սուտ խօսեցան խաբեալք յարգանդէ և օտարացեալք ի մօրէ աւազանէ՝ թշնամիք են աստուծոյ, զի զուշիկ բանն խաթարել եղծին, և զչար հերձուածս հաստատեցին։ Յով. Յորդ. ի Գլ. Մաթ. ԺԷ. 28։ Զորմէ և հրեշտակարան սուրբ վարդապետն մեր Գրիգոր. «Զի ծնանի հոգին ոչ մկրտութեամբ և անուշանէ եկեղեցի մարմնով և արեամբն Աստի։ Զ. Սոյն և Բասիղեոս վկայէ, ասելովն. Զոյնպէս և Ճշմարիտ մայրս ձեր եկեղեցի կոչեաց զբազմութի հնազանդ և կամարար որդւոց, զհաւատացելոցդ ասեմ՝ զժողովոց։ Զոր յառաջ երթեալ, ասէ. քանզի սիրուն հօր և հաւատացեալ մօր, այսինքն այ և եկեղեցւոյ՝ հաւատացեալ գոլով որդիք, սէր անխախտելի առ հայրն ձեր պահեցէք. և նայեցեալք ի սրբոցն ժողովս, որ են գանձք ձերոյ մօր եկեղեցւոյ, բերկրեալք յուսով ուրախութեամբ ցնծացէք. որպէս զի շնորհքն՝ որ զնոսայն լուսաւորեցին, և զձեզ արժանի արասցեն հաստատել ի մասն վիճակի ժառանգութեանն սրբոցն ի լոյս։ Զոր յառաջ երթեալ՝ ասէ. Ստեփաննոս սրբոյ մօր եկեղեցւոյ սուրբ որդի և պարծանք միանգամայն լուրթեան նորա։ Տես զի զեկեղեցի զոր

հաւատոց մայր ասաց, զնոյն և Յստեփաննոսի
ասաց և այլ սրբոց առաքելոց և մարգարէից
և մարտիրոսաց և ամենայն հաւատացելոց։ Զի
թէ փառաւոր ոչ են մի աչքն, այլ մի են ծնունդք
սուրբ եկեղեցւոյ. և յայսմ եկեղեցւոյ 'ի մի
եկեղեցին փոխին 'ի վերինն Երուսաղէմ։ Ա՛ն
այսորիկ պիտոյ է զեկեղեցի առաւել սիրել քան
զմարմնոյ ծնողս՝ վասն առաւել ծնողութեանն։
Զի որպէս հոգի առաւել է՝ քան զմարմին,
այնպէս և հոգւոյ մայր՝ քան զմարմնոյ մայր։
Ընդ որպէս որք 'ի մերէ կալթանցն և 'ի անդեն
նէ նորա օտարանանն, և զմահ կրեն, նոյնպէս և
որք յեկեղեցւոյ և 'ի նորա ստանցն և 'ի հոգևոր
կերակրոցն՝ 'ի գրոց, որ է ստինք եկեղեցւոյ, օ-
տարանան և ոչ փափագմամբ և բաղձանօք մը-
տանեն 'ի նա և կերակրին 'ի նմա գրովք. ոչ
կարեն կեալ, այլ մեռանին զանմահ մահն։
Զայսոսիկ և մարգարէն տեսանելով՝ աւաղ
ասելով. Զտար եղէն մեղաւորք 'ի մերէ, խա-
բեցան յարգանդէ, և խաբեցան սուտ։ Ի յսինքն
զդաւանութիւնն և զուխտն զոր ուխտեցին 'ի
ծննդեան աւազանին, սիրել զՀայրն աստուած
և զմայրն եկեղեցի առեցին և օտարացան։ Զի
զոր արտաքոյ գտեալ սատանայի՝ 'ի մերէն որ է
եկեղեցի, գերի առեալ տանի, որպէս զմարդա-

վանաւ, որք գողանան զմանկուհան՝ զոր հեռաց-
գոյն 'ի ծնողացն գտանէն,, . 'ի Ռեկ. Էրէոց Էրէոյն։

Յորդորակ.

Պատրաստ ուշի ուշով ունկնդիր լիցուք հո-
գեկեցոյց յորդորանաց կենարարին մերոյ Յի-
սուսի Քրիստոսի, որ կամի՝ զի ամ մարդիկ կեցցեն,
և 'ի գիտութի ճշմարտութեան եկեսցեն. . . Տիմ. Բ. 4։

Այ ցուցանէ մեզ զերկուս դրուն, մին՝
որ տանի 'ի կորուստն յաւիտենական, և միւսն՝
որ 'ի կեանս յաւիտենականս։ Զոր մինն դիմեն
աշխարհասէրքն՝ մարմնապաշտք, մոլորեալք և մո-
լորեցուցիչք, և զոր և հեռացեալք 'ի բարի և յու-
զիչ ճանապարհէն աստուածահաճոյ առաքինու-
թեան և արդարութեան, և ընթացողք 'ի չար
ճանապարհս պէսպէս մոլութեանց՝ շնութեան,
ագանութեան, պոռնկութեան և կամապաշտու-
թեան, և այլն։ Իսկ առ միւսն ճշմարիտ աս-
տուածապաշտք և աստուածասէրքն, ուղղափառ
քրիստոնեայք 'ի չարութենէ մեղայ հեռացեալք,
լիշտայ և նեղութեանց աշխարհի համբերատարք,
հաստատուն և աներկբայ հաւատով՝ յուսով
և սիրով ակնկալուք յայտնութեան և ժառան-
գութեան յաւիտենական փառաց և կենաց ան

մերոյ Յիսուսի Քրիստոսի։

Զոր՝ առաջին դուռն է բեղիարայ։ իսկ երկրորդն կենարարին մերոյ Յիսուսի Քրիստոսի։ վասնորոյ յառաջնոյն զգուշանալ յորդորէ՝ և յերկրորդն դիմել յուսով և սիրով։ «Մտէք ընդ նեղ դուռն։ քանզի ընդարձակ է դուռն՝ և հանարձակ ճանապարհն՝ որ տանի ի կորուստ։ և բազումք են որ մտանեն ընդ նա։ Քանզի անձուկ է դուռն՝ և նեղ ճանապարհն՝ որ տանի ի կեանս։ և սակաւք են որ գտանեն զնա»։ Մատ. է. 13—15։ «Մինչդէր՝ զի և աստանօր զնոյն ցուցանէ թէ՝ դուռն միայն է նեղ։ իսկ վայր ընդարձակ է կեանք՝ որպէս և մուտն զդուռն միայն ուղիղ արձակ։ իսկ տեղին կորուստ է և գեհենն։ Զոր դարձեալ՝ անդ թեթև ասաց յաղագս յուսոյն։ որպէս երդէ Դաւիթ թէ՝ յոյժ անդորր են ինձ պատուիրանք։ և Յովհաննէս թէ՝ պատուիրանք նորա չ'են ինչ ծանուն։ Իսկ ասա նեղ վասն հանդիսի ճգանցն։ ըստ առաքելոյ՝ թէ բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել յայն հանգիստն։ և թէ՝ տա ժամայն նեղութիւնս զյաճախութիւն փառացն գործէ՝ ի մեզ։ վասն որոյ մի՛ հայիր ի նեղն։ այլ յայն թէ ուր տանիցի։ և մի՛ ելլայնն՝ թէ ուր վախճան ունիցի։ Զոր նեղ ասի։ զի յամենայն

կողմանց ՀՆՇԻՅի և վանգիյի յԵԼս ՀԱՆապարհին
ըստ նմանութեան կամրջի, ոչ խոտորելով յաջ
և ոչ յահեակ։ Իսկ լայն՝ զի 'ի Հանապարհէն
արտաքս ելեալ յընդարձակութեան շրջի՝ մոլ-
ռեալ յուղիղ պողոտայէն։ Եւ զուռն անուա-
նէ յիրաւի, զի իբրև 'ի դրանոյ արտաքս ելա-
նեմք 'ի կենցաղոյս՝ թողեալ 'ի տան աշխարհիս
զմթերեալ ընչից բաշխութիւնս, նա և զվիշտս
և զնեղութիւնս, յորում ոմանք սակաւ վշտա-
ցեալ իբր 'ի դրան ել՝ կենացն պատտին, և
ոմանք 'ի զուռն՝ ժամանակ ընդարձակ կենաց
յօրացեալ՝ կորստեան արժանաւորին։ Իսկ և
զայն, զի ընդ սրձակս սոսկ. բազումք ընթանան
յաղագս հեշտութեան խաբեալք և յառաջնոր-
դէ Հանապարհին այլ ոք այլուր գահավիժեալ,
յորոց կատարածն կորուստն է բազմեալ սատա-
նայ։ ըստ այնմ՝ են Հանապարհք որ թուին թէ
ուղիղ լցեն, բայց ելք նոցա հային յատակս
դժոխոց։ Իսկ 'ի նեղն սակաւք՝ վասն դժուա-
րութեան նուրբ ընթացիցն, զի խաչ կայ առա-
ջի և չարչարանք։ նահատակութիւնք և վասատ-
կեալք։ որոյ առաջնորդ տէր է հաստատեալն 'ի
գլուխն՝ անմահ կենացն բաշխիչ և արքայութեան
երկնից պարգևիչ։։ ՅՀ. Ծ-ԲԾ. 'ի Ռեն. Մաթ.
է. 13. 14։ Եւ սուրբն Եփրեմ Սիրիացի

գրէ ։ «Դուռն արդարութեան է Քրիստոս, և նորին շնորհքն, սա փակեալ է առաջի անհաւատացեացն, և բանայ զսոյն հաւատն։ զի ասէ առաքեալն ։ Ոչ զիմ արդարութիւն ուռնիմ ։ այլ զհաւատացն Քրիստոսի՝ որ յաստուծոյ արդարութիւն տուաւ մեզ ։ և յայս հաւատս ոչ ամենեքին կարեն վայելել գնտութեամբ ։ այլ միայն կրթեալքն փորձութեամբ։ ։ ։ Այս յայտ է թէ շնորհքն Քրիստոսի և մահն՝ որով ամենեքին արդարացան՝ դուռն է կենաց և արդարացեալքն հաւատով մտանեն ընդ նոյն յերկնային խոստմանն յոյս։ ։ Ոչ և ասէր։ ես եմ դուռն, ըմբիս եթէ ոք մտցէ կեցցէ։։։ Ի Գէն։ Ա։ Ն։ Ճգ։ 19։

ԳԼՈՒԽ ԺԸ։

Խսուրբ գրոց ուսեալ եմք։ զի եթէ ընթանամք ի ճանապարհս մոլութեան և մոլորութեան, իսպառ հեռանամք յաստուածային արդարութեան ճանապարհէն։ իսկ յորժամ շնորհիւ նորին սրտի մաքրութեամբ զմեզ և զանօրէնութիւնս մեր և դառնամք վերստին կատարեալ զղջմամբ և ապաշաւութեամբ ի չար ճանապարհէն, և ընթանամք ըստ առաջինն սուրբ սրտիւ և բարի վարուք, յայնժամ մերձենայ առ մեզ աստուածային

անսահման գթութիւնն անհաւէլի բարութիւն և ամենակարող խնամակալ զօրութիւն։ Այնպէս զայս կրկին հանապարհս ցուցանէ մարգարէն Դաւիթ, վասն անձին իւրոյ խօսելով. «Հանապարհս մեղայ՝ ի բաց արա՛ յինէն, և յօրէնս քո ողորմեա՛ ինձ։ Հանապարհս ճշմարտութեան քո ընտրեցի. և զիրաւունս քո ես ոչ մոռայայ։» Սաղ. ՃԺԹ. 29. 30։

Այնպէս քարոզէ և մարգարէն Եսայեաս. «Ա՛ի թէ՞ ոչ լսէք կարող ձեռն տեառն փրկել, կամ ծանրացոյց ականջս նոցա՝ զի մի՛ լուցէ։ Այլ մեղքն ձեր որոշեն՝ ի մէջ ձեր՝ և՝ ի մէջ ա՛յ. և վասն անօրէնութեանց ձերոյ դարձոյց զերեսս իւր՝ ի ձէնջ՝ զի մի՛ ողորմեսցի։ Զի ձեռք ձեր պղծեալք են արեամբ և մատուռնք ձեր՝ ի մեղս. շրթունք ձեր խօսեցան զանօրէնութիւն. և լեզուք ձեր խոկան զանիրաւութիւն։» Եսայ. Գ. 1—3։

Զայս հանապարհն ապաշխարութեան, որով մերձենամք առ ա՛ծ քարոզեաց սքանչելի Յովհաննէս մկրտիչ յանապատին Հրէաստանի յերկրպագելի յայտնութեան փրկչին մերոյ Յիսուսի. «Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս մկրտիչ քարոզել յանապատին Հրէաստանի, և ասել. ապաշխարեցէք՝ զի մերձեալ է արքայութիւն

երկնից։ Օ՛ն սակ՝ վասն որոյ ասացաւ՝ ի ձեռն Դ-
ասպետայ մարգարէին, որ ասէ. Զայն բարբառոյ
յանապատի, պատրաստ արարէք զճանապարհ
տեառն, և ուղիղ արարէք զշաւիղս նորա։։
Մաթ. գ. 1 — 4։ Ի վերայ այսր բանի գրէ սուրբ
Հայրապետն մեր Գ՛ր՛իգոր Նարեկացի. ։։ Ի վեր
քան զմարգարէսն խօսի բանս. զի ոչ զերկրա-
ւոր ճոխութիւն աւետարանէ՝ այլ զերկնից զար-
քայութիւն. զտեառն արքայութեն նշանակէ մերձա-
ւորութիւն. որպէս և տէրն ինքն իսկ արքայութի
անուանեաց՝ ի մաքուր հոգիս բնակելով, յս-
սէն. Արքայութիւն երկնից՝ ի ներքս՝ ի ձեզ է։
Որով յայտ առնէ՝ թէ որ կարող է տալ արք-
այութի իւրոց սիրելեաց՝ մերձէ և առ դուրս
հասեալ։ Դ՛ոչ զառաջին գալստենէն միայն
ասէր. այլև զերկրորդն նշանակեաց արքայութեն
անուամբ։ Բայց Մ՛արկոս և Ղ՛ուկաս՝ ոչ միայն
ապաշխարութիւն, և արքայութի ասեն քարոզել
Յովհաննու՝ այլև թողութի մեղաց։։։։ Յայտ
արարեալ է թէ ոչ այսու միտութեամբ թող-
ութիւն. այլ որ ոք իմով քարոզութեա հաւա-
տացէ յայն՝ որ զկնի իմ գալոց է՝ հասցէ թող-
ութեան մեղաց։ Օ՛ի Յովհաննու միտութի-
տուաւել քան զՄ՛ովսիսին՝ ապաշխարութիւն միայն
էր։ Իսկ Տ՛ռան ոչ ապաշխարութիւն, այլ ձրի

թողութիւն՝ և շնորհիւ որդեգրութեան. և դարձեալ զի հրեայքն հպարտք էին և զանձինս արդարս ունէին՝ ըստ Փարիսեցւոյն՝ զորոց Պօղոս ամբաստանէ՝ թէ տգէտք են օրինացն այ, և զիւրեանցն կամին հաստատել։ Յայս հայեցեալ Յովհաննու՝ յուշ առնէ նոցա. թէ ո՛չ որ կարծեն սուրբ են, այլ բազում մեղք լի. և կարօտ ապաշխարութեան։ 'Ի Դէն. Մաթ. Գ. 2։

Տե՛ս Յիսուս Քրիստոս Ճշմարիտ վարդապետն և Փրկիչն մեր՝ որպիսի հոգեկեցոյց օրինակօք և բարոյական առակօք ցուցանէ մեզ զճանապարհն փրկութեան, և հասանելոյ 'ի բուն իսկ յաղթութիւն ներողութեան. «Ոչ ինչ են պիտոյ բժիշկք ողջոց, այլ հիւանդաց։ Եւ ո՛չ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն։ և թէ՝ Ո՛վ ոք ելցէ 'ի ձէնջ մարդ՝ որոյ ելցէ հարիւր ոչխար, և կորուսանիցէ մի 'ի նոցանէ. ո՞չ թողուցու զիննսուն և զիննն յանապատի, և երթայցէ զհետ կորուսելոյն մինչև գտանիցէ զնա։ Եւ իբրև գտանէ զնէ զնա 'ի վերայ ուսոց իւրոց խնդալով, և երթայ 'ի տուն, կոչէ զբարեկամս և զդրացիս. և ասէ ցնոսա. ուրախ եղերուք ընդ իս։ զի գտի զոչխարս իմ զկորուսեալ։ Ասեմ ձեզ, զի այսպէս է ուրախութիւն յերկինս վասն մի մեղաւորի որ ա-

պաշխարիցէ՝ քան վասն ինքնասէր և ինն արդա-
րոց՝ որոց չի՛ցէ պիտոյ ապաշխարութիւն։։ .
Ղ.Ա.Ի. Ի. 31։ ԺԱ. 4. 8։

Զմիտեմք՝ զի էն բազումք, որք զշնորհն աստ-
ուածային երկայնմտութեան ոչ յիշեն յամա-
ռեալ գոլով 'ի չարիս, և անդարձ 'ի մեղս. ան-
զեղջ սրտիւք կամակոր մոլորին, և զայլոց զյան-
ցանան 'ի տեսանելն դատեն և դատապարտեն
զնոսա չարաչար. ոչ զիւրեանցն բնաւ 'ի միտ
բերեալ յապաշխարութիւն խոնարհին. զորս
յանդիմանելով հրամայեաց տէրն մեր Յիսուս
Քրիստոս. ։։Զի՞ տեսանես զշիւղ յականեղ-
բօր քոյ, և 'ի քում ականդ զգերանդ ոչ տես-
նես։ Կամ զիարդ ասես ցեղբայր քոյ թո՛ղ հա-
նից զշիւղդ յականէ քումմէ, և ահաւադիկ 'ի
քում ականդ գերան կայ։ Կեղծաւոր, հան նախ
զգերանդ յականէ քումմէ. և ապա հայեսցիս
հանել զշիւղն յականէ եղբօր քոյ։։ Մատ. Է. 3. 6։

Ապա իրաւամբ սքէզն առաքեալն Պօղոս գրէ
վասն յամառելոյ անզեղջ սրտիւք 'ի մոլութիս
իւրեանց, որոց դարձին և զղջմանն աստուածա-
յին սքանչելի երկայնմտութիւնն և մարդասիրա-
կան քաղցրութիւնն միշտ համբերէ, զի դարձցին
զղջասցին և խոստովանութեամբ ապաշխարութ-
ապրեսցին, ըստ այնմ։։Վասն որոյ առանց պա-

տաւխանի տալոյես ով մարդ՝ որ դատիսդ։ Զի
որով դատիս զընկերն, զանձն քոյ դատապարտես,
զի դու զնոյն գործես՝ որով դատիսն։ Գիտեմք
զիտեմք, եթէ այ դատաստանն Աստուծոյ է
'ի վերայ այնոցիկ՝ որ զայնպիսիսն գործեն։ Իսկ
արդ՝ խորհիցես զայս ով մարդ. որ դատիս
զայնոսիկ. որ զայնպիսիսն գործեն. և դու զնոյն
գործես, եթէ դու ապրեալոյ լիցես 'ի դատաս-
տանաց անտի աստուծոյ։ Եթէ զհիծութեամբ
քաղցրութեան նորա, և զներելովն և զերկայն-
մտութեամբն արհամարհիցես. չգիտիցես՝ զի
քաղցրութիւնն այ զքեզ յապաշխարութի ածէ։
Այլ ըստ խստութեան քում, և ըստ անզեղջ
սրտի՝ գանձես անձին քում բարկութիւն յա-
ւուր բարկութեան և յայտնութեան արդար
դատաւորութեանն աստուծոյ։։ Հռովմ. Բ. 1—6։
Եթէ կամիս սիրելի՝ գանձել 'ի մոլ քում զա-
նեզջական գթութիւնն աստուծոյ և զմնրդասի-
րական երկայնմտութիւնն, լուր քարոզութեան
սրբազան առաքելոյն Պետրոսի. ։։Եւ այս էս
մի՛ լիցի 'ի ձէնջ ծածկեալ սիրելի՛ք, զի մի օր
տեառն իբրև զհազար ամ է, և հազար ամ իբրև
զմի օր։ Ոչ յամենայնայն տէր զաւետիսն՝ որ-
պէս ոմանք յամր համարին, այլ երկայնամիտ լի-
նի առ ձեզ. քանզի ոչ կամի՝ եթէ ոք կորիցէ,

այլ զամենեցուն հասանիլ յապաշխարութիւն, Բ. Պետ. 4. 8 — 10։ «Զոր արդ՝ Եթէ այսպիսի գը-
թած տէր ունիմք որ ոչ կամի Եթէ ոք կորիցէ, այլ զի ամենեքեան ապաշխարութեամբն ապ-
րեսցին։ Ապա և մեք մի՛ վերջասցուք յապաշ-
խարութենէ և մի՛ դանդաղեսցուք աղաչել
զերեսս նորա։ Այլ մատիցուք առաջի շնորհաց
աթոռոյ նորա և գտցուք զողորմութիւն 'ի դէպ
ժամանակի։ Արդ քննեսցուք մեք որ կարօտ եմք
ապաշխարութեան, Եթէ զի՞նչ է աթոռ շնոր-
հաց ասացեալն 'ի Պօղոսէ։ Աթոռ շնորհաց ասէ
զաթոռն արքունական. այսինքն զհայրականն։
Որպէս և ասաց իսկ ինքն. Նիստ ընդ աջմէ իմմէ
մինչև դիցին թշնամիքն պատուանդան ոտից քոց։
Արդ ցորչափ եմք 'ի կենցաղս յայս, չ'պատիմք
յուսահատ լինիլ, թէպէտ և մեղաւոր եմք.
զի դատաւորն յաթոռ շնորհաց անցեալ նստի.
և ամենայն պարտապանաց ձրի շնորհէ զթողու-
թիւն։ Ուրեմն զբիւր քանքարն. ուրեմն զհինգ
հարիւր դահեկանն. և ամենեցուն մի ըստ միոջէ
ըստ փոքրուն և ըստ բազմին։ Զառնէ անտես
և ոչ զմի ոք. այլ ամենեցուն ողորմի. ամենե-
ցուն բաշխէ զշնորհսն։ Այնպէս յայնցանէ արգե-
լու որ ոչ մատչին 'ի դէպ ժամանակի։ Այսոքն
զի դէպ ժամանակ է, որչափ զայս օրս 'ի ձեռին

ուենիմք։ Այսօր եթէ ձայնի նորա լուիցէք ասէ, մի՛ խստացուցանէք զսիրտս ձեր 'ի բարկութեան։ Եւ այսօր է օր ընդունելի և օր փրկութեան։ Ուրդ մի՛ զանց արասցուք զդէպ ժամանակաւն։ Այլ կացցուք մնասցո՛ք յառնելոյ դատաւորին 'ի շնորհայ աթոռոյն զի այն ո՛չ է դէպ ժամանակ։ այլ դատաստանի և կորստեան ամբարիշտ մարդկան։ Այլ՝ արի՛ աստուած և դատեա զերկիր։ Ուրդ մի՛ մնասցուք դատապարտութեանն, այլ այսօր խոստովանեսցուք զմեղս։ այսօր թողթափիսցուք զվոշխս անօրէնութեան։ այսօր մատիցուք աղաչել զերեսս նորա։ Զի եթէ մինչ մեղաւորքն եմք և ապստամբք 'ի բանէ նորա, այսչափ սիրէ զմեզ այսչափ երկայնամիտ լինի և զղջանայ 'ի մեզս մեր, և մեծաւ թախանձանօք և աղերսելով կոչէ զմեզ յապաշխարութիւն։ Որչափ ևս առաւել խնայէ 'ի մեզ յորժամ տեսանէ զմեզ զղջացեալս։ յորժամ տեսանէ առաջի անկեալս։ յորժամ տեսանէ քուրձ զգեցեալս։ և 'ի վերայ մոխրոյ նստեալս։ և յանմխիթար սուգ ըմբռնեալս։ Յորժամ տեսանէ արտասուօք զերեսս թացեալ և զսմենայն գիշեր 'ի մահիճս լայեալ, և վաստակեալ 'ի հեծութեան։ Յորժամ տեսանէ զմոխիր իբրև զհաց կերեալ՝ և զըմպելիս արտասուօք խառնեալ՝ և

տկարացեալ 'ի պահոցն՝ և հոգովք մեղացն մաշեալ. չառնէ անառեւ. այլ առաւել գթայ և ողորմի և աղէկիկն. վասն զի հայր է գթութեամբ և աստուած ամենայն մխիթարութեանց ,, . 'ի գիր. բ. պետ. գ. 9. ՅՈՎ. Է։

Իբրդ նախ գիտասցուք՝ զի ամենայն խոստովանողք և յանձնառուք ապաշխարութեան՝ զեղայ իւրեանց զհամարս միայն տալ պարտին և ոչ զայլոց զմեղսն յիշել և պատմել. առ 'ի զանձինս իբր այնու արդարացուցանել, ՇԱՐ. ,, Ես եմ՝ ես եմ նոյն, որ ջնջեմ զանօրէնութիւնս քո վասն իմ. և զմեղս քո այլ ոչ ևս յիշեցից։ Այլ գրեզ յուշ լիցի՝ և ընդ միմեանս դատիցուք՝ ասա դու նախ զանօրէնութիւնս քո՝ զի արդարացիս ,, ԵՍԱՅ. ԽԳ. 25. 27։ ,, Այնուհետեւ՝ ՇԱՐ. երուսաղէմացիք՝ և ամենայն Հրէաստան՝ և ամենայն կողմն յորդանանու։ Իբրեւ մկրտեին 'ի նմանէ 'ի յորդանան՝ և խոստովան լինէին զմեղս իւրեանց ,, Մատ. գ. 5. 6։ ,, Իբրեւ բաղումք 'ի հաւատացելոցն գային, և խոստովան լինէին, և պատմէին զգործս իւրեանց ,, Գործ. ԺԹ. 18։ Իբրեւ լուսաւորիչն հոգւոյ մերոյ առաքելապատիւ Տէր Հայրապետն Գրիգոր, զսքանչելի արդիւնս ՀՇմարիտ խոստովանութեան և կատարեալ ապաշխարութեան՝ գեղեցիկ ինն հանդիսացուցանէ

առաջի մտայ մերոց ։ եթէ ։ Պարբերարին առ-
տուծոյ բարերար խնամքն ոչ անտես առնէ որք
դառնան առ նա. բանայ զդրուանս ողորմութեան
շնորհայ և ընդունի գթութեամբ երախտաւոր
սուրբ սիրոյն. և յանձանձէ զապաւինեալսն 'ի
նորա գթութիւնն՝ 'ի ձեռն Ճշմարիտ խոստով-
նութեա։ Զոր խոնարհեալ և բեկեալ սրտիւք
'ի զղջումն ոգաւորի ։ գթայ 'ի նա և ողորմի
և այցելու լինի վրկիչն։ Զի զծածկեալ մտքն
դառնութեան 'ի բաց փսխեայ ։ և եցոյց եթէ
զմեզ առեցի և անարգեցի և զոբէնս քո սիրեցի,
զառողջութեան և զսրբութեան և զարդարու-
թեան։ Զոր զստունդանութեան ցաւոցն 'ի մար-
դասէր բժշկէն զառողջութեան դեղս ընկալցի
զարդարութեան վարս ընդ դէմ մեղայ և դժն-
դակ ցաւոցն զոր ունէր։ Զի այլ մի' ևս անկցի
'ի նոյնն և այլ ոչ ևս գայցէ զմարդասէր բժիշ-
կըն։ Զի կոչէ մարդասէրն բանն տեառն զծան-
բաբերանեալսն խոստովանութիւն յապաշխարութեան.
զխաւարեալսն մեղօք՝ 'ի լոյսն արդարութեան.
և զմոլորեալսն՝ 'ի գիտութիւն Ճշմարտութեան.
և զկիսկեալսն 'ի Հանապարհայ արդարութեան՝
ածել յուղղութիւն. և զմահաբերս վարս՝ 'ի կեանս
վերստին նորոգել խոստովանութեամբ, և լու-
ծանել զնամ խարդախութիւնս սատանայի։ Զի

զամենայն մարդ կամի զի կեցցէն (ասէ առա-
քեալն) և 'ի գիտութիւն ճշմարտութեան հաս-
ցեն ամենագիւտ սիրոյն տեսչութիւնքն։ ։ Տիմ. Բ. 4։
Զի խոստովանութի (ասէ մարգարէն) մեծ վա-
յելչութիւն է առաջի տեր և քահանայից նորա։
Սաղ։ ղբ։ 6։ Զի ասացի ասէ Թէ պատմեցից
ինձէն զմեղս իմ, և դու թողցես զչար մեղաշ-
տութիւնս մեղաց իմոց։ Զի զվերսն բանայ և
զցաւսն յայտնէ։ և զբեղն բժշկութեան 'ի վերս
ածէ զղջմամբ, զապաշխարութիւն եռանդմամբ
հոգւոյն 'ի հանապազորդ արտասուալից աղօթսն
անդադար 'ի տուէ և 'ի գիշերի։ և ողորմի կեր-
պարանս ստանալով։։։ Յաճախ։ ճառ։ ֆԲ։

Երկրորդ ծանիցուք՝ զի Յիսուս Քրիստոս՝
մասնակարար այսր երկնապարգև շնորհաց՝ թո-
ղութեան և նեղողութեան մեղաց, կարգեաց զհո-
գևոր հովիւսն եկեղեցւոյ, զպաշտօնեայս իւր։
որպէս տարովն առաքելոյ զայս իշխանութիւն։
«Ամէն ասեմ ձեզ։ զոր կապիցէք յերկրի՝ եղի-
ցի կապեալ յերկինս, և զոր արձակիցէք յերկ-
րի՝ եղիցի արձակեալ յերկինս։ Մատ։ ԺԸ։ 18։
Վչէաց 'ի նոսա և ասէ, առէք հոգի սուրբ։ ե-
թէ ումեք թողուցուք զմեղս՝ թողեալ լիցի
նոցա։ եթէ զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի։։
Յովհ։ Ի։ 23։

Յիշեսցուք աստանօր և զերանելոյն Յով-
հաննու Ոսկեբերանի զնեռածութիւն 'ի վերայ
քահանայական բարձր պաշտօնի. «Որք յերկրի
աստ բնականան, և 'ի նոսին քաղաքավարին,
յերկնայնոցն սպասաւորուի կարգեցան և իշխա-
նութիւն ինն առին ընկալան, զոր և ոչ հրեշ-
տակացն և հրեշտակապետացն ետ ասծ։ Ոչ անգլի
նոցա ոչ ասայ, զոր միանգամ կապիցէք յերկ-
րի, Եղեցի կապեալ յերկինս, զոր արձակիցէք
յերկրի՝ Եղեցի արձակեալ յերկինս։ Ապաքէն
և որք յերկրի տեարք են՝ ունին և նոքա իշխա-
նութիւն կապելոյ, այլ զմարմինս միայն, իսկ
այս կապանք մերձին 'ի նոյն ինքն հոգին, և
զերկնիւք 'ի վեր անցանեն, և զոր միանգամ աստ
'ի խոնարհ գործեն քահանայք, նոցին 'ի բար-
ձունս վճիռ հատանէ ասծ, և զծառայից դա-
տակնիք տէրն ինքնին հաստատէ։ Ոչ անգլի զինչ
այլ՝ բայց թէ բովանդակ իշխանութիւն երկ-
նաւորացն ետ նոցա, զի որոց թողուցուք զմե-
ղս, թողեալ լիցի ասէ, և զորոց ունիցիք՝ կա-
՝ լեալ լիցի։ Այս արդ զինչ քան զայս իշխանու-
թիւն բարձրագոյն։ Զամենայն դատաստան
ետ հայր որդւոյ իւրոյ, այլ ես տեսանեմ՝ զի
զամ ետ 'ի ձեռս նոցա որդին. Գիր. Գ. Յաղթ.
տաճանոյսնիկ։ «Նակ զաւետարանին գործա-

կիցն զքահանայս սուրբս և զպաշտօնեայս է-
կեղեցւոյ որք սպասաւորք են սրբութեանցն
հրեշտակային կարգաւորութեամբն, ոչ վարկ-
պարագի համարեսցուք. այլ որպէս յայ կար-
գեալք 'ի փրկուէ հաւատացեալ ժողովրդեանն
աստուծոյ. ա. Տիմ. է. 17։ Զ'ի զառաջնորդս եկե-
ղեցւոյ 'ի տեղի առաքելոցն կարգէց Քրիստոս
քարոզս և ասաց. Որ զձեզ ընդունի, զիս ըն-
դունի, և որ զձեզ անարգէ, զիս անարգէ. Մաթ.
ժ. 40։ Ղուկ. ժ. 16։ Այլ դարձեալ ասէ. զոր կա-
պիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս. և զոր
արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս.
Մաթ. ԺԸ. 18։ Զ'ի իշխանութի որ յայ էն, զօրութի-
ունի մեղայ թողութեան, և ախտաժիտաց ա-
ռողջութի, և դիւաց հալածման 'ի մարդկանէ։
Զ'ի զոր ՀԾ կարգէ, զգործ ՀՅ գործէ շնորհօքն
Քրիստոսի։, Յ՚ՀՆԽ. ՀԱՄ. Ի։

Յորդորակ.

Սրտի մտօք ուշադիր լիցուք աստուածային
երկայնամիտ հայրական գթութեանն և անսխա-
կալ մարդասիրութեանն, որ մեղաւորացս յոր-
դորական քաջալերութիւն տայ՝ բանիւ երջանիկ
մարգարէից և առաքելոց սրբոց, առ 'ի փութալ

յուսալիք՝ սիրով՝ ի զղջումն և յապաշխարութիւն մեղաց մերոց։ Զայ։ «Լկայք խօսեցարուք ընդ միմեանս՝ ասէ տէր. և եթէ իցեն մեղք ձեր իբրև զձանձախարիսխ՝ իբրև զձիւն սպիտակ ա՞ռարիցս, և եթէ իցեն իբրև զորդան կարմիր՝ որպէս զսար սուրբ արարիցս։» Եսայ. ա. 18։ «Լմենեքեան ծանիցեն զիս՝ ի փոքրկանց նոցա մինչև՝ ի մեծամեծս՝ ասէ տէր, զի քաւիչ եղէց անիրաւութեանց նոցա. և զմեղս նոցա ոչ ևս յիշեցից։» Երեմ. լ. 34։ «Լոչ դու որդի մարդոյ՝ սակայն ցոունդ իսրայէլի. այսպէս խօսեցարուք՝ և ասացէք. եթէ մոլորուիքն մեր՝ և անօրէնութիքն մեր՝ ի մեզ են. և մեք՝ ի նոսին մաշիմք. և զի՞նդ ապրիցուք։ Լասա ցնոսա. կենդանի եմ ես՝ ասէ Լդ.օնայի տէր. ոչ կամիմ զմահ ամբարշտին, որպէս զդառնալ ամբարշտին՝ ի չար ճանապարհէն իւրմէ՝ և կեալ. դառնարարուք՝ ի ճանապարհաց ձերոց չարաց. և ընդէ՞ր մեռանիք տունդ իսրայէլի։» Եզեկ. ժ. 10. 11։ «Զ՞այս ամենայն մարգարէք վկայեն, թողութիւն մեղաց՝ առնուլ անուամբ նորա՝ ամենայն հաւատացելոց՝ ի նա։» Գործ. ժ. 43։ «Լչ յամենացուցէ տէր զաւետեան՝ որպէս ոմանք յամր համարին, այլ երկայնամիտ լինի առ ձեզ. քանզի ոչ կամի՝ եթէ ոք կորիցէ, այլ զամենեցուն հասանել յա-

պաշխարութիւն։։ Է։ Պէտ։ Դ։ 9։ «ԶԹէ ասի-
ցեմք՝ եթէ մեզ ինչ մեք ոչ ունիմք, զանձինս
խաբեմք. և ճշմարտութիւն ի մեզ ոչ գոյ։
Զպա եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հա-
ւատարիմ է նա՝ և արդար ի թողուլ զմե-
ղըս մեր, և սրբել զմեզ յամենայն անիրաւու-
թենէ։։ Ա։ Յովհ։ Ա։ 8։ «Ամ՝ հատցուք զյոյս ան-
ձանց մերոց եղբարք, և մի՝ կործանեսցուք զան-
ձինս մեր յանյոյս սատանուէ։ Օ՛ի չար է, չար է
չհաւատալ յուսոյ ապաշխարութեան, որ ոչ
ակնուանին փրկութեան, անխտիր անխնայ տայ
զանձն իւր ի մեղանչել. իսկ որ յոյսն կայ ի
բժշկութիւն, յայնմ հետէ խնայէ յանձն իւր։
Օ՛ի և աւաղակք, որոց հատեալ է յոյսն, և ոչ
ակն ունիցին շնորհին, յանդգնագոյն յօժարին ի
կորուստ. այլ յորժամ յուսան ի թողութիւն,
յապաշխարութիւն դառնան։ Ոձք մերկանան
զծերութիւն մարմնոյ իւրեանց, մեք ոչ կարաս-
ցուք թօթափել զմեղս մեր ի մէնջ։ Զբիկիր
փշաբեր տատասկաբեր ի պտղաբերութի՛ դառ-
նայ, առ ի դարման ածել հողագործաց, իսկ
մեզ այնչափ անհնար է ուղղել զանձինս ի թիւ-
րութենէ։։ կոչ։ ընդ։ ՃԽԹ։ Է։ «Զյսմ ասոյգ ա-
ւանդիցն դէմք ապաշխարութեան. ամենայն որ
ինչ հակառակ է մեղացն՝ առնել զարդարութիւն

ամենայն որ երևին և որ ոչն երևին։ Ի խոր հուբ-
դրս մտերիմն Ի յիշատակ աւետեացն ստոյգ ա-
պաշխարողաց։ և սպառնալեացն անապաշխարո-
ղաց յամենեցուն տէնէն։ Յայսոսիկ պարտէ
զգուշանալ և Ի պատրաստի ունել զՀաճոյն
աստուծոյ ահիւ տեառն։ յիշատակօք։ անվրէպ
գիտութեանն աստուծոյ։ համարս առնելոյ ար-
դար դատաւորին յաւուրն դատաստանին։ յո-
րում ոչ ինչ ծածկի Ի խորհրդոց Ի բանից և
Ի գործոց։ Զ Ի ընտրութիւնք են առաքինեացն
և պղերգացն։ հաւատացելոցն և անհաւատիցն։
և ըստ արժանեացն հատուցմունք։ Զու երանու-
թիւնք յաղթողացն են։ որք մարտեան ընդդէմ
մեղացն և հակառակորդին և յաղթեցին։ և պը-
սակեալք փառաւորին։ Զա և որք ստոյգ ապաշ-
խարեցին զվնասս իւրեանց։ Զոկ ահաւոր սպառ-
նալիք տանջանացն պաշարեն զանիրաւսն և զամ-
բարիշտսն Ի տոչորումն պատժոց որ ոչ անկան
յապաշխարութիւն։ Զու զնոնարհեալսն և ըզ-
նուաճեալսն ընդ կարգօք ապաշխարութեան՝
ընդունի յօթևանս կենացն ըստ արժանաւորու-
թեան մաքրմանն ըստ բազում ողորմութեանն
իւրոյ։ Զ Ի նեղելն և վտանգելն արտասուօք և
բարի շարժմամբ՝ յողորմութի դարձուցանէ յաղա-
գրս սխալանաց ինչ այնպէս զմարդասէր տրն։

Լու որպէս տղայք՝ որ ոչ գիտեն բառիւք զպէտս մարցն խնամոց առնուլ, այլ արտասուօք զպէտսն խնդրեն և առնուն 'ի խնամոյ սիրոյն. զի ոչ դադարին 'ի լալոյ՝ մինչև ամենայն խնամք 'ի մարցն կատարին և ապա դադարին և զուարճանան և հանգչին։ Այսպէս պարտ է լինել մեզ առ բարեգութ աէրն. որ խնամէ զմեզ 'ի յանեբևոյթս արարչական սիրովն. որ նստի յանարուեստ աթոռ, և բարեբարութեամբն իւրով խնամէ զարարածս։ Որ 'ի ձեռն նախահարցն ծանոյց զաստգիտութիւն. և 'ի ձեռն մարգարէիցն եցոյց զապաշխարութիւն որք դառնան առ նա։ Այսպէս 'ի դալստեանն իւրում եբաց զդուռն ողորմութեան և ասէ, ոչ էկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութի՝ խոստովանութեամբ՝ ապարչական խնամակալ սիրովն,, Ցաշխ. ՃՈՈ. ԺԲ։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Այրանելի առնէն զմարդն ամենայն առաքինական և աստուածահաճոյ գործք, և զոր գիտեն զգանազան բարութիւնս և զզօրութիւնս շնորհաց տանն աստուծոյ և տաճարի նորին սրբութեան, և զսքանչելի արդարութեան ներգործութիւնսն. որք սրտի մտոք և կատարեալ հաւատով խոս-

տովանին. Եթէ տէրն արդարութեան և սրբութեան անդ է հանդիսացեալ յաներևոյթս ըստքանչելի փառօքն և աստուածային զօրութեն. ապա է տիրապէս տուն աստուծոյ. անդանօր ըստ աղօթից մերոց և փառաբանութեանց. ապա է ճշմարտապէս տուն աղօթից. անդանօր սրբութիւն և քաւութի պարգևի ամենից մեզայ զըղջացելոց՝ և կատարեալ ապաշխարողաց. ապա իսկապէս է յարկ սրբութեան. ուստի հոգենուագ մարգարէն Դաւիթ, նախ՝ սրտաբիւրագ տենչանօք խնդրեաց, յասելն.,, Զցուք մեք ի բարուէ տան քո. սուրբ է տաճար քո սքանչելի արդարութեամբ,,. Սաղ. գր. 5։

Ի վերայ այսր բանի՝ սուրբ վարդապետն մեր ամբրոնացի տայ բացատրութիւն, սոյն օրինակ. ,,Ի թէ սա է այն վերին տանն բարութի և վայելչութիւն և փառք ճառագայթեալ լնու զՀոգին։ Յուրուական իրաց կենցաղոյս ոչ պարտի, վասն այսորիկ մաղթէ. Տուր և ասէ զՀոգիդ իմաստութեան գիտել զլեծութիւն փառաց ժառանգութեանդ.... Որպէս զի կարասցուք ասել, Ոչ գիտեմք զերևելիսս, այլ զաներևոյթսն,,. Է. Իոն. գ. 18։

Յետ այսորիկ՝ հոգենուագ երգանիկ մարգարէն, վայելչագոյն երանութիւնս նուիրէ ճանա-

չողաց զՅորդ արքայ տանն աստուծոյ՝ և սիրով յաճախ բնակէլոցն 'ի նմա։ «Երանի՛ ամենեցուն՝ որք բնակեալ են 'ի տան տեառն։ յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ »։ Սաղ։ ՀԴ։ 5։

Խոյն միտս գրէ և Երանելին Յոսրով Աղձևացեաց եպիսկոպոսն 'ի մեկնութեան ժամագրի։ «Մեծ երանութիւն մարգարէն համարի, օրհնել զաստուած 'ի տան նորա, երանելի են ասէ որ բնակեալն են 'ի տան տեառն յաւիտեանս յաւիտենից օրհնեսցեն զքեզ տէր։ Այսմ երանութեան հասեալ կանխեալքն 'ի տուն այ, և 'ի պաշտօն նորա, և 'ի փառաբանութիւն աբանուան նորա, 'ի պատուել զմեծութիւն նորա, գոհանան զշնորհացն աստուծոյ։

Այսպա այս նիւթական եկեղեցի գերագոյն ուրնի փառաւորութիւնս և աքանչելի շնորհաց զօրութիւնս, վասն զի աղբիւրն բարութեանց, և և տէրն փառաց Յն Քրիստոս 'ի սմա բազմեալ կայ և սուրբ հոգին աստուած աստանօր զիւր շնորհաբաշխութիւնս կատարելագործէ՝ և հայրն ամենակալ զիւր մարդասիրական խնամոց առատութիւնն 'ի սմա ճառագայթէ։

Այսպա ըստ Ոսկեբերանին և մեք խոստովանիմք զայս նիւթական եկեղեցի ուղղափառաց, գանձարան ահագին շնորհաց, որոյ սկիզբն եղև 'ի ՞ք

վերնատանն սիոնի։ ուր նախ սուրբ հոգին աստ-
ուած էլից զուռնն հողմով ։ և ապա 'ի դասս
սրբոցն առաքելոցն հանգեաւ հրեղէն լեզուօք։
«Եւ 'ի կատարել աւուրցն պէնտէկոստէից՝
էին ամենեքեան միաբան 'ի միասին։ Եւ եղև
յանկարծակի հնչիւն յերկնից՝ եկեալ իբ-
րև սաստիկ հողմոյ ։ և էլից զամենայն տունն
յորում նստէին։ Եւ երևեցան նոցա բաժա-
նեալ լեզուք իբրև 'ի հրոյ և նստաւ իւրաքան-
չիւր 'ի վերայ նոցա։ Եւ լցան ամենեքեան հոգ-
ւով սրբով։» գործ. Բ. 1—4։

Այս զայս ամենայն ուղղափառ դաւանութի
մերս առաքելական սուրբ եկեղեցւոյ։ զոր ասէն
Գրիգոր Նարեկացի հրեշտակերօն վարդապե-
տն։ ընդդէմ պիղծ տաղանդաւորացն Թոնդրա-
կեցւոց։ նոր Մանիքեցւոց։ «Դաւանիմք 'ի հա-
ւատ ուղիղ և անխոտորնակ ամբծուն՝ համ-
բուրիւ շրթանց ողջունեալ զկառուցեալս խո-
րան յանշնչական արձանաց աստուածային բնա-
կութեան եկեղեցւոյս շինուածոյ։ որ գերազանց
գտաւ և երկնի ամենաշարդ բարձրութեամբ։
որ 'ի նոցին իսկ առաքելականացն դասուց հիմ-
նեցաւ։ յաշակերտաց վերնոյն խնկեցաւ։ 'ի ըս-
պասաւորաց բանին պաշտեցաւ։ Ակնկալեն առեալ
կենացս այս գանձու 'ի վերնայարկն սրահէ։

խորհրդակատարն վայրէ։ զոր հոգին աստուծոյ
լցոյց։ փայլեցուցեալ 'ի նմա զօրութիւն յա-
ւուր մեծի պէնտէկոստէին։ նախ զտուն բարե-
տեսիլ՝ յօրինակ սրբութեան կատարման շնորհի
այսր եկեղեցւոյ կանխամեծար առաւելութեան,
յորում ապա և 'ի նմին բնակչացն տուաւ լու-
սանորոգ բաբեփառութիւն։ Ուստի արիւն հը-
զօրին այ բաշխեալ մատուցանի՝ յաւէտ քան
զՀաբելին մահու գուժարկու։ մեծաւ բարբա-
ռով ձայնի բերկրութեան կենդանութիւն ան-
մահութեան 'ի նմա ազդելով։ Հանզի ոչ է
կար զօրութեան ուրուք ընդ երկնաւ յանդի-
մանն արեգական 'ի սպասաւորութիւն խորհրդոյ
այսր ահաւորութեան ձեռնարկել, եթէ ոչ ընդ
թևօք սորին պահեսցի։ նա զի ոչ երկնիւք բա-
ւականանայ այս նուէր տէրունի մամնոյ, եթէ
ոչ զայս ձեղուն օրհնութեան ծածկոյթ ունիցի
վասն զի մահու անիծիւք հերքի այր ըստ օրի-
նին։ որ արտաքոյ խորանին այս վկայութեան
զաստուածային պատարագն մատուցանէ։ մա-
նաւանդ զի պարտաւոր արեան կոչեսցի։ որ ոչ
զանձինն օրինակ արիւն յայս նուիրան ընծայե-
ցուսցէ։։ Նարէկ։ հե։ Զայս տուն հրաշազարդ
և զյարկ սրբութեան՝ զնիւթական եկեղեցիս
աստուծոյ ուղղափառաց՝ 'ի հին օրէնս յաւու-

ըրս մարգարէից՝ իմաստութիւնն վերին զանազան նմանութեամբ և աքանչելի օրինակօք նշանակեալ ցուցանէր. որպէս նախամարգարէին Մովսէսի երկնահանգոյն խորանաւն 'ի լերինն Սինայ. ուր և երևեցոյց նմա և ժողովրդեան զլուսքանչելի զօրութիւնս և զփառս իւր. ուր հրամանս առեալ Մովսէս խօսէր ընդ աստուծոյ, և օրէնսուսոյց հանդիսանայր առաջի ժողովրդոյն։։ Ելից. ԺԹ. 1—2. գէրք։ Գոծ. է. 38։ Յաղագս աքանչելի և անսահման իմաստութեան ՀԱՅՍ, երգեմք զայս տուն շարական. ։։Որ 'ի սկզբանէ իմաստութեամբ հաստատեցեր զկիրճեցի հօր իմաստութիւն, զոր նախանկար տեսչութեամբ նշանակեաց Մովսէս խորանաւն երկնահանգոյն 'ի Սինայ լերինն լուսաւորելով փառաւքն այս։։ Աղնպէս և նահապետին Յակոբայ յայտնեաց աստուած զաքանչելի նկարն երկրեցւոյ յերկնայնոյ սանդուղն հրաշատեսիլ. ։։Այս ետես տեսիլ. և ահա սանդուղք հաստատեալ յերկրի, որոյ գլուխն հասանէր յերկինս. և հրեշտակք այ էլանէին և իջանէին ընդ նա։ Այս տէր հաստատեալ կայր 'ի նմա. և ասէ, ես տէր աստուած Աբրահամու հօր քոյ. և աստուած Իսահակայ. մի՛ երկնչիր. . . . Այս զարթեաւ Յակոբ 'ի քնոյ անտի իւրմէ՝ և ասէ, տէր է 'ի տեղուս յայս.

միկ, և ես ոչ գիտէի։ Զայնի հարաւ՝ և ասէ, ահեղ ինն է տեղիս այս, և ոչ է սա, եթէ ոչ տունն աստուծոյ, և այս է դուռն երկնից։։ Ծն. իբ. 12—17։

։։Ի. յս խորհուրդ տեառն մերոյ է՝ զոր ետես Յակովբ։ Դուռն երկնից է ինքն Քրիստոս որ-պէս և ասացն։ Ես եմ դուռն կենաց. և ամ՝ որ ընդիս մտանէ, կեցցէ յաւիտեան։ Իսկ Դաւիթ ասաց. Ի. յս է դուռն տեառն և արդարք մտանեն ընդ սա։ Իսկ սանդուղքն ևս խորհուրդ տեառն է. զի նովաւ ելանեն վերանան մարդիկք արդարք ի խոնարհութենէ ի բարձրութիւն։։ Զաքա. Ճաա. է։ Իսկ սուրբն Լեսոսրով Ինձև ացեց ետեսն գրէ յաղագս եկեղեցւոյն Քրիստի, յասէն. ։։Սա է սանդուղք յերկրէ յերկինս վերելութեան։ Իսկ եթէ զնաչէլուին Քրիստի և զգերեզմանն բաղ-ձամբք տեսանել, սատ զփափագն ընումք։ Բան-զի ուր պատարագի Քրիստոս, անդ է խաչելու-թիւնն։ Իսկ ուր մարմինն սուրբ առանց մարդ-կային նորա ոգւոյն ցուցանի, այն է և գերեզման նորին։ Իսկ ուր մեռելուին մեր կենդանանայ. անդ հաւատամք կենդանութիւն որդւոյն այ։ Զի թէ և մահու նշանակ է հացն և բաժակն, այլ կենդանի և կենդանարար է. զի ինքն ասաց, այս է հացն կենդանի, որ յերկնից իջեալ է։։ Դ։ Դ։

ֆոմոգրի։ Զմանապէս եղոյց մարդասէրն ՅԾ ըղ-
տիպ և զօրինակ եկեղեցւոյն՝ Զոյ նահապետ
ծառային իւրոյ, ի հրամայելն նմա շինել զտա-
պանն ապրեցուցիչ։ «Եւ ասէ տէր ՅԾ ցՆոյ.
Ժամանակ ՅՄ մարդոյ հասեալ է առաջի իմ.
զի լցաւ երկիր անիրաւութիւնք ի նոցանէ. և ահա՛
ես ապականեցից զնոսա և զերկիր։ Արդ արա՛
դու քեզ տապան ի չորեքկուսի փայտից. . . .
Եւ արար Զոյ զՅՄ, զոր միանգամ պատուի-
րեաց նմա տէր աստուած»։ Ծնն. ը. 13—22։ ա.
Պէտ. գ. 20։

«Զոյ օրինակ էր քՅի իւրումն արդարութեան.
և տապանն՝ եկեղեցւոյ։ Եւ պատուհանն ի
կողմանէ՝ բացելոյ կողին։ Եւ ագռաւն սևա-
տեսակ՝ մահացան թռչնոյն։ Աղաւնին՝ հոգւոյն
սրբոյ, և տերև ձիթենւոյն՝ օծման շնորհաց հո-
գւոյն որ յաւազանն աղբիւրացաւ։ Անձրևն՝
վարդապետութիւն կենարարին. և ջրհեղեղն՝ մկր-
տութեան աւազանին։ Արդ զորօրինակ զար-
դարսն ապրեցուցին շնորհքն ՅՄ տապանաւն ի
համաշխարհական կործանմանէն։ Զոյնգունակ և
զՅեղ ըստ նմին օրինակի կեցոյց մկրտութիւնն,
կամ ևս գէր ի վերոյ քան զօրինակն։ Զի թէ
օրինակն զգործ ՅՄարտութեանն վՅարէր՝ զի՞նչ
պէտք էին ՅՄարտութեանն։ Զյլ տեսցուք ե-

թէ զի՛նչ գործ օրինակին էին՝ և զի՛նչ ճշմար-
տութեանն։ Այ՛ն զի որ օրինակ էր տապանն
զառեալ կենդանիսն ապրեցուցանէր և եթ 'ի
ջրոցն հեղձմանէ. այլ բարուցն նոցա փոփոխումն
ոչ առնէր։ Այ՛ զի զգաղանսն՝ գաղանս արձա-
կէր յինքենէ, և զսողունսն սողունս, և զթռ-
չունս թռչունս։ Իսկ եկեղեցի վա՛ զի ճշմար-
տութիւն է, առեալ զգաղանամիտ որդիս մարդ-
կան, ոյք անասնոց անբանից նմանեցին և գա-
զանաց վայրենեաց՝ պէսպէս խայտաբղէտութիւ՛ մե-
ղացն, և նենգութիւ՛ և գաղանական յափշտակութիւ՛
և թունաւորութիւ՛. 'ի ձեռն մկրտութե՛ տուաղանին
արձակէ յինքենէ զգօնս և հանդարտս. զգա-
զանական խառնակեցիկ բարսն և զվայրենին՝
յընտանին փոփոխելով։ Որպէս զի ըստ մարգա-
րէութեանն՝ գայլք և գառինք 'ի միասին ճարա-
կեսցեն. և առիւծն խբրև զեզն յարդ կերիցէ։
Ո՛չ ոք ագռաւ սևացեալ և ո՛չ ինձ խայտաբ-
ղէտ։ Ո՛չ աղուէս նենգաւոր և ո՛չ գայլ յա-
փշտակող։ Ո՛չ առիւծ պատառօղ՝ և ո՛չ զուա-
րակ ցանկացող։ Ո՛չ ձի իգամոլ՝ 'ի կին ընկերին
վընչելով, և ո՛չ ուղտ ոխակալ։ Այ՛լ ամենե-
քեան գառինք, ամենեքեան ոչխարք. ամենեքե՛ն
աղաւնիք միամիտք, ամենեքե՛ն բանաւոր ծիծ-
ռունք, զՀոգևոր գարունն աւետարանելով։։

Սարգ. Հնարհ. 'ի Դեն. ա. գլխ. ՃԽԱ. Ը։

Եւ դարձեալ ասեմ. զզանազան զօրութիւն և զլուսաւոր վարդապետութիւն քեռական որ էկեղեցւոյն ազգի ազգի օրինակօք ցուցանէ մարգարէն Զաքարիայ 'ի ձեռն հրեշտակին՝ որ զարթոյց զմիտս նորա։ «Դարձաւ հրեշտակն՝ որ խօսէր ցիս, և զարթոյց զիս. զորօրինակ յորժամ զարթնուցու այր 'ի քնոյ իւրմէ։ Եւ ասէ ցիս՝ զի՞նչ տեսանես դու. և ասեմ, տեսանեմ ահա՛ աշտանակ ոսկի ձոյլ. և գունտ 'ի վերայ նր և եօթն ճրագ 'ի վերայ նորա, և եօթն բերանք ճրագացն՝ որք 'ի վերայ նորա։ Եւ երկու ձիթենիք 'ի վերայ նորա. մի ընդ աջմէ գնտին լուցելոյ՝ և մի ընդ ահեկէ»։ Զ. 1—3։ «Աշտանակ ոսկի՝ է եկեղեցի վասն անապական որ 'ի նմա յուսոյն և հաւատոյն։ Դակ գունդ 'ի վերայ նորա լուսաւոր՝ տէր մեր յիսուս քրիստոս, որ պայծառացոյց զեկեղեցի իւր ճառագայթիւք վարդապետութեանն իւրոյ։ Եւ եօթն ճրագք շուրջ զնովաւ՝ առաքեալք և մարգարէք, և յաջորդք նոցին՝ հարք և վարդապետք, որք բացեալ զբերանս մտաց ընդդէմ միայնոյ Աստուծոյ և ճշմարիտ պայծառ ջահին քրիստոսի՝ լուսաւորին 'ի նմանէ ճառագայթիւք հոգւոցն, և պայծառացուցանեն զամենեսեան բանիւ վարդապետութեան

իւրեանց, այսինքն զերկու ժողովուրդս՝ որք ի
Տրէից և ի Հեթանոսաց, զորս առակէր օրինակ
երկու ձիթենիքն, ըստ վկայութեանն Պօղոսի՝
որ ի Թուղթն Հռովմայեցւոց։։ ՝ Գ. Գ. 17. Նէր.
Լուիք. ՝ի գիր. երկ. Տարբ։

Զ. Զմարդ ոչ յիշատակեմ ասա զՍողոմոնեան
տաճարին շինութիւն. որ հրամանաւն աստու-
ծոյ պատրաստեցաւ գործ, յօրինակ եկեղեցւոյն
Քրիստոսի՝ և կատարեցաւ բարեբար կամաք
Նորին. ասէ զինչ շնորհս մեծամեծս ցուցանէ
նմա անդանօր. «Եւ երևեցաւ տէր Սողոմոնի
երկրորդ անգամ. որպէս երևեցաւ նմա ՝ի գա-
բաւոն։ Եւ ասէ ցնա տէր. լուայ ձայնի աղօ-
թիւդ քոյ և պաղատանաց, զոր պաղատեցար ա-
ռաջի իմ. արարի քեզ ըստ ամենայն աղօթից
քոյ. սրբեցի զտունն, զոր շինեցեր դնել զանուն
իմ անդ յաւիտեն. և եղիցին աչք իմ և սիրտ
իմ անդ զամ աւուրս։։ Գ. Գ. 2. 3։ Բ. Մնաց.
Է. 12—16։ Եւ՝ տաճարն այն ՝ի ձեռն իմաստնոյն
Սողոմոնի շինեցաւ. իսկ քրիստոսական սուրբ
եկեղեցին ուղղափառաց՝ ոչ ՝ի ձեռն մարդ-
կային ճարտարութեան հաստատեցաւ այլ ՝ի
ձեռն իմաստութեան հօր՝ Յիսուսի փրկչին
մերոյ ՝ի վերայ անշարժ հիման հաստատ ուղղա-
փառ դաւանութեան կանգնեցաւ, ըստ սրբա-

զան առաքելոյն Պետրոսի՝ որ 'ի կողմանէ բոլոր աշակերտակցացն խոստովանեցաւ. (եթէ դու ես Քրիստոս որդի աստուծոյ կենդանւոյ). որ ըստ խորհրդածութեան Ոսկեբերանի համեմատ իսկ էր աւետարանական բանից սրբոյն աւետարանչին Յովհաննու. «Դու բանն մարմին եղև՝ և բնակեաց 'ի մեզ. և տեսաք զփառս նորա՝ զփառս իբրև զմիածնի առ 'ի հօրէ, լի՛ շնորհօք և ճշմարտութեամբ։» Յովհ. ա. 14։ Ասասի ոչ միայն երանեալ յասելն. «Երանի է քեզ Սիմոն որդի Յովհաննու, զի մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ՝ այլ Հայրն իմ որ յերկինս է։» Իբանի ասա գրէ Յովհան ծորձորեցի. «Որովհետև զիս ասէ որ երևիմ. յառաջ քան զյաւիտեանս ի մանչաբ, և որ տեսանին՝ ասասուած 'ի սկզբան է անուանեցեալ, քնկալ և դու զերանական բարբառոյն զպատիւն, ասուցանելով՝ թէ որ յածածանս թուիթիւնն Ճրգեենան՝ զերանուին են ժառանգելոց. բայց զայս ոչ առանց հօր, ըստ թէ՝ ոչ ոք կարէ գալ առիս, եթէ 'ոչ Հայրն իմ ձգեսցէ զնա առիս։» Այլև ինքնին խոստանայ յետ երանութեանն՝ շինել և կառուցանել զեկեղեցի իւր 'ի վերայ ուղղափառ դաւանութեանն Պետրոսի հրամայելով, այսպէս. «Դու ես՝ քեզ ասեմ՝ զի դու ես վէմ, և 'ի վերայդր վիմի շինեցից զե-

կեղեցի իմ ,և դրուՆք դժոխոց զնա մի՛ յաղ-
թահարեսցեն,, Մաթ. ԺԸ. 16 —18 ։

Ի վերջ այսր բնաբանի և զրկ երանելի վրդպտն մեր Յովհան Ծորժորեցի. «Առակի իրա աւանդէ այսու բանիւ. նախ զինքն հօր հաւասար ցուցանէ իշխանութեամբ վարելով, թէ զոր-օրինակ հայր իմ ես քեզ ճանաչէլ զիս, նոյնպէս և ես զքեզ դնեմ վէմ հաւատոյ՝ ի քէն առ-նելով զսկիզբն, զի ոչ ասէ թէ առնեմ, այլ թէ՝ դու ես վէմ ։ Այս երկրորդ՝ ի վերայ այդր դաւանութեան հաւատոյ՝ զոր դու դա-ւանեցեր, շինեցից զեկեղեցի իմ՝ որ է կրկին. մի՝ ի քարանց և ի փայտից շինեալն. և միւս՝ որ ի հաւատոց միաբանութենէ շինեալ ժողովուրդք ի վերայ հիմանն տեառն և առաքելոց նորա, որպէս ասէ Պօղոս՝ հիմն այլ ոք ոչ կարէ դնել՝ քան զեղեալն որ է Յիսուս Քրիստոս, և թէ ես իբր ճարտարապետ հիմն եղի, զոր ասա վէմ ասէ՝ յորոյ վերայ զեկեղեցի շինէ,, ՝ի Դէն. Մաթ. ԺԶ. 17. 18։

Ուրեմն քրիստոսական եկեղեցին ուղղափա-ռաց հաստատեալ ՝ի վերջ անշարժ հիմանն ուղ-ղափառ դաւանութեան՝ ունի մեծութիւնաշք-նորհաց և փառաց, և ես և մեծամեծ զօրութիս փրկագործ և արդարացուցիչ խորհրդոց։ Այսպէս՝

քրիստոսական սուրբ եկեղեցին մեծ ասի՝ ըստ-
որում է ընդհանրական, տարածեալ գոլով ընդ
ամենայն աշխարհս քարոզութեամբ սրբազան ա-
ւետարանչաց, և առաքելոց սրբոց, զայս՝ «Յիշ-
թայք յաշխարհս ամենայն, և քարոզեցէք զաւե-
տարանն ամենայն արարածոց»։ Մարկ. ԺԶ. 15։
«Երբեւ լուաք զհաւատսն ձեր՝ որ ի Քրիստոս
Յիսուս տէր մեր, և զսէրն՝ որ ընդ ամենայն աբա-
ունիսն. վասն յուսոյն՝ որ պահի ձեզ յերկինս.
զորմէ լուարուք բանիւն ճշմարտութեան աւե-
տարանին, որ եհաս առ ձեզ՝ որպէս ընդ ամե-
նայն աշխարհս աճէ՝ և պտղաբերէ. որպէս և ի
ձերում միջի. յօրէ յորմէ լուարուք՝ և ծա-
նեայք զշնորհսն աստուծոյ ճշմարտութեամբ՝
որպէս և ուսարուք յԵպափրեայ սիրելւոյ ծա-
ռայակցի մերմէ, որ է հաւատարիմ վասն ձեր՝
պաշտօնեայ Յիսուսի. որ և պատմեաց մեզ զձեր
սէրն հոգւով։ . . . Զթէ կայցէք ի հաւատսն
արմատացեալք և հաստատեալք. և անշարժք ի
յուսոյ աւետարանին՝ զոր լուարուք, քարոզելոյ
ընդ ամ արարածս ի ներքոյ երկնից. որոյ եղէ
ես Պօղոս պաշտօնեայ։ Կող». Գ. 4—8, 23։
Երկրորդ մեծ ասի՝ զի անդրդուելի ունի զհիմն
մինչև ցվախճան աշխարհի. «Զնացէք այսու-
հետև՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս.

մկրտեցէք զնոսա յանուն Հօր՝ և Որդւոյ՝ և Հոգւոյն սրբոյ։ Ուսուցէք նոցա պահել զամենայն՝ որ ինչ պատուիրեցի ձեզ. և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչև 'ի կատարած աշխարհի։» Մատ. իբ. 19. 20։ «Որպէս հաստատեցէք զձեզ մինչև 'ի կատարած՝ անարատս՝ յօր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։» Ա. Կոր. Ա. 8։ «Այ ընդ մեզ Յիսուս Աշխարհապէս 'ի ձեռն փրկական մարմնոյ և արեան իւրոյ խորհրդոյն, զոր աւանդեաց 'ի յիշատակ մասնոյ իւրոյ կատարել. որպէս և Պօղոս գրէ թէ՝ քանիցս անգամ ուտիցէք զհացս զայս՝ և ըմպիցէք զբաժակս զայս, զմահ տեառն պատմեցէք՝ մինչև եկեսցէ նա։» Յովհ. Գործք. 'ի Դէն. Մատ. իբ. 20։

Այրորդ՝ քրիստոնասիրեն՝ եղ եկեղեցին՝ ուշի անսահման մեծութիւն ըստ խորհրդոյն փրկարար անօրինութեան և անձառելի մարդեղութեան բանին աստուծոյ Յիսուսի փրկչին մերոյ։ «Այլ յայտնի խակ մեծ է խորհուրդն աստուածասուէ, որ երևեցաւ մարմնով՝ արդարացաւ հոգւով՝ յայտնեցաւ հրեշտակաց՝ քարոզեցաւ 'ի հեթանոսս՝ հաւատարիմ եղև յաշխարհի՝ և վերացաւ փառաւք։» Ա. Տիմ. Գ. 16։ Նոյն զայս սքանչելի խորհուրդ՝ փառաբանելով երգէ սուրբ եկեղեցին մեր. «Այսորհուրդ մեծ և սքանչելի, որ յայսմ

աւուր յայտնեցաւ, հովիւքն երգէն ընդ հրեշ-
տակս տան աւետիս աշխարհի,, . Շարակ։

Զորրորդ՝ ունի մեծութիւն շնորհաց խորհր-
դաւոր մկրտութեան, որով զմկրտեալսն յանուն
ամենասուրբ Երրորդութեան, կազմէ նախ՝ սր-
բալոյս միւռոնաւ տաճար 'ի բնակութիւն հոգ-
ւոյն սրբոյ. երկրորդ՝ որդեգրեալ հօր ասուծ-
ոյ՝ համարձակութիւն տայ կարդալ . (Հայր մեր
որ յերկինս ես). և երրորդ՝ եղբայր առնէ էա-
կից և վառակից որդւոյն ասուծոյ Յիսուսի
Քրիստոսի . լուր վկայութեանցս. ,,Նուք յայ
էք որդեակք՝ և յաղթեցէք նոցա. զի մեծ է որ
'ի ձեզդ է՝ քան զայն որ յաշխարհին է,,. ա.
Յովհ. դ. 4։ ,,Նոսկ որք ընկալանն զնա, ետ նոցա
իշխանութիւն որդիս այ լինել. որոց հաւատաս-
ցեն յանուն նորա։ Որք ոչ յարենէ, և ոչ 'ի կա-
մաց մարմնոյ՝ և ոչ 'ի կամաց առն. այլ յայ ծը-
նան,, . Յովհ. ա. 12։ ,,Զի որք հոգւովն այ վարին,
նոքա են որդիք այ։ Զի ոչ առիք զհոգին ծա-
ռայութեան միւսանգամ յերկիւղ. այլ առիք զհո-
գին որդեգրութեան. որով աղաղակեմք աբբայ հայր։
Այն ինքն հոգին վկայէ հոգւոյս մերում,
եթէ եմք որդիք ասուծոյ։ Այլ եթէ որդիք,
ապա և ժառանգք. ժառանգք ասուծոյ. և ժա-
ռանգակիցք Քրիստոսի,, . Հռովմ. ը. 14 — 17։ Այլ

սուրբն Յովհան ասկէբերան գրէ. «Լրթէ որդի լինել աստուծոյ՝ անպատուում շնորհք են, զմտաւ ած զինչ ի նոցէ ի ժառանգն լինել»։ Յոհ. Գ։ «Ոչ գիտէք՝ երթէ տաճար էք աստուծոյ՝ և հոգի այ բնակեալ է ի ձեզ։ Լրթէ ոք զտաճար աստուծոյ ապականէ, ապականեսցէ զնա ած. զի տաճար աստուծոյ սուրբ է, որ էք դուք»։ Ա. Կորն. 4. 16 · 17։ «Յայնժամ ասէ ցնոսա Յա՝ մի երկնչէք, երթայք ասացէք եղբարցն իմոց՝ զի երթիցեն ի Գալիլեա՝ և անդ տեսցեն զիս»։ Մաթ. իբ. 10։ «Ի զորս յառաջն ճանաչէր՝ յառաջագոյն և հրաւիրեաց կերպարանակից լինել պատկերի որդւոյն իւրոյ. զի եղեցի նա անդրանիկ ի մէջ եղբարց բազմաց»։ Հռովմ. ը. 29։ «Ի որ սրբեն՝ և որ սրբին՝ ի միոջէ էին ամենեքին. վասն որոյ ոչ ամօթ համարի եղբարս անուանել զնոսա և ասէ։ Պատմեցից զանուն քո եղբարց իմոց. ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ»։ Եբր. Բ. 11 · 12։ «Լու արար զմեզ իւր եղբարս ըստ մարգարէին աւետարանեցից զանուն քո եղբարց իմոց»։ Զքոն. ած. ի։ Ոչեաց զմեզ և որդիս, զի զՀայրենական խնամն վայելիցեմք և մի յորդեգրութենէն արտաքս ելցուք անսուրբ վարուք. զի աբ է տէր և ի սուրբս բնակեալ և եղբարս իւր անուանեց զսուրբսն։ Պատմեցից ասէ զանուն քո

եղբարց իմոց. և 'ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ՝ հայր». Յաճախ. Ճառ. ժ։

Հինգերորդ՝ մեծ և սքանչելի փառաւորուի սուրբ եկեղեցւոյն է և այս իսկ. զի կանգնեալ ունի յինքեան զամենայնկաքի սեղան սրբութեան և անմահութեան. յորոյ վերայ խորհրդաբար պատարագի անմահարար և մեղաքաւիչ գառն աստուծոյ փրկիչն աշխարհի. և բաշխի արժանապէս մերձեցողացն և ճաշակողացն զհացն անմահութիւն և զբաժակն փրկութեան, ըստ այնմ. «Բաժակն օրհնութեան զոր օրհնեմք՝ ոչ ապաքէն հաղորդութի՛ է արեանն Քրիստոսի, հացն՝ զոր բեկանեմք, ոչ ապաքէն հաղորդութի՛ է մարմնոյն Քրիստոսի». Ա. Կոր. ժ. 16։

Այս բան սրբազան առաքելոյն Պօղոսի ունի հիմն ամենահաստատ ճշմարտութիւն ցՅոի Քրիստի՝ զոր աւանդեաց սրբազան առաքելոյց իւրոց 'ի սուրբ սիոն վերնատան 'ի հրաշալի և 'ի խորհրդական յիւրումն սեղանի. որպէս գրէ սրբազան աւետարանիչն. «Ա՛ռ Յե հայ՝ օրհնեաց և եբեկ, և ետ աշակերտացն՝ և ասէ. առէք կերայք՝ այս է մարմին իմ։ Այլ առեալ բաժակ գոհացաւ՝ ետ նոցա և ասէ. արբէք 'ի դմանէ ամենեքին։ Զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ 'ի վերայ բազմաց հեղանի 'ի թողութիւն մեղաց». Մատ. ԻԶ. 26 — 28։

Հարկ իսկ է հաւատացելոցս ճանաչել հաւատոյ աչօք և սրտի մտօք եթէ՝ քանի՛ քանի՛ փառաւորութիւնս և շքեղութիւնս ունի այս ոչ սեղան, հոյետոյ ասէ՝ սուրբն Կիւրեղ՝ ի ճառի հաղորդութեան, ՝ի պատրաստողն, վա՜ղ ի՛ փառաւորութիւն սեղանոյն ջանիլ և կամ ճանաչի՝ ի մեծ փառաւորութենէ և ի հարստութենէ պատրաստողին։ Կ՚ըդ հաւատամք եթէ ոչ է պատրաստող սեղանոյս սրբութե՛ն, ապա ամենամեծ և փառաւորագոյն է սքանչելի այս սեղան խորհրդոյ, ահա՛ այս սեղան փրկութեան հոգւոյ՝ ի մարդասիրական խնամոյն ոչ նախատեսմանեալ և պատրաստեալ տեսանէր մարգարէական հոգւով երջանիկն Դաւիթ. վայ գոհաբանութի՜ երգէր զայս տուն սաղմոս. «Պատրաստ արարեր առաջի իմ սեղան՝ ակն յանդիման ներշչայ իմոյ, Սաղ. ԻԳ. 6։ «Անգնեալ՝ ի սմա սեղան սրբուե՜ն, բաշխեալ զմարմին իւր և զարիւն, և տայ ի սմանէ մեզ նորոգութիւն ի թողութիւն մեղայ մերոյ»։ Հարկ։

Այլ զայս պարտ է գիտել ամենեցուն մեզ, եթէ որպիսի հարկ ի վերայ իւրաքանչիւր հաւատացելոյ անձին կայ՝ մաքրուիլ սրտի և ջերմեռանդութեամբ հոգւոյ մերձենալ յայս սուրբ խորհուրդ աստուածային. զի մի՛ դուցէ փոխանակ

արքունեան և արդարութեան՝ անարժանութիւն մե-
ղով կրկին դատապարտութեան լիցուք արժա-
նի։ Վայ իրատեղ զմեզ արքաշան առաքեալն Պօ-
ղոս քարոզելով։ այսպէս։ «Այս հետեւ՝ որ ու-
տիցէ զհացս։ կամ ըմպիցէ զբաժակս տեառն
անարժանութիւն։ պարտական եղիցի մարմնոյ և ա-
րեան տեառն։ Փորձեսցէ մարդ զանձն իւր։ և
ապա 'ի հացէ անտի կերիցէ։ և 'ի բաժակէն
արբցէ։ Զի որ ուտէ և ըմպէ անարժանութիւն՝
դատաստան անձին իւրում ուտէ և ըմպէ։ զի
ոչ խորհի զմարմինն տեառն։ ։ ։ ։ Զի եթէ
զանձինս քննէաք՝ ապա ոչ դատապարտիաք։։։»
Կոր։ Գ։ 27—31։ Իսկ յորժամ ստոյգ խոստո-
վանութեամբ և կատարեալ ապաշխարութիւն մեր-
ձենամք առ սուրբ և փրկաւէտ հաղորդութիւն։
յայնժամ ստանամք քաւութիւն մեղաց մերոց։
զի յայս միոս քարոզեաց մեզ առաքեալապատիւ
հայրապետն մեր և լուսաւորիչ՝ սուրբն Գրի-
գոր։ «Այլ ստոյգ խոստովանողք ապաշխարողք՝
ազատեալք լինին փրկաւէտ մարմնով և արեամբն
Քրիստի։ զի նա է յոյս մեր և առիթ քաւութեան։ և
նովաւ լինի ազատութիւն և մուտ յուրախութիւն և
'ի ժառանգութիւն արդարոց։ երախտեաց Քրիստի որ
սիրոյն որ արդարացուցանէ զմեղաւորս թէ ա-
պաշխարեսցեն։» Յաճախ։ Ճառ։ ԺԲ։ «Զանց խոս-

տովանութիւն մեղք ոչ քաւին ; և առանց ապաշ-
խարութեան՝ հաղորդութեան արժանի ոք ոչ լի-
նի։։ Խոսրով. 'ի Դեր. քանոնքի։

Տե՛ս զորպիսի սքանչելի զօրութիւնս հաղոր-
դութեան մարմնոյ և արեան կենարարին մերոյ
Յի՛սուսի ցուցանէ սրբազան աւետարանիչն Յով-
հաննէս, յասելն. «Արիւն Յի՛սուսի որդւոյ նորա
սրբէ զմեզ յամ մեղայ։։ ա. Յով. ա. 7։ «Ով
առատ պարգևացն. ով մեծի մարդասիրութեն և
անեղծական գթութեանն. (արիւնն ասէ յի՛սուսի
որդւոյ նորա)։ Տեսանեմ զահագին բարբառս.
տեսանեմ զարժանի զարմացման բանս։ Ա՛ն-
զի զարիւնն այ խոստովանի. և արեամբն այ ա-
սէ եղաք փրկեալք և ազատեալք։։։։ Զ՚ս զա-
մենայնն աւելով՝ զմեծն զեկոյց և զիսքրն։
Սրին վա՛ ասայ, (արիւն յի՛սուսի որդւոյ նորա)։
Ամենայնեն ամ հերետիկոսք որք սոսկ մարդոյ
ասեն զարիւնն քի՛ անխառն յաստուածութենէն։
Օ՛ի ահա՛ աւետարանիչս զարիւնն՝ որդւոյն այ
խոստովանի. և որդի՛ այ բանն աստ է հանդերձ
առեալ։ Ամենայնեն և որ երկուս որդիս
խոստովանին զմի՛ քն այլև այլ բնութիւն. զի ա-
հաւասիկ սա մի՛ որդի դաւանի այ և ոչ եր-
կուս. և մի՛ բնութի՛ նորա։ Ամենայն ասասցեն որ զեր-
կուսադ քարոզեն՝ եթէ յոր բնութի՛ արիւնն սբր-

բարար լինելոյ։ Այլ թէ ասէն 'ի մարդոյն բնութիւնէ, սոսկ մարդոյ արիւնն զաշխարհս 'ի մեղաց զնա՛ մարդ սրբէր։ Այլ եթէ ասէն յայ բնութիւնէն, և զայս սարսափելի է լսել. զի 'ի բնութիւնն այ արիւն ոչ է. ապա յայտ է. մի որդի է այ բանն մարմին եղեալ, և մի բնութիւն նը։ Այլ արիւնն՝ այ արիւն. որպէս և մարմինն՝ այ մարմին։ Սարգ. Ներս. 'ի Դեն. ա. Յով. ա. 7. Ճառ. Բ։

Զայս երանի է արժանապէս հաղորդելոցն՝ որք ոչ միայն սրբին 'ի մեղաց, և ընդունին ըշխնորհս յաւիտենական կենաց, այլ ընդ այ միանան և զգենուն 'ի հոգիս իւրեանց զանմահատեսակ նմանութիւն, ըստ անժխտելի հրամանին Յաի. «Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, յիս բնակեսցէ, և ես 'ի նմա։» Յով. զ. 57։ «Հաւատալ պարտ է 'ի փրկական խորհուրդն՝ ստուգապէս մարմին և արիւն քո՝ որով միանամք 'ի քրիստոս, և ժառանգակից նորուն լինիմք. . . . Հաղորդութիւն կոչէ՝ զի կցորդն նա մեզ և մեք նմա։» Խոսրով. 'ի Դեն. պարապ. Ի։ «Որք արժանաւորապէս ճաշակեն զհացն յերկնից խլեալ ըստուգողն կենաց աշխարհի, և ըմպեն զարիւնն անմահացուցիչ՝ կենդանեցն այ. . . . Զանատեսակք եղեալ և յանմիացեալ ճանաչեն, զի քաղցր է տէր։ Այլ գիտեն զայս իսկապէս խորհրդ-

դաշդաձք խորհրդոյն. նոցա թողութիւն խմանալ. եթէ որք առանց խղճի մտաց մերձենան 'ի աբ սեղանն և ճաշակեն զմարմին անարատ գառինն և ըմպեն զմեղսաքաւիչ արիւնն՝ որքան ուրա- խութեամբ ընուն, ընդ ած միանալոյն։ Սարգ. Նորհ. 'ի Դէպ. Պետ. Յ. Ճառ. Դ։

Պարքէն պարտ է այսր սրբուհի սեղանոյն, և ճծային վրկարար խորհրդոյն սպասաւորացն ընդ քահանայական պաշտօնի ուներ սիրտ սուրբ՝ անեղկեալ հաւատ, հաստատուն յոյս, և կա- տարեալ սէր. վասնորոյ 'ի խրատ և 'ի զգուշու- թիւն նոցին գրէ 'Ներսէս շնորհալի աբ հայրա- պետն մեր. «Նա որովհետև արժանի եղէք յերկնային գործ մատուցանել զանձինս, մի՛ և մի՛ իւիք պատճառս տայք արատոյ անկանիլ 'ի պաշտօնդ ձեր՝ ըստ առաքելոյն խրատու։ Նայլ՝ արիաբար և յոժարամիտ սրտիւ առանց ծու- լութեան զկանոնեալ սահմանս աղօթիցդ սուրբ հարցն անթերի կատարեցէք ըստ իւրաքանչիւր ժամու։ Նու մաքուր հոգւով և աբ սրտիւ և ա- նարատ հաւատով և մեծաւ յուսով և պարզ մտօք և կատարեալ սիրով՝ ահիւ և դողութ սպասաւորեցէք ճծային խորհրդոյն, և մի իբրև ջուր ընդ խողովակ անցանէք անմտաբար ընդ խորհրդական բանս աղօթիցն՝ զոր մատուցանէք,

եթէ սաղմոսերգութիւնք էն և եթէ ընթերցումն ոբ գրոց, եթէ պաշտօնէրգութիւն և եթէ քահանայական աղօթք սբ պատարագին և այլոց կարգադրեալ կանոնացն, այլ յոյժ մտաւորաբար և թէ գոյ հնար արտասուօք և մեծաւ երկիւղիւ, որպէս թէ դուք նորոգապէս բղխէք զնոսա 'ի սրտէ և 'ի մտաց ձերոց. զի ամենեքեանքն խնդրուածք էն առ աստուած զանազան և պէսպէս պարգևաց և բարութենց մեզ առ 'ի նմանէ։ Այլ ինքն պարգևատուն բարեաց ՝ՀԾ, յորժամ տեսանէ զչէնմեռանդն հայցուածս խնդրողին, առաւել առատապէս շնորհէ զնոսա խնդրելին, ըստ եթէ՝ որ խնդրէ առնու, և որ զկնի։ . . . Այլ՝ ոք ծածկելով յոգի իւր զգործս մեղաց առանց ճշմարիտ խոստովանութեան, և այնպէս մատիցէ 'ի տերունական խորհրդոյն սպասաւորութիւն, զի մի՝ զբարկութիւն աստուծոյ շարժեսցէ 'ի վերայ ինքեան և աշխարհի, և 'ի բաց ընկէսցի յաստուածային հարսանեացն. քանզի զնաւարատեսակ մեղայն զգեցեալ պատմուճան եմուտ յեկեղեցի աստուծոյ. որ է օրինակ վերին հարսնարանին, որ և լսելոց է զահագին բարբառն. ընկե՛ր զի՞արդ մտեր այսրը՝ զի ո՛չ ունէիր հանդերձ հարսանեաց. և թէ հանէ՛ք զդա արտաքս, այս է՝ յարքայութե-

նէ, և կորեցէք զդա ընդ մէջ, այսինքն՝ զՀաւատն և զՇնորհս սուրբ աւազանին և զքահանայութիւնն 'ի բաց մերկացուցէք, և մասն դորա ոչ ընդ հաւատացեալս, այլ ընդ անհաւատսն լիցի։ Զանգի ոչ հաւատաց եթէ մարմնոյ և արեան ասուծոյ սպասաւոր է, այլ հաց լոկ և գինի համարեցաւ, և վասն այնորիկ անարժանութեամբ ժպրհէնալ առանց խոստովանութեան....Լաւ եթէ ոք 'ի քահանայից խառնէլոց ընդ ընկերսն՝ սիրէ զատելութիւն քան զսէր, և զխռովութիւն քան զհաշտութիւն, և ոչ լուծանէ զտրտմութեան պատճառն և հաշտեսցի ընդ եղբօր իւրում, 'ի խոնարհել մեղայն և 'ի խնդրել զՀաշտութիւն, մի՝ իշխեսցէ զքահանայագործութիւն առնել, որչափ զգնեն տրտմութեան և բարկութեան յինքն բնակեցուցանէ, զի զինչ հաղորդութիւն է լուսոյ ընդ խաւարի, ասէ առաքեալ, կամ քրիստոսի ընդ բեղիարայ։ Զանգի գրեալ է թէ՝ որպէս որ զսէրսն ունի՝ զատուած յինքն բնակեցուցանէ, զի աստուած սէր է, նոյնպէս՝ և որ զատելութիւն ունիցի՝ զատանայ յանձն իւր դարմանէ, զի կերակուր է նորա ատելութիւնն, որպէս և ամենայն գործք չարեաց։ Վասն որոյ ամենայն ոք 'ի ձէնջ որքան ատելութեան ախտիւ տայ տե-

ղի սատանայի ընդարձակագոյն յինքեան, քրիս-
տոսի մարմնոյն և արեանն ոչ է արժանի բնա-
կութեան. և թէ ոմանք աղութեան և նենգու-
թեան հոգւով յանդգնի առնուլ զնա, նման լի-
նի յուդայի մատնչի՝ որ յետ պատառոյն ասա
եմեալ 'ի նա սատանայ։ Հ։ Գ։ Հ։ ՅԵՂԿՈՒԹ։

Յորդորակ։

Սիրելի քրիստոսահիմն սուրբ եկեղեցի՝ յորում
գուսարին Ճշմարիտ հաւատացեալք՝ իբրև ընտ-
րեալք գաւիանն Քրիստոսի 'ի խորհրդական փա-
բանի, 'ի տաճարին աստուծոյ. ունի զանազան
փառաւորութիւնս, մեծամեծ զօրութիւնս և
աքանչելի վայելչութիւնս 'ի վերուստ անտի յա-
մենասուրբ Հոգոյդ ութենէն 'ի սմա ներգործել
և շքեղազարդեալ։ Ա՛ սանորոյ յորդորիմք ուշ-
զաւիառ հաւատացեալքս սուրբ սրտիւ և հաս-
տատուն հաւատով և անեղկեայ յուսով առ
այս դիմել, և յաստուածային մեծի տանս փա-
ռաբանութեան ուղղել և 'ի վեր ընծայել հօր
աստուծոյ զաղօթս և զկնդրուածս մեր. 'ի յար-
կիս սրբութեան, 'ի տեղւոջս բաշխման փրկա-
բար խորհրդոյ՝ կենարար մարմնոյ և արեան Յի-
սուսի որդւոյն աստուծոյ. 'ի զանձարանիս մեծի շնոր-

հաւաշխութեան ուղղափառ դաւանութեամբ փառաւորելի խոստովանութեամբ եկեղեցապան-նել ամենաւոր երեքանձնեայ աստուածութեան։ զի է սրբափայլ տեղի ուղղափառ խոստովանու-թեան՝ սրբանուէր առ աստուած փառաբանու-թեան։ Ուստի առաջի աստուածընկալ սուրբ տեղանոյս սպասաւորք և պաշտօնեայք կենդա-նարար խորհրդոյն անմահ պատարագին, ի դէմս որդւոյն աստուծոյ առնեն զայս գոհաբանական մաղթանս։ «Ի յարիկի սրբութեան և ի տեղւոջս փառաբանութեան, հրեշտակաց բնակարանիս, և մարդկան քաւարանիս, առաջի աստուածընկալ և պայծառացեալ աբ տեղանոյս և աբ տե-ղւոյս խոնարհեալ երկիւղիւ երկիրպագանեմք»։ Խորհրդ։

Ահա՛ զայս ամենայն փառազարդութիւնս աս-տուածահիմն ընդհանրական եկեղեցւոյն յա-ռաջագոյն տեսեալ՝ երջանիկն Դաւիթ յորդո-ր զամենայն հաւատացեալս, ի սմա կատարել զնորհուրդս աստուածպաշտութեան։ «Լաւ օրհ-նեցէ՛ք ամենայն ծառայք տեառն զտէր։ ո՛ կայք ի տանն տեառն, և ի գաւիթս աստուծոյ մերոյ»։ Սաղ։ ճլգ։ 1։ Լաւ այսմ և հրեշտակակրօն աբ վարդապետն մեր Գրիգոր Նարեկացի յորդորէ զմիտս մեր Ճանաչել զմեծամեծ վայելչութիւնս

փառաց և շնորհաց աստուածընկալ տաճարիս սրբութեան, գրելով այսպէս. «Այն ինքն մառացումն առնէ այսակիր բարձանցն կռամոլութեան, զի զերկնայնոյն աստուածոյ ուրնի զծանութիւնն. օտարուն է ամենայնիւ դիցն դրօշելոց, զի 'ի համօրէն քարինս սորա քրիստոս երկրպագի. քակուումն է յայտնապէս ուրուական ըղձիցն անտառաց, զի 'ի բնաւից մայրից աշխարհի նմանութեամբ կենացն փայտի 'ի սմա տէրն նուիրի. խորտակումն է համայն դիւապատիր յուռթիցն արձանաց, զի քարն գովեալ կարկեհան ակամբք և վիմօք կենդանեօք այսրէն հատատի։ Այս յարկ չքնաղ և աստուածընկալ աղատ է միանգամայն 'ի յամենուստ ծառայութենէ. ոչ օրինակ վերնոյն սիօնի, քան թէ հրշամարտութիւն նմին ճանաչի. ոչ կռապաշուէն կապաւ բագին և կամ լծով օրինին տեղի պարտաւորութեան, այլ տէրունի բարերարութեն պարգևաբեռն 'ի մէնջ համբուրի։ Ոչ սասանի երբէք յայլ ինն կերպարան ձևոյ փոխարկեալ, այլ 'ի նոյն շուք փառաց մեծապէս ընդարձակի. սոյն ինքն և երկին երկնի յերկրի լուսապայծառ կերպիւ հուչակի։ Որպէս չ'է առանց հօրն Որդի, և ոչ առանց այսր մօր արգանդի յոգի կատարիչ։ Անտուն շրջի անբովանդակելին, եթէ ոչ 'ի

սին տան տաղաւարեցի։ ոչ ուշի տեղի գլխոյն հանգստեան տէրն բոլորից, եթէ ոչ 'ի յայս կայարան կենայ մնեալ ագանիցի։ Բան 'ի կամ վերնայինն երկնի՝ 'ի յայս հիւթաւոր բնակութիւն առաւել պարծի։ անբաւութիւ աստուածենն լուսոյն, որպէս զդէմս մարգարէին և զբրինակս սորին ծածկեցին, ոչ փախեան 'ի փառաց երեսաց նորին, և նմանութեան սորուն՝ որ 'ի տաճարին՝ ոչ հանդարտեցին, 'ի տոն հանդիսի մեծի գոլեստի, և 'ի բանականայս դասուց խրմբեալ նուագի։ ասա օրհնի կրկին բաշխանաք, քան 'ի դրախտն վայելչական։։ Նարէկ։ հե։

Սուրբն Յովհան ոսկեբերան 'ի Ճառի եկեղեցւոյն գրէ։ Զէ պարտ ասէ եկեղեցականաց արտաքոյ եկեղեցւոյ կատարել զխորհուրդս և զպաշտօնս նորա, որպէս և ուսանիմք 'ի սրբազան առաքելոց և յառաքելական կանոնաց, 'ի յարկի սրբութեան և 'ի տեղւոջ փառաւանութեան յաստուածընկալ տաճարին կատարել զաստուածային սուրբ պաշտօնն, եթէ ոչ յաստուծոյ պատուեալ և փառազարդեալ եկեղեցւոյն Քրիստոսի արհամարհութիւնս և անպատուութիւնս վերածեմք։ Զայս զգուշութիւն կամէր տալ յորդորանաք սիրոյ երանելի առաքելն Պօղոս սիրելի աշակերտին իւրոյ Տիմոթէի։։ Զայս

գրեմ առ քեզ՝ զի ակն ունիմ 'ի մօտոյ գալ։
Այլ թէ յամեցից՝ զի գիտասցես, թէ որպէս
պարտ է ընդ քեզ 'ի տան աստուծոյ շրջիլ. որ է
եկեղեցի աստուծոյ կենդանւոյ, սիւն և հաս-
տատութիւն ճշմարտութեան։։ ա. Տիմ. 4. 14. 15։
։։Բանդի ոչ է կար զօրութեան ուրուք ընդ
երկնաւոր յանդիմանն արեգական 'ի սպասաւորութի
խորհրդոյ այսր ահաւորութեան ձեռնարկել,
եթէ ոչ ընդ թևօք սորին պահեսցի. նա զի ոչ
երկնիւք բաւականանայ այս նուէր տէրունի
մարմնոյ, եթէ ոչ զայս ձեռնուն օրհնութեամբ
կոյթ ունիցի. վասն զի մահու անիծիւք հերքի
այր ըստ օրինին, որ արտաքոյ խորանի այս վկա-
յութեան զաստուածային պատարագն մատու-
ցանէ։։ Նարէկ. հե։ ։։Որ գործոյն և ողբութեան
գործելեացն. եկեղեցիք աստուծոյ խրթնա-
ցեալք, և ժողովուրդք 'ի նոցանէ քեցեալք։ Ոչ
կամայ ուր և լաւ ինքեանց հաշուեսցեն, անդ
զեկեղեցւոյ զլիաւն տան։ Այլ որ և զ դժնդա-
կըն. զի ոչ աստուծոյ, այլ՝ մարդոյ զնորայն տա-
նին պաշտօն. զի առ աւագս գլուղեցն 'ի պաշ-
տօն ժողովին. ոչ աստուծոյ, այլ նոցա պաշտօն
տանիլ. որպէս թէ գերազոյն նոքա քան զաստ-
ուած իցեն. զաստուծոյ տամքն զանց արա-
ռեալ. զնոցա տուեան նախաձեռար առնեն։ Որոց

'ի գէպ էր ասել զտէրունական բանն, Լրբ-
թայք տուք զկայսերն կայսեր՝ և զնոյն այ։։
խոսրով. 'ի Դէն. գլուխ գրի։

Լուվերայ այսր ամենայնի զոր ինչ գրեալ է
իրաւամբ և արդարութեամբ սուրբն Խարսեղ
մեծ հայրապետն 'ի ներբողն սրբոյն Պետրոսի
նախավկայի, զնորայն երկրորդէ հրեշտակրօն
աբ վրէպան մեր Գրիգոր նարեկացի 'ի մեկնութ
երգոց երգոյն 'ի բանն. (Պի է աղաւնի իմ)
«Լաւ զաղօթսն զոր յեկեղեցւոյն պարտ է առ-
նել առաջի սեղանոյ նորա։ուր սուրբ Լրբոր-
դութիւնն բնակեալ է։զայն 'ի գութս և 'ի հրա-
պարակս և յանսուրբ տեղիս պաշտեն։ և զեկե-
ղեցւոյ պատուն գութսայ և փողոցայ ասն. որ
դատապարտութիւն։ և ոչ ոգորմութիւն գտանեն վա-
յսր յանցանաց։ որ զեկեղեցի արհամարհեն և
արտաքոյ զպաշտօնն կատարեն. բազում բանից
և ողբալից աւաղանաց պէտք են։ որ զայսոսիկ
առնեն։։

Եղբ՝ զայս ամենայն զմտաւ ածեալ յորդո-
րեսցուք զմիմեանս յամ ժամ. փութասցուք 'ի
մի աբ կամաւորիկ եկեղեցի միաբան սիրով,
անարկբայ յուսով. աղաչեսցուք խնդրեսցուք
պահել և պաշտել զկամս աստուծոյ արարչին
մերոյ լուսաւոր և սուրբ մնօք առ 'ի հեռի

Ճեալ 'ի կորստական ճանապարհէն աշխարհասի-
ռութեանէ և հետևիլ 'ի լուսաշաւիղ ճանապարհս
աստուածային օրինաց և պատուիրանաց՝ որոյ
արժանացուք երկնից արքայութեան վառաց։

Այսպես մաղթանք քարոզութեան եկեղեցւոյ
ուժգինս աղաչեսցէ 'ի սիրոս և 'ի հոգիս մեր.
«Այնքանքս ամենեքեան 'ի՞նչ կամուղիկ և առա-
քելական եկեղեցի, աղաչեսցուք զմիածին որդին
աստուծոյ զտէրն մեր և զերկրիչն Յիսուս Քրի-
խատոս. որ էջ փառաւք հօր 'ի մէջ հնոցին և փր-
կեաց զերիս մանկուանսն 'ի քաղդէացւոց անտի,
լուսաւոր և սուրբ պահեսցէ զմիտս մեր, զի մի՛
երբէք խաբիցուք մեք 'ի մեղայ և 'ի ցանկուէ
աշխարհի։ Այլ արժանի եղիցուք պահել զպա-
տուիրանս նորա, առնուլ զպատկն լուսոյ և կե-
նաց 'ի յանձինս մեր. զոր խոստացաւ սիրելոյ իւրոյ
Աշմարիտն աստուած Յիսուս Քրիստոս տէր
մեր։ 'ի ժամանէրի։

ՎԵՐՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ·

Յարկ իսկ համարիմ ինձ ասասանօր յայտնել սիրելի և մեծահաւատ ազգիս ։ եթէ ո՞ւստի ստիպեցաւ նուաստուն մեր վոյթ ունել գրել զայս մատեան փոքրիկ · որ Ճոխիմասա ածաբանից է անկ ։ իսկ թերատես և տկարախոհ մտաց իմոց թերևս յանդգնուլ · ասկայն զօրացոյց և քաջալերեաց զիս սրբազան առաքեալն Պօղոս յորդորականբանիւս այսու ։ զոր երբեմն գրեաց առ Տիմոթէոս սիրելի աշակերտն իւր · «Այլ դուք որդեակ իմ զօրացիր շնորհօքն որ ի Քրիստոս Յիսուս։ Եւ զոր լուար յինէն բազում վկայիւք՝ զայն աւանդեցես հաւատարիմ մարդոց՝ որք բաւական լինին ։ և զայլս ուսուցանել ։» Բ · Տիմ · Բ · 1 · 2։ Եւ ընդ քաջալերական բանից սրբազնին առաքելոյն զհոգեշնչեալ բան մարգարէին Դաւթի ։ աղերս ինձ առեալ առ Հայրն ասասուած եթէ՝ «Օ Ճանապարհս քո տէր ցոյց ինձ ։ և դշաւիղս քո ուսո՛ ինձ։ Վասն այսորիկ օրէնսգէտ առնես զմեղաւորս ի Ճանապարհի · առաջնորդես հեզսոյ ի դատաստանի · և ուսու-

ցանէս հեզոց զՀանապարհս քոյ։ Սաղ։ իդ։ 4։ 8։
որով և յայսողէցաւ ինձ գտանել զլուսաշաւիղ
Հանապարհս՝ և ուղէցոյց Հշմարիտ առաքնորդս
աստուածային արդարութեան և յաւիտենա-
կան կենաց՝ 'ի հոգեշունչ բանս մարգարէից՝ ա-
ռաքելոց՝ և նախնի հարց սրբոց։ Համարձակե-
ցայ այնու հետև շնորհիւ տէն մերոյ Յն 'Ի Քն,
'ի գրի առնուլ և աւանդել եկեղեցւոյ բարե-
պաշտօն սիրելի աղգիս լուսե, որք ուղղափառ
հաւատով գիտեն ուղղել զոտս խղճի մտաց իւ-
րեանց 'ի լուսաշաւիղ Հանապարհն ճշմարտութե
և տրդարութեան ընթանալով անխոտոր 'ի բա-
րեխնամ պաշտելի կամս այ ըստ վարդապետու-
թեան և հոգելից խրատուց սքեն Գրիգորի
լուսաւորչի առաքելապատիւ մեծ հայրապետին
մերոյ։ որ յաղագս վարուց առաքինութե։ «Որք
ուղղել հաւատով 'ի գնացս սրբութե։ անարատ
և անբիծ եբախտեօք ոբ սիրոյն նախաշաւիղ
Հանապարհորդ է ըստ աւետարանին 'ի Հանդեր-
ձեալ յօթեանսն 'ի Երիսոս։ Որք ուղղեալ
հաւատով՝ հառուցանեն ամենասուրբ վարուք
և կարգօք 'ի քաղաքն կենդանեաց 'ի ոբ ժո-
ղովն։ Որք ուղղեալ հաւատով՝ երիվարք են
սուրբ կամաց։ որ ընթացուցանեն 'ի գործ նա-
հատակութե վերին կոչմանն։ Որք ուղղեալ հա-

ւատով՝ զՀրաւիրեալսն և զկոչեցեալսն յոր-
դորէ 'ի հոգևոր ուրախութիւն պայծառ և ՝ի-
գնացիւք. Հանդերձ յարմարական առաքինութ՝,
ոչ ինչ խածեալ զգարշապարս. Թ՝՝՝՝. Ի՝՝. 29։
Ոտք ուղղեալ հաւատով՝ ընթացուցանէն ու-
ղիղ զՀետս մոլորելոցն. 'ի դարձուցանել զՀո-
ղեղէնս 'ի հոգեղէնս, զապիրատս յիրաւունս,
զանՀնազանդս 'ի Հնազանդութիւն արդարութեան
գնացից։ Ոտք ուղղեալ հաւատով՝ առաջնոր-
դեն զՀետ երթալ վերնոցն՝ ուր սՀՇցն էն բնա-
կութիւնք. կոխեալ զզօրութիւս թշնամւոյն ամրա-
ցեալ պահպանական կօշկօքն առաքինութ՝, որ
ոչ կարասցէ խածանել օձն 'ի ՀանապարՀի և
խաբանել ըստ ՝այ գնացիցն։ Ոտք ուղղեալ հա-
ւատով՝ կոխեն զՀուր ըստ օրինակի երից ման-
կանցն գնալով 'ի Հնոցին. Դ՝՝՝. Գ. 49։
Կամ որպէս Պետրոս 'ի վերայ ծովուն գնալով
որպէս յատակի. որ երթէ ոչ էր 'ի թերահա-
ւատութեն ընկղմեալ ոչ օգնութեան Յիսուսի
կարօտանայր. որ վերստին զգնացսն հաստատեաց
'ի վերայ աւեաց ծովու. Մ՝՝՝. Ժ՝. 28։
Զի որ այսպէս Հանդիսացեալ գնասցէ ըստ
աւետարանական գնացից՝ արդարութեամբ ըստ
աւետեաց յուսոյն, պսակեսցի յամենասուրբ
երրորդութենէն և զանապատ բարիսն ժառան-
գեսցէ։

Այսոքիւք խրատեալք և պատկեալք յառհա-
ւատչեայ հանդերձեալ յուսոյն ։ փութասցուք
ծառայել առաջի տեառն երկիւղիւ և ցնծալ
առաջի նորա դողուք։ Ապա դաւթայ ասելոյն ։
ընկալարուք զխրատս նորա զի մի՝ բարկասցի տէր,
և կորնչիցիք 'ի ճանապարհէն արդարութեան .
'ի ժամանակի՝ յորում զարթնուցու բարկուի
նը 'ի դատել զերկիրս և հատուցանել ամ արդար
դատաստանին ։ Ոչ ժնդակացն և յանցաւորացն ։
որք մեղան և ոչ ապաշխարեցին ։ որդն անմահ և
խաւարն արտաքին ուր լալ աչացն է և կրճել
ատամանց . և անշէջ հուր գեհենին պատրաս-
տեալ անմահ տանջանաց։ Իսկ որք արբեցին զան-
ձինս իւրեանց յամենայն աղտեղի ցանկութեց և
կատարեցին զարդարութիս ամենայն ։ անհամե-
մատ երանութեամբքն մեծարեալ և փառաւոր-
եալ պարծանաց՝ պատկեսցին յամենաճոր Էր-
ըորդութենէն ։ որում փառք յաւիտեանս յա-
ւիտենից Ամէն . Ցաճախ ծառ . քա ։

Վ Ա Ր Ջ .

ՅԱՆԿ ԳԼԽՈՑ

Ըստ իւրաքանչիւր խմաստից նոցին։

Էր։

Վեհ է Աշմարիտ և անսխալ առաջնորդ հոգւոյ մերոյ յարքայութիւն երկնից. Գլ. Ի. Ա։ 1։
Անապարհ առաքինութեան որով հասանիմք ի ժառանգութիւն կենացն յաւիտենից. Յորդորակ. Ա։ 4։
Լուսաւորչանուէր քրիստոնէական Աշմարիտ հաւատոյ մերոյ առ ամենաւաք Երրորդութիւն. Գլ. Բ։ 6։
Ոչ վարիլ մեզ հակառակ Աշմարտութիւն և սրբութեան շնորհաց հոգւոյն սրբոյ։ Յորդ. Բ։ 10։
Հաւատք մեր ուղեցոյց է Աշմարտութիւն, և առաջնորդ ընթացից մերոց յաստուածպաշտութիւն. Գլ. Գ։ 14։
Ամբ երկմիտ ի հաւատս՝ առանց հաստատութիւն է յամ Անապարհս իւր. Յորդ. Գ։ 16։
Հաստատուն լոյս մեր հանդերձ ուղղափառ հաւատովք առ ած ուղղել. Գլ. Դ։ 20։
Պատճառ բարեաց և չնորհաց է յուսալն առ աստուած. Յորդ. Դ։ 26։
Սէր առ ած ընդ Աշմարիտ հաւատոյ և անարկեցայ յուսոյ. Գլ. Է։ 29։

Վաղեալքն ի սէր այ քաջասիրտ հանդիսանան
ամ ընդդիմամարտից ածպաշտուէ. Յորդ. է։ 40։
Զանապարհն այ ճանաչել ուղղտիւռ հաւա-
տոյ հիմարտութեամբ, և գնալ ընդ այն ան-
խոտոր. Գլ. ղ։ 45։
Ուղղնորդութեամբ հաւատոյ ճանաչեմք զճա-
նապարհն այ, և արժանաւոր գտանիմք պէսպէս
շնորհացն նորին. Յորդ. ղ։ 47։
Հոգւով և ճանաչեմք զնախասահմանեալ ճա-
նապարհն յաւիտենական կենաց. Գլ. է։ 50։
Ոչ թողուլ զուղիղ և զլուսաշաւիղ ճանա-
պարհն փրկութեան մերոյ. Յորդ. է։ 53։
Զճանապարհն առտուածային օրինաց և պա-
տուիրանաց յանդիման կացուցանեն մեզ սուրբ
գիրք. Գլ. ը։ 58։
Երանի աչացն ասել, ոչ զմարմնաւոր տեսանե-
լեացն ասէ. Յորդ. ը։ 65։
Աւետարանական ճշմարտութեան ուսուցիչք են ե-
կեղեցւոյ պաշտօնեայք. Գլ. ի։ 68։
Թէ ոչ ընդ առաքեալն միայն եղև, այլ և է
ընդ հովիւսն եկեղեցւոյ, ցկատարած աշխարհի
յաշակերտել զհեթանոսս. Յորդ. ի։ 78։
Ընդարուին բարձրագահ և պարագլուխ հան-
դիսանայ յամ առաքինութիւն. Գլ. ֆ։ 82։
Թէ ոք ունիցի հաւատս մինչև զլերինս փոփո-

խելոյ, և զսէր ոչ ունիցի՝ ոչ ինչ է։ Յոբ։ ֆ։ 97։
Նպատակ ածպաշտութեան է ժառանգութեան յաւիտենական կենաց։ Գլ։ ֆ։ 99։
Երկու ճանապարհք են յաստիս առաջի մարդկան՝ յաւիտենական կենաց և յաւիտենական կորստեան։ Յոբ։ ֆ։ 112։
Ճանապարհ մոլութեան հեռացուցանէ զմարդ յածային սրբութեան ճանապարհէն։ իսկ լուսաշաւիղ ճանապարհ ածային օրինաց մերձեցուցանէ առ ածն։ Գլ։ ֆԷ։ 115։
Ընդ՝ի թողութիւն գմեղս մեր, հայի ածն՝ի զղջումն և յապաշխարութիւն մեր։ Յոբ։ ֆԷ։ 124։
Տիրապէս տուն այ է աբեկեղեցի տաճար փառաց անուան նր։ Գլ։ ֆԿ։ 131։
Փառաւորութիւն և զօրութիւն տաճարին աստուծոյ։ Յոբ։ ֆԿ։ 156։

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

25 n.

2966
25 n-4